5778/1

ՀԿ(Բ)Կ Հ.-ԿՈՎԿԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

ЗКП1(47.9)
Ճ-40

5 AUG 2013

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ
1932

5 AUG 2013
5 AUG 2013
5 AUG 2013

ЭКП I (47-9)
Б-40
25 AUG 2005

ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ(Բ) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ 7-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

ԸՆԿ. ԸՆԿ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎԻ ՅԵՎ ԼԱՐԻՆԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԲԱՆԱՁԵՎԵՐ

2665
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀՅՈՒՍԻՍ. ԿՈՎԿԱՍ" — 1932

13.07.2013

37781/

(23723-60)

Книгоиздательство
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

12715-57

Բ. Պ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՀՅՈՒՍ.-ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԿՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՆՑԱԾ ԵՏԱՊԸ

Կուսակցության 16-րդ համագումարը մեր քաղաքականությունը վորոշեց վորպես «բոլոր ֆրոնտներում սոցիալիզմի ծավալուն հարձակման» քաղաքականություն։ Բոլոր ֆրոնտներում հարձակվելու մշտական խնդիրն է՝ խորտակել հակառակորդի դիմադրությունը, ձեռք բերել հարձակման վճռական արդյունքներ։ Հենց այդ քաղաքականության կիրառման ուղիներում մեր կուսակցությունը ձեռք բերեց վճռական հաջողություններ։

Մենք ապահովեցինք հնգամյա տնտեսական պլանի իրագործումը 4 տարում. մենք իրագործում ենք համատարած կոլեկտիվացման քաղաքականությունը և հիմնականում ավարտեցինք այն Խորհրդային Միության վճռական ռայոններում, մենք հիմնականում վերացրինք կուլակությունը գլխավոր հացահատիկային ռայոններում և վերացնում ենք նրան մոտիկ ժամանակում ամբողջ յերկրում։

Վերջապես, մենք ավարտեցինք սոցիալիստական տնտեսության բուն հիմքի կառուցումը։

Դա նշանակում է վոչ միայն այն, վոր մենք ստեղծեցինք նոր ծանր արդյունաբերություն, վորը կառուցված է համաշխարհային տեխնիկայի վերջին խոսքով, ստեղծեցինք ամբողջ տնտեսության նոր տեխնիկական հիմք։ Դա նշանակում է, վոր մենք մեր գյուղատնտեսությունը հիմնականում վերածեցինք խոշոր համայնացրած տնտեսության, վորը մեր սոցիալիստական արդյունաբերության հետ միատիպ է, և անմիջապես ողակում ենք սոցիալիստական արդյունաբերությունը և համայնացրած գյուղատնտեսությունը։ Դա նշանակում է, վոր մենք քանդեցինք կապիտալիզմի բուն արմատները, նրա նորից առաջանալու բուն հնարավորությունը, վոր մենք վերջապես փակում ենք այն ջրանցքները, վորոնց միջոցով նորից ու նորից ծնվում էր կապիտալիզմը մեր յերկրում։

Ընկ. Ստալինը Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումում տված իր զեկուցման մեջ այսպես է բնորոշում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման նշանակությունը.

«Ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա—դա նշանակում է միացնել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ

մի ամբողջական տնտեսության մեջ, յենթարկել գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարությանը, հարթել գյուղի և քաղաքի մեջ յեղած հարաբերությունը գյուղատնտեսության և ինդուստրիայի արտադրանքի ուղղակի փոխանակության հիման վրա, փակել ու վերջացնել բոլոր այն ջրանցքները, վորոնց օգնությամբ ծնվում են դասակարգեր և ծնվում է նախ և առաջ կապիտալիզմը, վերջ ի վերջո ստեղծել արտադրության և բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք ուղղակի և անմիջականորեն տանում են դեպի դասակարգերի վոչնչացում»:

Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը նշանակում է վիթխարի տեղաշարժում մեր յերկրի սոցիալիստական և կապիտալիստական տարրերի փոխհարաբերության մեջ, նշանակում է, վոր մեր յերկրում արտադրության 90 տոկոսը գտնվում է արդեն սոցիալիստական սեկտորի ձեռքին, նշանակում է սոցիալիզմի վիթխարի տիրապետող գերիշխանություն մեր յերկրում։ Դրանով հենց վերջնականապես ու ընդմիշտ լուծված է «ո՞վ-ում» հարցը թե քաղաքում յեվ թե գյուղում։

Ահա մեր աշխատանքի հանրագումարները։ Մեր կուսակցության և բանվոր դասակարգի այս հաղթանակները հենց հիմք տվին Կենտրոնական Կոմիտեի. կոնֆերենցիայի առթիվ յերեկ հրատարակված իր վորոշում-թեզիսների մեջ դնել այսպիսի հիմնական խնդիր,—

—«Կոնֆերենցիան գտնում է, վոր յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում է կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերությունները և շահագործում առաջացնող պատճառների լրիվ վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումն անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների»։

Հենց մեր հաղթանակների հիման վրա մենք կարող ենք դնել մարդկային պատմության մեջ խոշորագույն՝ անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու խնդիրը։

Չի կարելի մտածել, վոր այդ հաղթանակները կուսակցությունը և բանվոր դասակարգը ձեռք են բերել առանց կատաղի պայքարի, առանց վճռական գոտեմարտի մեր կապիտալիզմի հետ։ Լենինի մարգարեյական խոսքերը կուսակցության 11-րդ համագումարում այն մասին, վոր կուսակցության, բանվոր դասակարգի առաջ նոր տնտեսական քաղաքականության ճանապարհին անխուսափելիորեն հարց կծառանա՝ մեր ռուսական կապիտալիզմի հետ վերջին և վճռական մարտ մղելու—արդարացան ամբողջովին և կատարելապես։

Մենք ստիպված յեղանք բաց կռվում փշրել կուլակության շղթան, մեր Միության վճռական ռայոններում հիմնականում լիկվիդացիայի յենթարկել կուլակին վորպես դասակարգի։ Այն, վոր մենք ջարդեցինք կուլակության վողնաշարը—նշանակում է արդյոք, վոր դասակարգային պայքարի հարցը մեջտեղից վերացված է։ Իհարկե վոչ։ Նույն այդ թեզիսներում Կենտկոմը միանգամայն պարզ կերպով ասում է, վոր «սոցիալիզմի նոր հաջողությունները»—այսինքն այն բոլոր խնդիրների իրագործումը վորը դնում են մեր կուսակցության Կենտկոմի

թեզիսները—«բանվոր դասակարգը կապահովի միայն կապիտալիզմի մնացորդների դեմ մղած պայքարում, անխնա հակահարված տալով կործանվող կապիտալիստական տարրերի դիմադրությանը, վերացնելով բուրժուական և մանր-բուրժուական նախապաշարմունքները աշխատավորության միջից և համառ աշխատանք տանելով նրանց սոցիալիստական վերադաստիարակման ուղղությամբ»։

Պրակտիկայով մենք արդեն գիտենք, վոր բաց կռվում կուլակությունը ջարդելուց հետո, սոցիալիզմի շինարարության համար մղվող պայքարը հիմնականում ու նախ և առաջ փոխադրվեց մեր տնտեսության ներքին կազմակերպման, աշխատանքի և արտադրության կազմակերպման, մեր կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման ասպարեզը։ Այս շրջադարձը, վորը կապված է ընկ. Ստալինի վեց պայմանների հետ, վորը կապված է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման մասին կուսակցության տված լոզունգի հետ—նոր էտապ է ընդգծում սոցիալիզմի շինարարության համար մեր մղած պայքարի մեջ։

Մեր Հյուսիսային-Կովկասի կուսկազմակերպությունը բոլշևիկորեն կռվել է և աշխատել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի շինարարության ավարտման իր մասում։ Մեր կուսակցության պատմական հաղթանակները, դրանք նաև մեր հաղթանակներն են, Հ-Կովկասի կազմակերպության հաղթանակները։ Ամբողջ կուսակցության յեվ նրա Կենտկոմի հետ միասին մենք իրավունք ձեռք բերինք դնել սոցիալիզմի կառուցման ավարտման՝ անդասակարգ սոցիալիստական հասարակության հարցը պատմական մոտիկ ժամանակաշրջանում։

Մեր կուսկազմակերպությունը գլխավորելով մեր յերկրամասի ամբողջ բանվոր դասակարգին, բոլոր աշխատավորներին, յերկու ֆրոնտի պայքարում ձեռք բերեց ահագին, վճռական հաջողություններ գլխավոր գծի իրականացման գործում, դասակարգային պայքարի, անմիջական տնտեսական շինարարության, ակտիվության կազմակերպության, հարցերում առաջին հերթին բանվորական մասսաների և կոլտնտեսական գյուղացիության նյութական և կուլտուրական մակարդակի աճման հարցերում։ Մենք ապահովեցինք մեր յերկրամասի շինարարության հնգամյա պլանի իրագործումը։ Մենք գտնվելով մեր կուսակցության առաջին շարքերում, իրականացրինք հիմնականում համատարած կոլեկտիվացումը. հիմնականում վերացրինք կապիտալիզմի գլխավոր պատվարը—կուլակությունը մեր յերկրում։

2. ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Մեր հնգամյակը, յերկրամասի վերաբերյալ մեծ աշխատանքների այն պլանը, վորը հանդիսանում է ԽՍՀՄ խորհուրդների 5-րդ համագումարում հաստատված հնգամյակի մի մասը, այդ պլանն իրագործված է արդյունաբերության մասում յերեք տարում։

Կենտրոնական կառավարության հաստատած պլանը Հյուսիսային Կովկասի համար ընդհանուր արտադրանքը հնգամյակի վերջին, 1933 թվին նշանակել եր 1 միլիարդ 488 միլիոն ռուբլի։ Անցած 1931 թվին յերկրամասի ծանր և թեթև արդյունաբերությունը ընդհանուր արտադրանք տվեց 1 միլիարդ 434 ռ.—այսինքն նա Խորհրդային

Միութեյան նշանակված պլանն ավարտեց միանգամայն չնչին թերակատարումով:

Անցած—6-րդ յերկրային կուսկոնֆերենցիան այն ժամանակ արդեն հաշվի առավ Հյուսիսային Կովկասի արդյունաբերության աճի ավելի արագ տեմպերը և նշանակեց հնգամյա պլանի մեծացումը, խնդիր դնելով 1933 թվին տալ ընդհանուր արտադրանք 2 միլիարդ 855 միլիոն ռուբլու: Մեր կուսկոնֆերենցիայի այդ հանդիպական պլանը չի նայվել կուսակցական,-խորհրդային կենտրոնական մարմիններում, չի հաստատվել մեր հանրապետական, համամիութենական կառավարության կողմից, բայց հանդիսանում է մեր կոնֆերենցիայի վորոշումը և մեզ համար պարտադիր է: Յեվ ահա այդ պլանի—մեր յերկրամասի հնգամյակի հանդիպական պլանի իրագործումն ապահովված է 1932 թվին: Այդ թվի համար նշանակված հսկիչ թվերը չնչին պակասությամբ մեզ տալիս են յերկրամասի 6-րդ կուսկոնֆերենցիայի վորոշած ընդհանուր արտադրանքը, այսինքն այդ հանդիպական պլանը կիրագործվի չորս տարում:

Գյուղատնտեսության նկատմամբ դուք գիտեք, վոր մենք գերակատարեցինք պլանի բոլոր որինակների յենթադրությունները, մեր յերկրամասի խորհտնտեսության շինարարության, կոլեկտիվացման նկատմամբ: Բայց յերեք տարվա ընթացքում ցանքատարածությունը մենք չհասցրինք այն մակարդակին, վոր վորոշել եր հնգամյակը 1933 թվի համար—13 միլիոն 500 հազար հեկտար: Անցած 1931 թ., հնգամյակի յերրորդ տարում մենք ապահովեցինք միայն 12 միլիոն 200 հազար հեկտար և միայն 1932 թվին, հնգամյակի 4-րդ տարում կգերակատարենք յերկրամասի ցանքատարածության հնգամյա պլանը:

Սակայն կոլտնտեսական և խորհտնտեսական գյուղատնտեսությունը, խոշոր համայնացած տնտեսությունը մեզ տվեց ընդհանուր յեվ հատկապես ապրանքային արտադրանք—ամենաբաց արտադրանք խորհրդային իշխանության ամբողջ տարիների ընթացքում, պարենավորման յեվ հումքային արտադրանք, ավելի քան 1913 թվին, Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսության ամենաբարձր ծաղկման թվին:

Վերջին յերկու տարվա ընթացքում տրանսպորտը, վորի մասին մենք շատ ենք խոսում և շատ բան ենք անում, վոր բարելավենք աշխատանքի այդ ասպարեզը, մեծացրել է իր ապրանքաշրջանառությունը մոտավորապես 50 տոկոսից ավելի, քան նրա նախորդ տարում և 1931 թվին 15 տոկոս ավելի:

Սակայն, չնայած այդ աճին, նա մնում է ավելի նեղ ընդգավառներից մեկը, վորն արգելակում է մեր զարգացմանը: Վերջին յերեք տարվա ընթացքում արդյունաբերության ընդհանուր արտադրանքն աճել է յերեք անգամ. գյուղատնտեսությունը տվել և ապրանքային արտադրանք յերկու անգամ ավելի, համեմատած հնգամյակի նախորդ տարվա հետ և մեր տրանսպորտի աճման տեմպերը բացահայտորեն չեն հասնում ամբողջ ժողովրդական տնտեսության աճման յետևից:

Մեր աշխատանքների հենց նոր ավարտված տարին մեզ տվեց խոշորագույն հաջողություններ թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության ասպարեզում: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1931 թվին աճեց 24 տոկոս, այսինքն Միութեյան արդյունաբերության ընդհանուր աճից մի քիչ ավելի: Միայն պետք է նկատել, վոր

միութենական նշանակություն ունեցող խոշոր արդյունաբերությունն ավելի պակաս աճեց—ընդամենը 19 տոկոս:

Գյուղատնտեսության ցանքատարածությունը նախորդ տարվա համեմատությամբ աճեց 10 տոկոս, ընդ սմին խորհտնտեսությունները, վորոնց մենք հաճախ հայհոյում ենք նրանց աշխատանքների թերությունների համար, մեծացրել են իրենց տարածությունները յերկու և կես անգամ:

Յեթե նայենք մեր խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների աշխատանքների հետևանքին նրանց աշխատանքի արդյունքի տեսակետից, մթերքների և հումքի այն մասսայի, վոր տալիս է մեր յերկրամասի արդյունաբերության համար, բանվորների համար, քաղաքների համար, այդ դեպքում մենք կտեսնենք մեծագույն հաջողություն:

Անցած տարվա համեմատությամբ այս տարի համարյա մեկ ու կես անգամ ավելի հաց է մթերված: Արևածաղիկ—յերկու անգամ ավել, գենագերչակ—5 անգամ, բամբակ—4 անգամ, յուղ—4 անգամ, ծխախոտ—մեկ ու կես անգամ, թռչուն—1 1/2 անգամ, ձուկ—1,3 անգամ: Յեվ միայն մսի ու բրդի պակաս արտադրանք ունենք յերկրին, վորովհետև անասնապահության դրությունն այս տարի պահանջում եր մթերումների վորոշ պակասեցում 1930 թվի համեմատությամբ: Յերկրամասը 1931 թվի մսի պլանն իրագործել է 106 տոկոս:

Մենք պետք է մթերենք դեռևս վորոշ քանակությամբ հաց (4—5 միլիոն փութ), արևածաղիկ և ուրիշ բույսեր նրա համար, վոր իրագործենք մեր պարտականությունն յերկրի հանդեպ: Մենք համոզված ենք, վոր մոտիկ ժամանակամիջոցում և մինչև միութենական կուսկոնֆերենցիան մենք մեր պարտականությունները հացի և արտադրանքի հիմնական տեսակների նկատմամբ կկիրագործենք (ծափեր), ճիշտ է, կենտկոմի նշանակած ժամկետից (հունվարի 15) մի քիչ ուշ:

Յերկրամասի տնտեսական շինարարության այդ խոշոր հաջողությունները տվին հետևյալ արդյունքները: Նախ և առաջ մենք յերկրամասում ունենք արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի խիստ մեծացում—գյուղատնտեսության համեմատությամբ, բստ վորում վերջինիս ընդհանուր արտադրանքը կազմում է յերկրամասի արտադրանքի մեկ յերրորդից մի քիչ ավել, իսկ գյուղատնտեսական ապրանքային արտադրանքն արդեն 1931 թվին կազմում եր ընդամենը միայն մոտ 1/4 (410 միլիոն, արդյունաբերական արտադրանքի 1.760 միլիոնի հանդեպ), այսինքն մեր յերկրամասը քանի գնում, ավելի յե արդյունաբերական-գյուղատնտեսական յերկրամաս դառնում, արդյունաբերական արտադրանքն ավելի մեծ չափով է գերակշռում գյուղատնտեսական արտադրանքին:

Յերկրորդն այն է, վոր մեր գյուղատնտեսության արդյունաբերության համայնացրած սոցիալիստական բաժինը դարձավ իշխող մեծությունը յերկրամասի արտադրանքի տվողների ամբողջ շարքում, իսկ յերկրամասի տնտեսական ընդհանուր արտադրանքում նա հասավ ամբողջ արտադրության 95—96 տոկոսին: Կապիտալիստական և մասնավոր տնտեսության մնացորդներն իրենց հետևում թողել են շատ չնչին տեսակարար կշիռ:

Ընթացիկ տարում զգալիորեն ամրապնդվել են մեր խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները: Յես առաջ արդեն ասացի,

վոր ստեղծել ենք սոցիալիստական գյուղատնտեսություն, միացրել ենք արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը մեր ընդհանուր պլանավորվող տնտեսության մեջ, այսինքն, մեր Հյուսիսային Կովկասի շրջաններում մենք մասնակցել ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման խնդիրների լուծմանը և իրագործել ենք այն։

Հետամնաց ազգային ռայոններն ու մարզերն այդ ժամանակամիջոցում առաջ են քաշվել առաջավոր ռայոնների շարքը, հասել են յերկրամասի միջին մակարդակին թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության զարգացման ասպարեզում։ Բավական է ցույց տալ ազգային մարզերի (առանց Գրոզնու նավթի) արդյունաբերության 37 տոկոս աճն անցած տարում, ցույց տալ, վոր ցանքատարածության աճն ազգային մարզերում անցնում է յերկրամասի միջին աճից, վորպեսզի յեզրակացնենք, վոր այդ ժամանակամիջոցում գործնականում իրականացվել է լենինյան ազգային քաղաքականությունը, գործնականում վոչնչացել է այն պատմական տնտեսական անհավասարությունը, վորը ժառանգություն եր մնացել մեր յերկրամասի առանձին ազգություններին,—վոր կան ահագին առաջխաղացումներ, կան անգին նվաճումներ։

Յեվ վերջապես, տնտեսական հենց այդ հաջողությունների հիման վրա, բանվոր դասակարգի ղեկավարության ամրապնդման հիման վրա, ուժեղացնելով արդյունաբերության ազդեցությունը գյուղում—մենք հիմնականում ավարտեցինք համատարած կոլեկտիվացումը, հիմնականում լիկվիդացիայի յենթարկեցինք կուլակությունը վորպես դասակարգ։

Սրանք են այն վիթխարի, անկասկած պատմական նշանակություն ունեցող հաջողությունները, վորոնք ձեռք են բերել մեր կազմակերպությունը, Հյուսիսային Կովկասի բանվորները և կոլտնտեսականները։

Հենց այդ նվաճումները, ինչպես և մեր ամբողջ յերկրի նվաճումները սոցիալիզմի շինարարության գործում թույլ տվին առաջադրել մեծ լոզունգը—մեր յերկրում պատմական ամենակարճ ժամկետում անդասակարգ սոցիալիստական հասարակություն անմիջապես կառուցելու մասին։

3. ԴԵՊԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ, ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

Այս հաջողությունները, այս վիթխարի հաղթանակները չպետք է պտտեցնեն մեր գլուխները։ Հենց այն պատճառով, վոր մենք ունենք վիթխարի և վճռական հաջողություններ, վորոնք ձեռք են բերված կուսակցության գլխավոր գծի կիրառման հիման վրա, այդ գծից յեղած ամեն տեսակի թեքումների դեմ տարվող վճռական պայքարի հիման վրա, հենց այն պատճառով, վոր այդ հաջողությունները կարող են պտտեցնել բավականաչափ վոչ ամուր գլուխները, մենք պետք է ամենայն խստությամբ, բոլշևիկյան ամենայն շիտակությամբ ինքնաքննադատության կրակի տակ դնենք այն թերությունները, վորոնք գոյություն ունեն մեր աշխատանքներում, մեր տնտեսական շինարարության մեջ։

Մենք պետք է միանգամայն պարզորեն տեսնենք այն դժվարությունները, վորոնք մենք դեռ պետք է հաղթահարենք, վորպեսզի նրանց շուրջը մոբիլիզացիայի յենթարկենք մասսաներին, վորովհետև

գիտենալ դժվարությունները, գիտենալ թերությունները—դա նրանց վերացման առաջին պայմանն է, առաջշարժման առաջին պայմանն է։

Յես կարծում եմ, վոր ամեն մեկն իրեն հարց կտա, թե ինչու մեր մի շարք պլանային նախագծումները, մեր պլանային առաջադրանքները չեն կատարվում, չնայած այն վիթխարի, խոշորագույն հաղթանակներին, վոր ունենք մենք դասակարգային պայքարում, տնտեսական շինարարության մեջ։

Անխուսափելիորեն ծառանում է նաև այն հարցը, թե ռեալ եյին արդյոք այն պլանները, վորոնք ընդգծում եյինք անցյալ կոնֆերենցիաներում մեր վորոշումների մեջ։ Մենք առանց վորևե տարակութայն յեվ շիտակորեն կարող ենք ասել, վոր այն պլանները, վորոնք ընդգծվում եյին, վորոնց համար պայքարում եր մեր կուսակցական կազմակերպությունը—ռեալ պլաններ եյին։ Նրանք պլաններ եյին, վորոնց կատարումը կախված եր մեզանից։

Բավական է դնել, այսպես կոչված, մեր աշխատանքների վորակային ցուցանիշների հարցը և կերևա, վոր պլանների կատարումն իսկապես կախված եր մեզանից։

Արդյունաբերության ծավալման և գյուղատնտեսության մեջ ունեցած հսկայական հաջողությունների հետ միաժամանակ, մենք լուրջ թերություններ ունենք ինքնարժեքի իջեցման յեվ աշխատանքի արտադրողականության աճման գործում։

Բավական է հիշել թեկուզ վոչ ճիշտ, ստուգման կարիք զգացող այն թիվը, վոր խոսում է մեր արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքի վորոշ աճման մասին, մոտավորապես մեկ ու կես տոկոսով անցյալ տարվա համեմատությամբ։ Այսպիսով մի քանի տոկոսով իջեցնելու փոխարեն մենք ունենք արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքի աճում։ Հատուկ մի կոմիսիա հաշվել է, թե ինչ է դա նշանակում մեր յերկրամասի տնտեսության համար և գտել է, վոր ինքնարժեքի իջեցումը չկատարելու, նրա վորոշ աճման հետևանքով մենք կորցրել ենք մոտավորապես 80—85 միլիոն ռուբլի մեր արդյունաբերության համար։ Յեթե դուք այդ թիվը հակադրեք այն 220 միլիոն ռուբլուն, վորը ներդրվել է 1931 թվին յերկրամասի արդյունաբերության մեջ, ապա կտեսնեք, թե վորքան հսկայական տեղ է գրավում ինքնարժեքի իջեցման հարցը մեր արտադրական պլանների իրագործման մեջ։

Ֆինժողկոմատի կոլեգիայի անդամ ընկ. Արալովը հաշվել է, վոր մեր ձեռնարկություններում բանվորական ուժի ավելցուկի վրա միայն Հյուս. Կովկասը կորցրել է 40 միլիոն ռուբլի (85 միլիոն ռուբլուց), վորը մտել է ինքնարժեքի աճման մեջ։

Աշխատանքի արտադրողականությունը փոխանակ ամեն մի բանվորի արտադրանքի զգալի աճում տալու, մի շարք ճյուղերում ավել է վորոշ կրճատում։ Կրկնում եմ, այդ հաշիվները պահանջում են ստուգում, այնուամենայնիվ ինքնարժեքի բարձրացման և աշխատանքի արտադրողականության պլանները չկատարելու տենդենցները—միանգամայն ակնհայտ են։

Յեթե վերհիշենք Լենինի խոսքերն այն մասին, վոր աշխատանքի արտադրողականությունն ամենագլխավորն է մեր հասարակակարգի ամրացման համար, յեթե հիշենք, վոր մեր Կենտկոմը Լենինյան որերի

առթիվ հրատարակած իր դիմումի մեջ առանձին շեշտով կրկնում է Իլյիչի այդ լոզունգը, այդ միտքը—ապա հեշտ կլինի հասկանալ, թե վորքան լուրջ թերություն է ներկայացնում իրենից ինքնարժեքի և աշխատանքի արտադրողականության պլանային նախագծումների չկատարման փաստը:

Սակայն, պետք է մատնանշել, վոր մեր արդյունաբերության մի շարք ճյուղերում դրությունը զգալիորեն լավ է: Ինքնարժեքի և աշխատանքի արտադրողականության ուղղությամբ յեղած հիմնական ճեղքվածքն ընկնում է մեր ածխային և յերկրամասի արդյունաբերության մի յերկու այլ ճյուղերի վրա:

Յեթե նայենք մեր կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին, ապա ևս կնկատենք աշխատանքների մեջ լուրջ թերություններ, վորոնք առաջ են բերում բերքատվության եյական կորուստներ: Հաշիվներն ասում են,վոր այդ կորուստները մեր խորհտընտեսություններում հասնում են 10 միլիոն փութ հացահատիկի, իսկ դրա հետ միասին՝ ընդհանուր արտադրանքի առաջադրանքների չկատարում, բերքատվության աճման, գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի արտադրանքների չկատարում:

Դեռ մինչև վերջերս, առանձին կոլտնտեսություններում, ունեյինք չքաղված ցանքադաշտեր, ունեյինք հացի և մանավանդ տեխնիկական մշակույթների բերքի վորոշ կորուստ: Յեթե հիշենք, վոր կոլտնտեսություններում և առհասարակ գյուղատնտեսության մեջ մենք ունենք անասունների և մասնավորապես լծկանի քանակի իջեցում,ապա կարելի յե ամենայն լրջությամբ դնել այդ թերությունների պատճառների շտըկման անհրաժեշտ միջոցառումների հարցը: Անասնապահության վերաբերյալ պետք է ասել, վոր անասնապահության ասպարեզում մեր ունեցած ընդհանուր վատթարացման հետ միասին մենք յերկրամասում ունենք միաժամանակ եյական հաջողություններ անասնապահության սոցիալիստական սեկտորի զարգացման գործում:

Ի՞նչումն են կայանում սակայն այդ թերությունների մեխանիկան, մեր աշխատանքի վորակային վատ ցուցանիշների պատճառները:

Յեթե հիշենք տրանսպորտի աշխատանքների վատացման հետեվանքով մեր առաջ կանգնած դժվարությունները, յեթե դրան ավելացնենք այն, ինչ հայտնի յե ամեն մեկին տնտեսության կազմակերպման թերությունների, տնտեսհաշվարկի թերությունների, մեր ձեռնարկներում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում աշխատանքի կազմակերպման և վարձատրման սիստեմի թերությունների մասին, ապա մենք կունենանք պատճառների այն գումարը, վորոնք անդրադառնում են աշխատանքի արտադրողականության վրա, ամեն մի բանվորի արտադրանքի վրա մեր արդյունաբերության մեջ:

Բավական է մատնանշել, վոր 1931 թվի ընթացքում կատարելով մեր արդյունաբերության արդֆինպլանը 76 տոկոսով, մենք միեվնույն ժամանակ ձեռնարկներում 100 տոկոս բանվոր ունեյինք ըստ պլանի և դրա հետ միասին մենք ունեյինք աշխատավարձի նախնական նախագծումների գերակատարում: Այստեղից միանգամայն պարզ է դառնում ինքնարժեքի իջեցման պլանի կատարման վիժումը և վորոշ չափով բարձրացման հիմնական պատճառը:

Ի՞նչումն եյին կայանում այն հիմնական դժվարությունները, վորոնք խանգարեցին մեզ կատարելու միանգամայն ռեալ, միանգամայն հնարավոր, մեզանից կախված տնտեսական շինարարության, աշխատանքի վորակային ցուցանիշների պլանը:

Նախ և առաջ պատճառները—այն պայմանները, վորոնք առաջացրին այդ բացասական յերևույթները մեր աշխատանքում, հանդիսանում են ահագին նոր աշխատավոր մասսաների յուրացման դժվարությունները, վորոնք (մասսաները) նոր են յեկել մեր գործարաններն ու խորհտնտեսությունները, նոր են յեկել կոլտնտեսությունները:

Բավական է հիշել, վոր 1931 թվի ընթացքում վարձով աշխատողների քանակն յերկրամասում 700 հազարից բարձրացավ 1 միլիոն մարդ, այսինքն մի տարվա ընթացքում ձեռնարկություններում, հիմնարկներում, խորհտնտեսություններում և այլն ավելացել են 300 հազար մարդ:

Վերջին 2 տարվա ընթացքում մեր ձեռնարկությունների բանվորների քանակը կրկնապատկվել է: Մասնավորապես Սուլինի գործարանում միայն ունենք 1.100 մարդ վոչ պրոֆմիության անդամներ, մյուս խոշոր գործարանում կան 2000 անգրագետ ու կիսագրագետներ:

Հիմնականում այդ լրացումը ներկայումս առաջին անգամն է միայն մտնում դազգահին, կես մասը գալիս է գյուղից, վորոնք յերբեք չեն տեսել դազգյահներ ու մեքենաներ: Պետք է պատկերացնել, թե ինչ վիթխարի խնդիր է այդ հում մասսաների յուրացումը գործարանում, յերեկվա անհատականի կազմակերպումը վորպես այսօրվա կոլտնտեսական:Յեթե դուք պատկերացնում եք այդ վիթխարի խնդիրները, այն դեպքում դուք կհասկանաք նրանց տիրապետելու ահագին դժվարությունները:

Հետևյալ հարցը տեխնիկայի տիրապետումն է: Պետք է ուղղակի ասել, վոր այդ ուղղությամբ մենք չկարողացանք անել այն, ինչ պետք է անեյինք:

Բավական է մատնանշել, վոր 1931 թվին նոր շախտերը տվին իրենց ընդհանուր արտադրանքի պլանի 30 տոկոսը, այսինքն մեկ յերրորդն այն քանակի, ինչ նշանակել եր մեր կուսակցությունը—նոր կառուցվող ձեռնարկություններից ստանալու համար:

Ռոստովի Սելմաշի փորձից հասկանալի յե, վոր նոր տեխնիկային մենք տիրապետում ենք համենայն դեպս վերին աստիճանի դանդաղ կերպով: Մինչդեռ կասկած չկա, վոր այդ տեխնիկային մենք կարող ենք և պարտավոր ենք տիրապետել, վորին ապացույց կարող է ծառայել Ստալինգրադի գործարանը, վոր ունի կատարելագործված տեխնիկա և վորը հաղթահարելով դժվարությունները, համառ պայքարում կարողացավ բավականչափ տիրապետել տեխնիկային, կարողացավ կենսագործել ընկեր Ստալինի լոզունգը:

Յեվ վերջապես այն պայմանները, վորոնք մեր ծրագրների թերակատարման պատճառ յեղան, նրանք են, վոր մենք չկարողացանք արագ, բավական վճռական վերակազմվել նոր պահանջների համապատասխան, չկարողացանք նոր պայմաններում աշխատել յեվ ղեկավարել նոր ձևերով:

Մի շարք դեպքերում մենք չկարողացանք բավական արագ կիրառել ընկեր Ստալինի ցուցմունքները, չկարողացանք բավական արագ և վճռականորեն անցկացնել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման լոզունգը։

Յերբեմն աշխատում են թերությունները գցել «ոբեկտիվ» պատճառների վրա, գցում են թերի մատակարարման, տրանսպորտի, հիմնական ներդրումների թերակատարման վրա, այնպիսի պատճառների վրա, վորոնք իբր թե մեզնից անկախ են։

Դա—հասարակ առարկություն ե, վորովհետև յեթե դիտելու լինենք պատճառները, թե ինչու յե վատ մատակարարումը, ինչու յեն թերակատարվում հիմնական ներդրումները և այլն, ապա կերևա, վոր ամեն մի առանձին դեպքում այդ պատճառները հանգչում են միմիայն մեր վատ աշխատանքին, հանգչում են մեր բանվոր դասակարգի առանձին խմբերի վոչ բավարար լարված աշխատանքին, նախ և առաջ մեր սեփական աշխատանքներում յեղած անբավարար եներգիային։ Ուրիշների վրա ձգելը—բոլշևիկներին վայել չե։ Նա, ով թերությունները ձգում ե «ոբեկտիվ» պատճառների վրա, նա փորձում ե խուսափել հարցերի ուղղակի դրումից և չհանել այն յեզրակացությունը, վորը բղխում ե իրերի իսկական դրությունից։ Դա նշանակում ե զորացրվել թերությունների դեմ մղվող պայքարում, վորը մենք չենք կարող հանդուրժել։

Մենք բոլորս շատ լավ գիտենք և հասկանում ենք, վոր սոցիալիստական ծավալուն հարձակումը—իսկ մեր տնտեսական գործունեության ծավալումը նախ յեվ առաջ հենց սոցիալիստական հարձակում ե—ընթացել յեվ ընթանում ե դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում։

Խորհրդային իշխանության դեմ բացահայտ պայքար մղելու փոխարեն, թշնամին իր ուժերը կենտրոնացրել ե աշխատանքի այլ բնագավառներում ու նախ և առաջ տնտեսական աշխատանքի վրա, աշխատանքի և արտադրության կազմակերպման հարցերի վրա, փորձում ե վիժեցնել այն խնդիրները, վորոնք դնում ենք մեր առաջ այդ ուղղությամբ։ Այստեղ միանգամայն պարզ կարելի յե շոշափել հակախորհրդային ակտիվությունը և կուլակային ազդեցությունները։

Այդ պատճառով, յերբ մենք հանրագումարի յենք բերում մեր աշխատանքները, մենք պետք ե նախ և առաջ նկատի ունենանք այն, վոր մեր հաղթանակները, մեր թերությունները—հետևանք են դասակարգային պայքարի, հակառակորդի դիմադրության պայմաններում մեր հարձակման հանրագումարներն են։

Ընկեր Ստալինը մեր կուսակցության 16-րդ համագումարում ասում եր.—«Նախ՝ վոչ մի հարձակում, թեկուզ ամենահաջողը լինի այն, չի անցնում առանց վորոշ ճեղքվածքների՝ ճակատի առանձին մասերում։ Յերկրորդ՝ չի յեղել և չի կարող հաջող հարձակում լինել առանց ուժերի վերախմբավորման հենց հարձակման ընթացքում, առանց գրաված դիրքերի ամրացման, առանց ռեզերվների ոգտագործման՝ հաջողության զարգացման և հարձակումը մինչև վերջ հասցնելու համար»։ Դասակարգային պայքարի այս որենքները պարտադիր են և տնտեսական և վորևե այլ աշխատանքներում։ Այդ ճեղքվածքների, այդ շեղումների մասին մի քիչ հետո ավելի մանրամասն պետք ե խոսել։

IV ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մեր պակասությունների կապակցությամբ հատկապես պետք ե առանձնացնել տնտեսական աշխատանքների հարցերը, մեր արդյունաբերության մեջ աշխատանքի կազմակերպման խնդիրները։

Իսկապես, ինքնարժեքի իջեցումը, ավելի ճիշտ ասած, ինքնարժեքի բարձրացման և աշխատանքի արտադրողականության անբարենպաստ դրությունը, տարբեր են տարբեր ասպարեզներում։ Ավելին՝ յերբեմն միևնույն վարչության յենթարկվող տարբեր գործարաններում դրությունը տարբեր ե։ Անցյալ աշխատանքների թերությունների պատճառը գտնելու և նրանց վերացնելու միջոցները գտնելու համար, պետք ե բացատրել տարբեր ձեռնարկներում յեղած զանազանությունը։

Յես ձեզ ցույց կտամ այսպիսի աղյուսակ.

	Աշխատանքի արտադրողական. 1931 թ. տոկոսներով 1930 թվի համեմատ.	Աշխատանքի արտադրող. պլանը տոկոսներով	Աշխատանքի արտադրող. իջեցումը տոկոսներով
Գիդրոպրեսս	+ 75 տոկ.	106 տոկ.	—5,4 տոկ.
Ռազազ	+ 18 »	78 »	—8,6 »
Ջենցովի անվան գործարանը .	— 20 »	—	+ 18 »
Կարմիր Աքսայ	— 30 »	57 »	+6,2 »
Սեվ-Կավ. Ուգոլ	— 17 »	68 »	+ 33 »
Գրոզնեֆթ	+ 8 »	—	— 16 »

Ի՞նչով բացատրել, բացի անշնորք ղեկավարությունից, բացի տեխնիկային տիրապետելու անընդունակությունից, արդյունաբերության գործերը կարգավորելու դժվարությունները հաղթահարելու անկարողությունից, վորի մասին ասվեց վերևում։ Ուրիշ ինչ բանով կարելի յե բացատրել առանձին արդյունաբերական ճյուղերի, ինչպես նաև համանման գործարանների այսպիսի տարբերությունները, վորոնք շատ անգամ գտնվում են միևնույն քաղաքում։

Ինձ թվում ե, վոր այդ հարցին պատասխան կարող ե ծառայել մեր խոշոր քաղաքային կոմիտեներից մեկի վորոշումը։ Ահա թե ինչ ե վորոշել կուսակցության քաղաքային այդ կոմիտեն խոշոր գործարաններից մեկի դրությունը քննելիս. «Չնայած այն հանգամանքին, վոր գործարանը ապահովված ե համապատասխան տարածությամբ, դազգյահների պարկով, կահավորմամբ, նյութեղենով, բանվորական ուժով, ինժեներ-տեխնիկական պերսոնալով» (ել ինչով պետք ե ապահովված լիներ. վոչնչով Բ. Շ.) «ընթացիկ տարվա ծրագիրը կատարված ե ընդամենը 56,63 տոկոսով, այն ել հիմնականում կրկնվող արտադրանքի ասպարեզում և բոլորովին չեն յուրացված նոր տեսակները»։

Յեվ ապա՝ «յեղած կահավորումը ոգտագործված ե անբավարար։ Ճախարագործական դազգյահները—58 տոկոսով, ատրճանակների դազգյահները—65 տոկոսով, ավտոմատները—270, փայտամշակման—40

տոկոսով և այլն։ Աշխատանքի արտադրողականությունը աշխատանքային որվա ընթացքում տարբեր ե․ փականագործների մոտ 41 տոկոս, ճախարակիչների մոտ 47 տոկոս և այդ այն դեպքում, յերբ աշխատավարձը աճել ե պլանի նախատեսածից ավելի։ Գործալքումները խիստ կերպով ավելացել են (օգոստոսը—1,2 տոկոս, սեպտեմբեր—0,8 տոկոս, հոկտեմբեր—2,69 տոկոս)»։

Յերբ ավելի ուշադրությամբ ես նայում, փնտրում ես աշխատանքի այսպիսի արդյունքների բացատրությունը, վորն ունի արտադրության համար բոլոր պայմանները, ապա ստիպված ես լինում ուղղակի ասելու, վոր գործի ամբողջ դրվածքը ուղղակի ծաղր ե հանդիսանում ընկեր Ստալինի թե առանձին և թե վեցը միասին վերցրած պայմանների վրա, ծաղր, վորին հանգեցնում ե տնտեսավարական աշխատանքի կազմակերպման անընդունակությունը, կուսակցության ցույց տված ուղղությամբ ձեռնարկության ղեկավարման անկարողությունը։

Մենք կարծում ենք, վոր կուսակցության Յերկրկոմն իր ժամանակին և վճռականորեն դրեց մեր ձեռնարկների աշխատանքներում տնտեսհաշվարկ մտցնելու և ընկեր Ստալինի մյուս պայմանները կիրառելու խնդիրները։

Առանձնապես արդյունաբերական կազմակերպությունների մեջ աշխատող ընկերները պետք ե հիշեն, թե ինչպես դեռ 1931 թվի մարտ-ապրիլ ամիսներում, Յերկրկոմն իր վրա նախաձեռնություն վերցրեց արդյունաբերության մեջ տնտեսական հաշվարկ մտցնելու և մի շարք այլ միջոցառումներ կիրառելու ասպարեզներում, վորոնք (միջոցառումները) կապված եյին արտադրության կազմակերպումը բարելավելու, ամբողջ ձեռնարկության աշխատանքների նկատմամբ յուրաքանչյուր բանվորի շահագրգռվածությունը ավելացնելու խնդիրների հետ։

Այժմ արդեն յուրաքանչյուրիս համար պարզ և ակնհայտ ե հավասարեցման և դիմազրկության դեմ պայքարելու, հոսունությունը վերացնելու անհրաժեշտությունը։ Այժմ մենք հարյուրավոր անգամ կրկնում ենք ընկ. Ստալինի այդ ցուցմունքները։ Մինչդեռ կես տարուց մի քիչ առաջ Յերկրկոմի վորոշումը արտադրության մեջ ցեխերում և բրիգադաներում յեղած «փոքրիկ կոմունաները» ցրելու մասին, վորոնք ներկայացնում եյին մանր բուրժուական հավասարեցման վատթարագույն ձևեր, վորտեղ բրիգադայի ամբողջ աշխատավարձը բաժանվում եր ըստ շնչի, անցյալ տարվա կոլխոզային որինակի վատագույն ձևով—այդ նշանավոր «ընդհանուր խմբակների» ցրումը՝ հանդիպեց վորոշ դիմադրության։ Մենք գնացինք հոսանքի դեմ, վորոշ մանր-բուրժուական տրամադրությունների դեմ, վորոնք մուտք եյին գործել մեր գործարանները գյուղից յեկած տասնյակ հազարավոր գյուղացիների հետ։ Պետք յեղավ նշանակալից պայքար տանելու, կոտրելու համար քաղաքական այդ անթույլատրելի տրամադրությունները

Հարվածայինի, ավելի լավ և հարվածային աշխատող բանվորի նյութական առանձնաշնորհումը—դա մեր կուսակցության ճիշտ գիծն ե, վորը նույնպես վորոշ ընդդիմության հանդիպեց։ Վորոշ տեղերում բանվորների հետամնաց խմբակներն ասում եյին, թե «բոլորի ստամոքսներն ել միատեսակ են, ապա ինչու համար հարվածային

բանվորին լավ ճաշ են տալիս, ինչու հարվածային բանվորին առանձին պայոկ են տալիս, առանձին են հայթայթում և այլն»։

Մի քանիսը կարծում եյին, քանի վոր մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը, ապա տնտեսհաշվարկը «թող կորչի», վոր իբր թե սոցիալիզմի շրջանում պլանային աշխատանքը միջտեղից հանում ե տընտեսահաշվարկը, իսկ մենք տեսանք, վոր տնտեսահաշվարկի թուլացումը մեր արդյունաբերությանը ինչ վնաս հասցրեց։

Ստիպված յեղանք կոտրել այդ հարցի վոչ ճիշտ հասկացողությունը, վորպեսզի իսկապես կիրառվի սոցիալիստական մրցության, հարվածային աշխատանքի կապակցության լենինյան տեսակետը նյութական շահագրգռվածության, լավ աշխատող բանվորների առանձնաշնորհյալ հայթայթման հետ։

Աշխատավարձի հարցում հարկ յեղավ արմատական կերպով, ընկ. Ստալինի ցուցմունքի համաձայն, կոտրել աշխատավարձի սահմանված խեղաթյուրումները, վորոնք նույնպես թափանցել եյին առանձին ձեռնարկներում գյուղից (հավասարեցում, դիմազրկություն և այլն)։

Յերկրկոմը իր վրա նախաձեռնություն և պատասխանատվություն վերցրեց շատ մեծ և սկզբունքային վորոշումների համար տընտեսհաշվարկի, աշխատավարձի և աշխատանքի կազմակերպման խնդիրներում և մենք հաղթահարեցինք այն սխալ տենդենցիաները, այն սխալ մոտեցումները, վորոնք կային առանձին դեպքերում։

Սակայն և ներկայումս, ընկերներ, դեռ բացահայտորեն քիչ ե արված, դեռ շատ-շատ բան չի արված։

Այժմ ել, մեր տնտեսվարներից շատերը նստում են և սպասում, թե յերբ կգա հումքը, անհրաժեշտ նյութերը գործարանի համար, սպասում են, թե յերբ «աղան» վերևից կղրկի այն, ինչ վոր իրենց պետք ե։ Յերբեմն բոլորովին չգիտեն, կգա թե չի գա չափազանց անհրաժեշտ հումքը։ Կան փաստեր, յերբ գործարանի համար հումքը գտնվում ե վագոններում մի քանի որով, իսկ այդ ժամանակ գործարանը կանգ ե առնում հումքի բացակայության պատճառով։ Մեր ածխային հանքահորերը—արտադրական այդ ստորին միավորները—դեռ այժմ ել չունեն պայմանագիր, չգիտեն, թե ումից պետք ե ստանան մատակարարումը, կահավորումը և արտադրության համար անհրաժեշտ մնացած բոլոր իրերը։ Կուրորեն, մթության մեջ սպասում են։

Իհարկե յեթե մենք ինքներս մեզ ճանապարհ չհարթենք, յեթե ինքներս չձգտենք մեր գործարանների ճիշտ հայթայթմանը, չկապվենք անմիջականորեն այն գործարանների և ֆաբրիկաների հետ, վորոնք մեզ մատակարարում են—մենք յերբեք նորմալ մատակարարում չենք ունենա։ Յեթե մենք, առաջվա նման, պիտի ունենանք պայմանագրեր միայն թղթի վրա, պայմանագրեր, վորոնց ամեն մարդ ուզում ե խախտել, ապա մենք իսկական տնտեսհաշվարկ չենք ունենա։ Յեթե մենք իսկապես վոր չուղղենք գործերի դրությունը, ապա յերբեք շրջանառու միջոցներ յուրաքանչյուր ձեռնարկության համար չենք ստեղծի, այլ կշարունակենք ուտել այդ միջոցները։ Մենք պետք ե վերջ տանք սխալ և խայտառակ վերաբերմունքին դեպի տնտեսհաշվարկի խնդիրները։ Մենք պետք ե հասնենք այն բանին, վորպեսզի իսկապես ինքնարժեքը, աշխատանքի արտադրողականությունը և տնտե-

սության ամբողջ կազմակերպումը—տնտեսհաշվարկի հիման վրա—ապահովեն մեր արդյունաբերության միջոցների կուտակման խնդիրը, որը որպես ամենասուր հարցերից մեկը դրեց ընկ. Ստալինը։

Տեխնիկայի տիրապետման հարցը։ Կբերեմ միայն չերկու օրինակ։ 1931 թվի գարնանը կուսակցության Յերկրկոմը վորոշեց Շախտի ածխային ռայոնում 40 լավաներ փոխադրել Կարտաշևի մեթոդներին, ածխի արդյունահանման ավելի կատարելագործված մեթոդների։ Այդ ժամանակվանից անցել է կես տարի և Շախտում արդեն մոռացել են այդ մասին։ Յերբ այժմ, կոնֆերենցիայի առթիվ սկսեցին հանրագումարներ կազմել, յերևաց, վոր այդ լավաներն աշխատում են այնպես, ինչպես մյուսները, այսինքն շատ վատ։ Սակայն կարևորն այն է, վոր ածխարդյունաբերության, գործում տեխնիկայի տիրապետման համար պայքարելու փոխարեն այդ գործը մոռացության են տվել և միայն ընկ. Կրիլենկոյի անվան հանքահորը, վորը նվաճել է նավթագործների փոխանցիկ դրոշը, վորպես առաջնակարգ հանքահոր—համարձակության և որինական հիմք ունեցավ հայտարարելու, վոր այդ մեթոդները վորոշում են ածխային արդյունաբերության բախտը, վորովհետև նրանք գործադրելով իրենց մոտ այդ կատարելագործված տեխնիկան, կարողացան ձեռք բերել բեկում։

Մի ուրիշ հարց—դարձյալ ածխային արդյունաբերությունից—այսպես կոչված՝ գազիֆիկացիայի մասին, այսինքն արդյունահանման փոխարեն գետնի տակ ածուխը գազի վերածելու մասին։

Բանից յերևում է, վոր ածխային գործի ղեկավարները քիչ են լսել այդ մասին։ Այնպես, յերբեք ինչ վոր լսել են։ Չեն լսել, վոր այդպիսի հարց դրվել է, վոր այդ մասին գրել է Լենինը, վոր այդ հարցը կանգնած է կուսակցության առաջ—և նրանք հանգիստ, կարծես թե դա նրանց չի վերաբերվում, նրանք նույնիսկ չեն հետաքրքրվում թե ինչ է ներկայացնում իրենց այդ գազիֆիկացիան։

Կարելի յե բերել ևս տասնյակ օրինակներ, վորոնք ցույց են տալիս, թե վորքան վատ ենք մենք պայքարում տեխնիկայի տիրապետման համար, պատմական այդ խոշորագույն լոզունգի իրագործման համար, վորն առանց կատարելու մենք չենք կարող առաջ շարժվել, չենք կարող նոր խրամատներ գրավել մեր տնտեսական շինարարության գործում։

Աշխատավարձի ուղղությամբ, աշխատանքի կազմակերպման, դիմազրկության, հոսունության, հավասարեցման դեմ մղվող պայքարի գործում այդ կարեվորագույն, արմատական հարցի վերաբերմամբ մենք ունենք վորոշ արդյունքներ։ Յեթե 1931 թվ.ի 9 ամսվա ընթացքում սև մետաղագործությունը աշխատավարձի մակարդակով 10-րդ տեղն եր բռնում, ապա հոկտեմբերին նա արդեն յերկրորդ տեղն եր բռնում։ Ածխային արդյունաբերությունը աշխատավարձի մակարդակով բռնում եր 12-րդ տեղը, այժմ բռնում է 6-րդ տեղը, գունավոր մետաղագործությունը 14-ից անցավ 11-ի, իսկ կաշվի արդյունաբերության ընդհակառակը, 9-ից բարձրացել է 13-ի, պոլիգրաֆ արդյունաբերությունը 3-ից մինչև 11 և թղթի արդյունաբերությունը—5-րդ տեղից բարձրացել է 10-րդ տեղը։ Սա արդեն արդյունք է աշխատավարձի գործում անցկացվող քաղաքականության։ Վոչ՝ թե ինքնահոս, այլ քաղաքականության, վոր տվել է արդեն վորևե արդյունք։

Մենք ունենք նաև գործավարձի ընդգրկման աճում. իսկ չէ՞ վոր գործավարձը մեր տնտեսությանը տալիս է վիթխարի արդյունք, յեթե նա իսկապես հասցրված է ամեն մի բանվորի, յեթե բանվորը գիտակցում է, հասկանում իր աշխատանքի կապակցությունը իր նյութական դրության և աշխատավարձի հետ։ Բայց դեռ շատ քիչ բան է արված, վորպեսզի ամեն մի բանվոր անհատապես իսկապես ըմբռնի գործավարձի շահավետությունը։ Իր ժամանակին մենք առաջ քաշեցինք հառաջատվական աշխատավարձի խնդիրը, բայց մենք այն ժամանակ հենց սահմանափակեցինք նրա տարածվածությունը և դա քաղաքականորեն միանգամայն. ճիշտ է։ Մենք չենք կարող չմտածված կերպով թույլ տալ հառաջատվական աշխատավարձի գործադրումը, վորովհետև այնտեղ, վորտեղ չկա տեխնիկական նորմիրովկա, վորտեղ չկա աշխատանքի իսկական կազմակերպում, դա կվերածվի աշխատավարձի չմտածված, չչափված բարձրացման և ուրիշ վոչինչ։ Միայն այնտեղ, վորտեղ մենք ունենք աշխատանքի պարզորոշ տեխնիկական նորմիրովկա, մենք կարող ենք անցկացնել հառաջատվական աշխատավարձ։

Յևս մեկն ընկ. Ստալինի պայմաններից—դա **մեր տեխնիկական ինտելիգենցիայի կադրերի մասին** է։ Հարկ չկա խոսելու այն խոշոր հաջողությունների մասին, վորոնց արդյունքները մենք այժմ տեսնում ենք զուտ այն պատճառով, վոր մեր կուսակցությունը ժամանակին դրեց կադրերի հարցը և գործնականորեն իրագործում է այն։ Հազարավոր և տասնյակ հազարավոր մեր պրոլետարական մասնագետներն արդեն աշխատում են, մեր պրոլետարական մասնագետների բանակը օրեց-օր աճում է։ Բայց հին մասնագետների հարցում վո՞րն է մեր գիծը։ Շախտի կուսկոնֆերենցիայում յես լսեցի մի ընկերոջ յելույթ, վորը արծարծում եր այն միտքը, թե հին տեխնիկական ինտելիգենցիային պետք է «լիկվիդացիայի յենթարկել վորպես դասակարգի», վորովհետև նա վնասարար է, նա մերը չէ և այլն։ Սա բացարձակորեն հակակուսակցական հարցադրում է։ Ընկ. Ստալինը հարցը դնում եր այնպես, վոր մենք պետք է հին տեխնիկական ինտելիգենցիայից առնենք այն ամենն, ինչ վոր կարող ենք։

Ի՞նչ տեղի ունեցավ մեր շինարարության հաղթանակների հետևանքով։ Հին տեխնիկական ինտելիգենցիայի մեջ կատարվեց վորոշակի բեկում։ Գործնականում մենք տեսնում ենք շատ հին մասնագետների, վորոնք բարեխղճորեն աշխատում են մեզ մոտ։ Սա վերաբերվում է վոչ միայն տեխնիկական, այլ և զգալի չափով գյուղատնտեսական, դասատվական, ուսուցչական ինտելիգենցիային։ Նրանց վերաբերմամբ գործնականում դեռ շատ անարդարություններ կան, մենք դեռ չենք ապահովել նրանց աշխատանքի և կենցաղի նյութական պայմանները. դեռ շատ խեղաթյուրումներ կան այդ հարցում անցկացվող կուսակցական գծի վերաբերմամբ։

Չնայած նրան, վոր մենք բավական դանդաղ ենք վերակազմվում այդ հարցերի վերաբերյալ գործնական աշխատանքում, համենայն դեպս կարելի յե դարձյալ հաստատել, վոր հիմնականում, վճռական մոմենտում այդ ուղղությամբ վերակառուցում կա, վոր ընկեր Ստալինի պայմանները, մեր կուսակցության վորոշումներն արդեն հանդիսանում են վոչ միայն դիրեկտիվ, այլ և գործնական են կյանքում։ Հենց

23723-60
(12715-57)
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

նույն ածխային արդյունաբերության մեջ, վորը մեզ այնպես ուժեղ խփեց ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության գործում, մենք սիստեմատիկ, աստիճանաբար տիրապետում ենք փորիչ մեքենային, աճում է յուրաքանչյուր առանձին փորիչ մեքենայի ընդհանուր արտադրանքը և վերջին ամիսների ընթացքում աճում է աշխատանքի արտադրողականությունը: Յեթե սեպտեմբերին, մինչև աշխատավարձի և այդ միջոցառումների վերանորոգումն, յուրաքանչյուր ածխահան բանվորի ընկնում էր ամսական 1.500 տոնն ածուխ, ապա ուրեմն հոկտեմբերին արդեն ընկնում է 1.680 տոնն և նոյեմբերին 1.712 տոնն, այսինքն յերեք ամսում աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 10 տոկոսով:

Կարելի յեր բերել ելի մի շարք օրինակներ թե Տագանրոգի և թե մեր մյուս արդյունաբերական կենտրոնների համարյա բոլոր գործարանների վերաբերյալ, վորտեղ գործավարձին անցնելը, աշխատանքի կազմակերպման հիմքերի ներմուծումը տալիս է անհապաղ դրական և անմիջական արդյունք և մենք այդ տեսնում ենք մեր ձեռնարկությունների արտադրանքի աճումից: Յես չգիտեմ, ներկայումս ինչ տվյալներով են յեկել յերկրային կուսկոնֆերենցիա մեր ածխահատները, մեր նավթագործները, մեր ցեմենտագործները, բայց նրանք իրենց բոլոր կոնֆերենցիաներում խոստացել են գալ յերկրային, ևս առավել համամիութենական կոնֆերենցիա, իրագործելով արտադրական առաջադրությունները 100 տոկոսով:

Կենտկոմը վորոշել է 1932 թվին արդյունաբերական արտադրանքի աճն ավելացնել 36 տոկոս: Յեվ մենք գիտենք, վոր ածխահատները իրոք բավական հաստատ կերպով ավելացնում են արտադրանքը Նավթագործներն ու ցեմենտագործները նույնպես շատ բան են արել՝ ավելացնելու իրականում ընդհանուր արտադրանքը:

Այս ամենը հետևանք է մեր աշխատանքի վերակառուցման. հետևանք է այն մեծ մրցման, վորը յերկար ժամանակվա ընթացքում ծավալվել է մեր ձեռնարկներում և ամրապնդվել է այժմ նրանով, վոր մենք ճշտորեն կապակցել ենք հարվածային շարժումը նյութական խրախուսանքի հետ գործի լենինյան հասկացողությամբ և ձեռք ենք բերել այն, վոր շատ աշխատանք գործադրողները պետք է նյութապես լավ ապահովված լինեն:

Ասում են, վոր մեզնում 4 կամ 5 հազար հարվածային բրիգադներ կան. ասում են, վոր մեր ձեռնարկներում բանվորների 80 տոկոսը հարվածայիններ են: Սա կարծես թե մեր պրոֆմիությունների թվերն են: Յես, ընկերներ, այդ թվերին այնքան էլ չեմ հավատում, վորովհետև յեթե այդ այդպես լիներ, ապա մենք կունենայինք արտադրական առաջադրանքների վիթխարի գերակատարում, մի բան, վոր առայժմս չկա: Անկասկած է, վոր կան շատ հարվածային բրիգադներ, կան շատ հարվածայիններ, վորոնք բոլշևիկորեն կռվում են մեր տնտեսական զարգացման տեմպերի համար: Ասենք թե Լենգործարանում մի վորեւէ բրիգադա, վորն անցել է տնտեսհաշվարկի, տվել է մեզ մի ամսում 2200 ռուբլու խնայողություն: Դա իսկապես հարվածային բրիգադ է: Այլ դեպքերում, շնորհիվ տնտհաշվարկային բրիգադի աշխատանքներին, գործալքումները կրճատվեցին մինչև զերոյի, բայց այնուամենայնիվ խնայողությունը յեղել է 154 ռուբլի 45 կոպեկ: Անհա այս

154 ռուբլի 45 կոպեկը մեզ համար գնահատելի յեն տասնյակ հազարավոր ամեն տեսակի բարձրակոչ ֆրազներից և ամեն տեսակի հանդիսավոր խոստումներից և թղթագրական հարվածայնություններից:

Ընկերներ, մենք կարող ենք հարվածային տնտեսհաշվարկային բրիգադ, իսկական հարվածային համարել նրանց, ովքեր իրոք կատարում և գերակատարում են արտադրական պլանը, ովքեր գերակատարում են այդ պլանը նաև վորակական ցուցանիշների տեսակետից և ամենից առաջ տնտեսում են կոպեկներ և ռուբլիներ մեր սոցիալիստական շինարարության համար: Միայն այն ժամանակ մենք կարող ենք համարել մեր արդֆինպլանը իրագործված, յերբ նա կատարված է թե ընդհանուր արտադրանքի, թե վորակական ցուցանիշների, թե ինքնարժեքի իջեցման, թե աշխատանքի արտադրողականության բարձրացման և թե արտադրանքի լավ վորակի տեսակետից:

Յերբ ինքնարժեքի իջեցման ժամանակ իջնում է արտադրանքի վորակը, ապա ուրեմն դա վոչ թե օգուտ է, այլ վնաս, վոչ թե հաղթություն է, այլ պարտություն:

Ինձ թվում է, այս բոլորից կարելի յե հաստատ յեզրակացնել, վոր արդյունաբերության ասպարեզում հիմնական բեկում մենք ձեռք բերել ենք, վոր կան բոլոր տվյալները, բոլոր պայմանները և նյութական հնարավորությունները, վճռական հարձակում գործելու մեր աշխատանքի այդ ասպարեզում: Յես կարծում եմ, վոր այս տարի մենք կարող ենք և պետք է ապահովենք վոչ միայն մեր արտադրական պլանների իրագործումը, այլ և նրանց գերակատարումը: Դրա համար կան բոլոր պայմանները, բոլոր տվյալները (ծափեր):

5. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն թերությունները, վոր բնորոշ են մեր արդյունաբերության համար, բնորոշ են նաև գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի—խորհտնտեսությունների, ՄՏ կայանների և կոլտնտեսությունների համար:

Ընկեր Ստալինի առաջադրած պահանջները, պայմանները, վորպես մեր տնտեսական գործունեության կազմակերպման հիմք, վճռական նշանակություն ունեն և այստեղ:

Անցած տարվա փորձի հիման վրա անհրաժեշտ է այնպես վերակազմել մեր խորհտնտեսությունների աշխատանքները, վոր խորհտնտեսության յուրաքանչյուր բաժինը ամբողջովին և լրիվ լինի տնտեսհաշվարկային, վոր այդ միավորն ստուգվի ռուբլիներով, վոր բոլոր փոխհարաբերությունները հիմնված լինեն աշխատանքի ճիշտ կազմակերպման և շահագրգռման վրա—դա հիմնական պահանջ է, մեր խորհտնտեսությունների աշխատանքի բարելավման հիմնական հանգույց:

ՄՏԿայաններում հիմնականը հանդիսանում է այն, վոր ապահովվի ՄՏԿայանների շահագրգռվածությունը կոլտնտեսությունների աշխատանքներում, կոլտնտեսության բերքում, այսինքն ՄՏ կայանը վարձ ստանա կոլտնտեսության բերքից: Միայն այդ կերպ մենք կկարողանանք ՄՏԿայանները վերածել կոլտնտեսությունների իսկական տնտեսական և կազմակերպչական կենտրոնի, վորոնք (ՄՏԿ) շատ դեպքե-

րում հանդիսանում են փարձակայաններ և փաստորեն քիչ կամ համարյա չեն մասնակցում կոլեկտիվ տնտեսության աշխատանքի կազմակերպությանը։

Թե կոլտնտեսության և թե խորհտնտեսության համար տրակտորի յեվ նրա օգտագործման, տրակտորիստի աշխատանքի կազմակերպության հարցերը հիմնական հարցերից են։

Մենք գիտենք, վոր անցյալ աշուն տրակտորները արտադրում եյին իրենց հնարավորության միայն կեսը։ Իսկ տրակտորները մեզանում բռնում են գյուղատնտեսության լծկան ուժի մեկ յերրորդը։ Ահա յեթե այդ մեկ յերրորդը աշխատում է իր կարողության կեսի չափ, դուք պետք է հասկանաք, թե ինչ հետևանքներ են այստեղից բղխում։ Խորհտնտեսությունները և ՄՏԿայանները պետք է, ինչ էլ վոր լինի, այնպես վերակազմեն տրակտորների աշխատանքը, վորպեսզի նրանք աշխատեն լրիվին և ապահովեն իրենց հզորության մաքսիմում օգտագործումը։

Կոլտնտեսությունների վերաբերմամբ հարցն ավելի բարդ է, վորովհետև խորհտնտեսություններում և ՄՏԿ-ներում մենք գործ ունենք հետևողականորեն սոցիալիստական ձեռնարկությունների հետ, մեր պետական ձեռնարկությունների հետ, յեթե չհաշվենք ՄՏԿ-երի վորոշ առանձնահատկությունները։ Իսկ կոլտնտեսություններում ունենք սոցիալիստական ձեռնարկություն, վորը սակայն պատկանում է կոլտնտեսականներին, կոլտնտեսական գյուղացիությանը։ Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հարցերի լուծման դեպքում բարձրանում է հենց կոլտնտեսական գյուղացիության հարցը, նրա վերափոխության հարցը, նրա աշխատանքը սոցիալիստական ձեռնարկներում—կոլտնտեսություններում կազմակերպելու հարցը։

«Պրավդայի» յերեկվա համարում տպված եր ընկ. Ստավսկու հոդվածը։ Նա նկարագրում է Հյուսիսային Կովկասի կոլտնտեսություններից մեկին, ըստ վորում այդ կոլտնտեսությունը լրիվին կատարել է իր արտադրական պլանները, ժամանակին հավաքել է բերքը, կրկնակի չափով բարձրացրել է արտադրանքը, հանձնել է պետությանն այն ամենը, ինչ վոր պետք է հանձներ, յերկու անգամ բարձրացրել է կոլտնտեսականների յեկամուտը և ամուր կանգնած է հաստատուն հիմքի վրա, չնայած վոր ունի մի շարք մանր, յերկրորդական թերություններ աշխատանքների մեջ։

Սա, իհարկե, լավ կոլտնտեսություն է, բաց միջին հաշվով մեզանում կոլտնտեսությունները դուրս յեկան վոչ վատ արդյունքներով։ Յեթե վերհիշենք, վոր կոլտնտեսությունները, լծկան ուժի զգալի կրճատման պայմաններում, մեկ ու կես անգամ ավելի յեն ցանել անցյալ տարվանից, յերկու անգամ ավելի ընդհանուր արտադրանք են տվել անցյալ տարվա համեմատությամբ, մեկ ու կես անգամ բարձրացրել են կոլտնտեսականի յեկամուտները և մեկ ու կես անգամ ավելացրել են իրենց հիմնական դրամական ֆոնդերը կառուցումների, ինվենտարի մեջ և այլն և այլն, յեթե պատկերացնենք բուն կոլտնտեսական սոցիալիստական շինարարության պատկերը, վորը տեղի յե ունենում գյուղում, ապա իհարկե, պետք է դրական գնահատական տալ վերջին տարվա կոլտնտեսական աշխատանքի հանրագումարին։

Միանգամայն անկասկած է, վոր 1931 թվին կոլտնտեսությունները շատ ավելի լավ եյին աշխատում, քան նախորդ տարում, վոր նրանք հաստատ վոտի յեն կանգնել, ունեն հետագա աճի և ամրապնդման պարզ հեռանկար։ Իմ կարծիքով, կոլտնտեսությունների ներկա դրությունն ամենից լավ կարելի յե համեմատել մեր Կարմիր բանակի այն ժամանակաշրջանի հետ, յերբ նա կազմվում եր 18—19 թվականների մարտերում, յերբ ահագին գյուղական մասսաները կոմունիստների և պրոլետարների ղեկավարությամբ ստեղծում եյին մարտական հզորություն, յերբ ստեղծվում եր կարգապահություն, ստեղծվում եյին յուրատեսակ նոր հարաբերություններ, յերբ ստեղծվում եր այն Կարմիր բանակը, վորին այժմ մենք գիտենք։ Յեթե մոտից դիտեք կոլտնտեսությունների կյանքը, նրանց աշխատանքը, դուք կտեսնեք շատ նման բաներ այդ ժամանակամիջոցի հետ։ Դուք կտեսնեք, թե ինչպես այնտեղ առաջանում են մեր ղեկավարության տակ իսկապես ամբողջովին կուսակցության և սոցիալիստական շինարարության նվիրված մարդիկ, ինչպես աշխատանքի ընթացքում կազմվում են փոխհարաբերությունները ղեկավարող կադրերի և կոլտնտեսական մասսայի միջև։ Մենք կարող ենք արդեն հենց այժմյանից տեսնել, թե ինչպես այդ կոլտնտեսական մասսաներից ձևավորվում են ամրապինդ, աշխատանքային յերկաթե կարգապահությամբ և աշխատանքի պարզորոշ կազմակերպությամբ սոցիալիստական ձեռնարկություններ։

Այս ուղղությամբ մենք արագ և վճռականորեն ընթանում ենք առաջ և հենց այդ պատճառով Կենտկոմը հիմք ուներ դնելու դասակարգային տարբերությունների վոչնչացման, անդասակարգ սոցիալիստական հասարակություն ստեղծելու հարցը մոտակա պատմական ժամանակամիջոցում։

Բայց դրա հետ միասին մենք դեռ ևս ունենք կուլակային ազդեցության թափանցման աղաղակող օրինակներ մեր առանձին կոլտնտեսություններում, ունենք մանր-սեփականատիրական ձգտումների հայտնաբերում և ամեն տեսակ կորզողական ու կաշվեպաշտական տրամադրություններ կոլտնտեսություններում։

Կան առանձին կոլտնտեսություններ, վորոնց միայն կեղծ կոլտնտեսություններ կարելի յե անվանել։ Կարելի յե բերել Բերեզանսկու կոլխոզներից մեկի օրինակը, վորտեղ յես ինքս յեղել եմ և մասնակցել կոլտնտեսության առողջացման համար անցկացվող մի շարք միջոցառումներին։

Այնտեղ հայտնաբերվեց ղեկավարության բացահայտ կազմալուծում, բացարձակորեն սխալ քաղաքական գիծ։ Կոլտնտեսության ղեկավար կազմում տեղ եյին գտել 11 հոգի նախկին կուլակ-ձայնազուրկներ և կազմալուծված տարրեր։ Բաղհանի աշխատանքներում վորոշ կոլտնտեսականներ արտադրում եյին 5—7 աշխօր մի բանվորական օրվա ընթացքում, բեռնակիրները՝ 7—10 աշխօր, իսկ դիզման և կալսման աշխատանքներում արտադրում եյին 0,8 աշխօր։ Դաշտաբուծության մեջ աշխատում եյին աշխատունակների մեկ յերրորդ մասը, իսկ մնացածները ինչպես արտահայտվում եյին այնտեղ—«պառկում եյին շվաքներում»։ Աշխօրերի կեսը ծախսվում եր մշտական աշխատողների վրա, այսինքն վարչական կազմի վրա։ Սեպտեմբեր ամսում,

3000 տնտեսությունից բաղկացած կոլտնտեսությունը, վորն ուներ տասնյակ հազարավոր հեկտար ցանքս—հանձնել եր միայն 14 տոնն հացահատիկ, իսկ յերբ մենք ստուգեցինք 11 տնտեսություններ, ապա նրանց մոտ գտնվեց 400 փութ հացահատիկ։ Աշխատանքի յելին դուրս գալիս կոլտնտեսության աշխատունակ անդամների 40—45 տոկոսը։

Ահա մի կոլտնտեսության օրինակ, վորը հասել եր կեղծ կոլտընտեսության սահմանին, մի կոլտնտեսության, վորը չեր գտնվում մեր պրոլետարական ղեկավարության տակ, վորը գնում եր դեպի կուլակության կարթը, վորը չկարողացավ հակահարված տալ կորզողական տրամադրություններին։

Հացամթերումների հարցում մենք հանդիպեցինք բավական լուրջ դժվարությունների, վորոնք պետք է հաղթահարվեյին և վորոնք հաջողությամբ հաղթահարեցինք, վորովհետև մեր հացամթերումների պլանը մենք իրագործում ենք։ Այդ հաջողեցրինք նրա համար, վոր Յերկրկոմն իր ժամանակին դրեց կոլտնտեսությունների ամրացման հարցերը, կազմակերպչական և տնտեսական հարցերը հասցրեց քաղաքական բարձրության։

Յես կամենում եմ օրինակ բերել, թե ինչպես յերբեմն առանձին ընկերներ այնքան ել ճիշտ չեն գնահատում դրությունը, մասնավորապես կոլտնտեսություններում։ Ահա մի քանի քաղվածքներ գյուղատնտեսական խոշորագույն ռայոններից մեկի կուսռայկոմի քարտուղարի նամակից.—

«Աշխատանքի «դուրս գալու» հարցը, վորն այնքան հոգս է պատճառում, մեզանում հանված է ամենօրյա հոգսերի օրակարգից։ Դեպի կոլտնտեսությունը յեղած վերաբերմունքի ցուցիչները միայն քանակական (80-85 տոկոս) ցուցիչները չեն։ Բանակով աշխատանքի յեն յելնում միանգամայն նորմալ, վոչ պակաս քան խոշոր գործարաններում և ֆաբրիկաներում։

Իմ տեսակետով ամեն վոք, վոր այժմ բարձրացնում է այն հարցը, թե կոլտնտեսականներն աշխատանքի չեն դուրս գալիս, օբյեկտիվորեն բարձրացնում է այն հարցը, վորը հաստատում է իբր թե գյուղացիությունը դեմ է կոլտնտեսություններին։ Վորոշ ընկերներ աշխատանքի չդուրս գալը փորձում են բացատրել կոլտնտեսության մեծությամբ։ Այն փաստարկումը, թե վորքան մեծ է կոլտնտեսությունն, այնքան շատ է աշխատանքի դուրս չեկողների թիվը՝ բոլորովին սխալ է։ Ռայոնում մենք ունենք հակառակ օրինակներ. յերկու խոշոր կոլտնտեսություններում ավելի շատ են աշխատանքի դուրս գալիս, քան 200 տնտեսություն ունեցող կոլտնտեսություններում—հանդեպ 3—3 և կես հազար տնտեսություն ունեցող կոլտնտեսությունների»։ Նամակագիրը սկսելով նրանից, վոր աշխատանքի չդուրս գալու փաստեր բոլորովին գոյություն չունեն, քիչ հետո ասում է, վոր նման փաստեր տեղի ունենում են, սակայն փոքր կոլտնտեսություններում և սկիզբը վերջավորության հետ չի կապվում։

Յերկրորդ՝ նամակում սխալ է նաև այն, վոր այնտեղ փորձում են սվաղել, չտեսնել կուլակային-բուրժուական ազդեցությունների այն արտահայտությունները, վորոնք անկասկած տեղի ունեն

և այն ել բավական զգալի չափերով առանձին կոլտնտեսություններում և նույնիսկ մեր խորհտնտեսություններում։

Այս մանր-բուրժուական, կուլակային յերեվույթի հետ միասին, մանր-սեփականատիրական հոգեբանության հետ միասին վիթխարի նշանակություն ունի նաև գյուղականությունը, դանդաղաշարժությունը և կուլտուրական մակարդակի հետամնացությունը, վորն անցյալի ժառանգություն է հանդիսանում։

Վերջապես, մեզ ստիպում է դնել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման հարցն այն բանը, վոր կոլտընտեսական գյուղացին չի սիրում վատ տնտեսություն, կոլտնտեսական գյուղացին—դա զգաստ մարդ է, վորը սիրում է, վոր իրեն լավ կառավարեն, վոր տնտեսությունը լավ լինի, վոր տնտեսավարեն ճիշտ։ Նա ամենից շատ վրդովվում է և սաստիկ անբավականություն հայտնում հենց այդ ուղղությամբ յեղած անկարգությունների համար։ Դա հիմնական սնունդ է տալիս հակախորհրդային կուլակային պրովակացիաներ առաջանալու և կոլտնտեսությունները թափանցելու համար։ Միանգամայն օրինավոր է կոլտնտեսականների պահանջը, վոր մենք ավելի լավ տնտեսավարենք։ Մենք պետք է կարողանանք կազմակերպել մեր կոլտնտեսությունների աշխատանքը, վորպես իսկական սոցիալիստական ձեռնարկությունների։ Անցյալի հետ համեմատած, հիմնական տարբերությունն այն է, վոր այժմ առանձին կոլտնտեսականների շատ անգամ ճիշտ անբավականությունը կոլտնտեսությունների թերությունների հանդեպ արտահայտվում է կոլտնտեսության ներսում և նույնիսկ միտք չի առաջանում կոլտնտեսություններից հեռանալ։ Ընդհակառակը, կոլտնտեսությունների հաջողություններն ու առավելություններն այնքան մեծ են, վոր կոլտնտեսականները ատամներով կպայքարեն հանուն կոլտնտեսության։ Դեռ ավելին—կոլտնտեսություններն ստեղծեցին նոր կենցաղ, իրենք դարձան կենցաղ, մեր գյուղի կյանքի հիմքը։

Վո՞րն է հիմնական խնդիրը կոլտնտեսության շինարարության ասպարեզում։ Յերկրկոմը դեռ անցյալ տարվա սկզբին վճռականապես դրեց աշխօրի և գործավարձի հարցը և դրա հիման վրա մենք ձեռք բերինք զգալի հաջողություններ։

Այժմ, անցած տարվա դասերի հիման վրա Յերկրկոմն առաջադրում է մի շարք նոր խնդիրներ—հիմնականում նրանք, վորոնք լույս են տեսել Յերկրկոմի վերջին վորոշման մեջ։ Նախ և առաջ **կոլտնտեսությունների մեքենացման պարզ ու հստակ ծրագիր**, վորը նկատի յե ունենում մտցնել կոլտնտեսությունները կոմբայններ, տրակտորներ և ավտոմոբիլներ։ **1934 թվին մենք պետք է լրիվ կերպով ավարտենք մեր գյուղատնտեսության բոլոր հիմնական գործողությունների մեքենացումը** (բուռն ծափեր)։

Յերկրորդ—կոլտնտեսությունների կազմակերպչական վերակառուցումը, **գիգանտ կոլտնտեսությունների յեվ խոշոր բրիգադների մանրացումը**, տնտեսական ղեկավարության մոտեցումը կոլտնտեսականին նրա համար է, վոր յուրաքանչյուր կոլտնտեսականի պարզ լինի, թե ինչ է կատարվում կոլտնտեսության մեջ։

Դեռևս կան այսպիսի տրամադրություններ. «ինչպե՞ս թե հրաժարվենք խոշոր կոլտնտեսություններից»։ Դա սխալ գնահատում է,

ճշտակար տրամադրություն է։ Այժմ մենք հնարավորություն ունենք հաստատ ասելու, որ խոշոր կոլտնտեսությունները վատ էյին աշխատում։ Բարելավել կոլտնտեսությունների աշխատանքը, ամրապնդել տնտեսական ղեկավարությունը—դա նշանակում է խոշոր բրիգադներ—բակերը, վորոնք առաջ կային և վորոնք փաստորեն չէյին կարող աշխատանքի կազմակերպումը գլուխ հանել—փոխարինել ավելի մանր արտադրական ըստ հնարավորության մասնագիտացած բրիգադներով։

Հետևյալ հարցը—դա կոլտնտեսականների շահագրգռման ուժեղացումն է իրենց աշխատանքի հետևանքով։ Դրան մենք կհասնենք, յերբ կոլտնտեսականներին սկսենք տալ սիստեմատիկ, ամենօրյա կանխավճարներ—համաձայն նրանց աշխատանքի քանակի և վորակի։

Առաջ գոյություն ուներ այնպիսի դրություն, վոր կոլտնտեսականը չէր տեսնում իր աշխատանքի արդյունքները, աշխօրերը հաշվարկվում և վարձատրվում էյին տնտեսական տարվա վերջը։ Այժմ պետք է ավելի մոտ կապել աշխատանքն ու կանխավճար տալը, բայց դրա համար հարկավոր է կոլտնտեսություններում ստեղծել շրջանառու միջոցներ։ Մենք այժմ հնարավոր ենք համարում առաջադրել այդ—մեր կոլտնտեսություններում անցկացնելու համար։

Մենք արդեն հնարավոր ենք համարում հարցն այնպես դնել, վոր բրիգադն ստանա նյութական բարիք և յեկամուտ համաձայն նրան, ինչքան արտադրանք է հանձնել նա իր հողամասից։ Աշխօրերը բրիգադի ներսում պետք է հաշվառվեն առաջվա պես, բայց բրիգադն ստանալու յե այնքանի համար, ինչքան ցենտներ արտադրանք նա կարողանա հանձնել, վորպես իր աշխատանքի արդյունք։

Դրանով հնարավորություն է տրվում վերացնել թերությունները, վորոնք հանգում են հացի, ճակնդեղի, արևածաղկի և մյուսների անփույթ և անբավարար հավաքելուն, յերբ գործավարձի հիման վրա ոլտնտեսականն աշխատել է հավաքել միայն կատարները և թույլ է կավել դաշտում թողնել բերքի մի մասը։

Յես չեմ կանգ առնի այնպիսի հարցերի վրա, ինչպիսին են տնտեսհաշվարկի տարրերը կոլտնտեսությունների առանձին ձեռնարկություններում. հարցը նրանց մասին պարզ է։

Կանգ կառնեմ անասնապահության, կոլտնտեսությունների մասնագիտացման, տեխնիկական բույսերի և այլ հարցերի վրա։ Կուսակցության Յերկրկոմն անցյալ տարվա գարնանը ծավալեց անասնապահության սոցիալիստական վերակառուցման ահագին ծրագիր և հիմնականում իրագործեց այն, ապահովելով անասնապահության սոցիալիստական հիմքի ստեղծումն յերկրամասում։ Մենք պետք է ավելի առաջ գնանք մեր գործնական աշխատանքում ձեռք բերված նվաճումներն ամրապնդելու և զարգացնելու ուղիով, նոր կոլտնտեսություններ կազմակերպելու և նրանց տնտեսապես մասնագիտացնելու գործում։ Այդ հարցերում մենք ուշադրությամբ պետք է լսենք կոլտնտեսականներին և հաշվի առնենք նրանց կարծիքը և միաժամանակ պետք է յուրաքանչյուր կոլտնտեսություն ձգել վորոշ մասնագիտացման հունի։

Ելի յերկու հարց, վորոնք կապված են կոլտնտեսություններին։ Առաջին հարցը—յուրաքանչյուր կոլտնտեսականի ինքնուրույնությունը

ավելի զարգացնելու անհրաժեշտությունն է, նրա ակտիվության բարձրացումը յեվ ներգրավումը, մասնակցելու անմիջապես իր կոլտնտեսության ղեկավարմանը յեվ նրա տնտեսական ամրապնդմանը։

Մի քանիսը վախենում են, վոր կոլտնտեսություններում մեծ չափով կատարվող արտագնացությունը նրանց կթողնի առանց բանվորական ձեռքերի։ Դա ճիշտ չի, վորովհետև մենք գիտենք, վոր աշխատանքը տարրականորեն ճիշտ կազմակերպելու դեպքում կմնան միանգամայն բավարար բանվորական ձեռքեր, կատարելու համար բոլոր արտադրական գործողությունները։ Քաղաքը մի տարվա ընթացքում կլանում է գյուղից մոտավորապես 150—200 հազար մարդ և դա անխուսափելի յե, մենք այդ պետք է քաղաքին տանք։ Այդ յերևույթը չպետք է շփոթեցնի մեզ։ Հարկավոր է միայն արտագնացությունը անկազմակերպությունից վերածել կազմակերպվածության։

Ելի մի հարց, այսպես կոչված կոլտնտեսականի անձնական անհատական տնտեսության մասին, վորն յերբեմն ունենում է զգալի տեսակարար կշիռ կոլտնտեսականի յեկամուտներում, յերբեմն 20—30 տոկոս։ Նախ և առաջ փորձեր են լինում անցնելու կոմունային և յերկրորդ—վոչնչացնելու կոլտնտեսականի այդ անձնական, օժանդակ տնտեսությունը։ Այդ ուղիով մենք չենք կարող գնալ և չպետք է գնանք։

Կոլտնտեսական շինարարության գործում գյուղատնտեսական արտելը մնում է վորպես սյունաշար ուղի։

Անհատականի յեվ կուլակության վերաբերյալ։ Մեր յերկրամասում դեռևս մնում են մոտավորապես 18—19 տոկոս (հաշվելով և ազգային մարզերը) անհատական տնտեսություններ։ Դա բավական մեծ քանակություն է, բայց նրանց արտադրական նշանակությունը անցյալ տարի արտահայտվեց նրանում, վոր յուրաքանչյուր աշխատունակ անհատականին հասնում եր 0,8 հեկտար ցանք, իսկ կոլտնտեսականին 4 հեկտար։ Անհատականների լծկանն օգտագործվում եր 2—3 անգամ ավելի պակաս, քան կոլտնտեսական լծկանը, իսկ աշնանն անհատականը կարծեմ ամբողջ յերկրամասում ցանեց 200 հազար հեկտարից մի քիչ ավել, այսինքն նրա տեսակարար կշիռը շատ աննշան մեծության իջավ։ Առանձին դեպքերում մենք այնպիսի փաստեր ունենք, յերբ քաղաքին մոտիկ ապրող անհատականը պակասող մթերքների և գների տարբերության վրա սպեկուլյացիա անելով, ավելի յեկամուտ է ստանում, քան կոլտնտեսականը։ Այդպիսի դեպքեր մենք գրանցորեցինք մի շարք ստուգումներով։ Գործնականում անհատական տնտեսությունը մեր պայմաններում կրում է իր մեջ նեխվածության վորոշ ելեմենտներ։ Մենք կարծում ենք, վոր ժամանակ է հիշել Ենգելսի խոսքերն անհատական տնտեսության վերաբերյալ. «Յեվ այդպես, նշանակում է մենք չենք կարող ավելի վատ ծառայություն մատուցել վոչ միայն կուսակցության, այլև իրեն, մանր գյուղացուն, խոստանալով նրան կամ առաջացնելով հույսի մի նշույլ, թե մենք կձգտենք յերկար պահել նրա մանր սեփականությունը։ Դա կնշանակեր փակել գյուղացու ազատագրական ուղին» (Ֆ. Ենգելս.—Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում)։

Ենգելսն ասել է դա շատ տարիներ, առաջ այն հոդվածում, վորը մեջ բերեց ընկեր Ստալինը մարքսիստ-ագրարնիկների համագումարում։

Այժմ անհրաժեշտ է հիշել այդ գրույթի մասին, վոր ամբողջովին բխում է մեր մարքսիստական հասկացողությունից: Դեռ ավելին— մենք պետք է հիշենք այն մասին, վոր Լենինն յերբեք չէր քաշվում խարազանել այն գյուղացուն, վորը շահագործում էր դժվարությունները: «Այն գյուղացին—ասում է Լենինը—վորը խաբելով պետությանը, ամեն տեղ ուժեղացնելով ու առաջացնելով խաբեբայություն, թալան, սրիկայական արարմունքներ—ահա այդ գյուղացին սպեկուլյանտ է, կապիտալիստի զինակից, բանվոր դասակարգին թշնամի, շահագործող» (Լենին, 16-րդ հատոր, 352—353 եջ):

Լենինն ուներ ուժեղ և ճիշտ լեզու:

Յես կարծում եմ, ընկերներ, վոր կուլակության մասին մենք յերկար չպետք է խոսենք, վորովհետև նրա բախտն արդեն վճռված է մեզանում:

Համատարած կոլեկտիվացումն յերկրում հիմնականում 1932—33 թվերին ավարտելու վերաբերյալ Կենտկոմի վորոշումներից մեզ պետք է պարզ լինի, վոր կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հիման վրա մենք պետք է ամենամոտիկ ժամանակաշրջանում վերջնականապես ավարտենք համատարած կոլեկտիվացումը յեվ վերջնականապես վոչնչացնենք կուլակությունը վորպես դասակարգ մեր Հյուսիսային Կովկասում (*ծափեր*):

Յես պետք է մի քանի վերապահումներ անեմ ազգային մարզերի մասին: Մի շարք ազգային մարզեր սոցիալիստական տնտեսության վերակառուցման գործում դուրս են յեկել արդեն առաջին շարքերը, հասել են, իսկ մի քանիսն էլ անցել են յերկրամասի կոլեկտիվացման մակարդակը: Դրանց համար հարցը վճռված է: Բայց կան մի շարք ուրիշ ազգային մարզեր, վորտեղ դեռևս չեն ավարտել կոլեկտիվացումը հիմնականում: Բայց և այնպես նրանց համար էլ, ինչպես և ամբողջ յերկրամասի համար, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրները վճռողական են հանդիսանում: Մենք գիտենք, վոր այդ մարզերում կոլեկտիվացման ընթացքը կգնա այն ուղիով, վորով գնացել է մեր յերկրամասի մնացած ռայոնները, բայց շտապել, արագանալ, տեմպի հետևից ընկել—դա մեր քաղաքականությունը չէ: Դա կնշանակեր թերագնահատել դժվարությունները, ազգային կենսաձևի տնտեսության և կենցաղի առանձնահատկությունները: Դրա համար էլ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման լոզունգն այստեղ նույնպես հանդիսանում է հիմնական: Ամենամոտիկ ժամանակամիջոցում, մենք կազմակերպելով մասսաներին, ակտիվորեն լավացնելով և պրոպագանդ անելով մեր կոլտնտեսությունների հաջողությունները, ազգային մարզերի հարթավայրային ռայոններում էլ կգնանք այն ուղիով, վորով գնում ենք յերկրամասի հիմնական ռայոններում:

Բայց մենք մի շարք ազգային լեռնային ռայոններ ունենք: Այնտեղ գործն ուրիշ կերպ է դրված, այստեղ մենք հիմա յել անց ենք կացնում կուլակության վճռական սահմանափակման ու չքավորության և բատրակության համախմբման քաղաքականություն և նախապատրաստում ենք կոլեկտիվացումը, այսինքն կոոպերացումը, լեռնային անասնապահության խնդրի լուծումն և այլն:

Այսպես է մեր քաղաքականությունը յերկրամասի տարբեր ազգային ռայոնների նկատմամբ:

Յես ուզում եմ մի նկատողություն անել հատկապես Կուբանի յեվ կազակության մասին: Մենք խնդիր ենք դրել առաջին հերթին և ամենից առաջ մեքենացնել Կուբանի գյուղատնտեսությունը, մեքենացնել մեր կոլտնտեսական շինարարության այն մասը, վորտեղ այդ հարցը ավելի բարդ, ավելի դժվար է դրված, վորտեղից մենք մեր պետության ավելի շատ հաց և անհրաժեշտ մթերքներ կարող ենք տալ: Սակայն հիմա էլ ճիշտ չէր լինի ամբողջովին հանել այդ հարցը, ընդհակառակը, հարկավոր է պայքարել կազակության թերագնահատության դեմ, կոլտնտեսությունների, խորհրդների, մեր աշխատանքի ղեկավարության գործում նրան (կազակությանը) անբավարար ներգրավելու դեմ:

6. ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ, ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՃՈՒՄԸ

Բանվորները և կոլտնտեսական գյուղացիությունն ամբողջովին և կատարելապես ընդունեցին և ոժանդակում են մեր կուսակցության գըլխավոր գիծը անցկացնելուն, ամբողջովին և լիակատար ոժանդակում են հնգամյա պլանը 4 տարում կատարելու, ամբողջովին և կատարելապես ոժանդակում են կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների շինարարությանը և այդ հիման վրա կուլակության լիկվիդացման իբրև դասակարգի:

Մենք հավատացած ենք, վոր չկա մի բանվոր՝ թեկուզ ամենահետամնաց, չկա մի կոլտնտեսական՝ թեկուզ ամենահետամնաց և խավար, վորը չոժանդակի մեր քաղաքականությանը: Այդպիսիներն անկասկած չկան, վորովհետև ամեն մի բանվոր, ամեն մի կոլտնտեսական հասկանում է, վոր միայն այդ ճանապարհով, յերկրի ինդուստրացման ճանապարհով մեր տնտեսության վերակառուցման ճանապարհով կարելի յե հասնել լավ ապագայի: Միայն այդ ուղղությամբ են մեր յերկրի բանվորներն ու աշխատավորները տեսնում իրենց հեռանկարը և ահա բազմամիլիոն բանվորների յեվ կոլտնտեսականների այդ ոժանդակությունըն է, վոր ապահովեց մեր հաջողությունները:

Բանվորի ակտիվությունը, կոլտնտեսականի ակտիվությունն աճում է վիթխարի չափերով:

Բանվորների և կոլտնտեսականների վիթխարի մասսաներն ընդգրկվում են իսկական սոցմրցությամբ, իսկական հարվածայնությամբ: Յես արդեն ասացի, վոր այդ մեծ շարժումը տալիս է հսկայական արդյունքներ:

Այդ շարժումը հարկավոր է լրացնել բանվորական մասսաների հասարակական-քաղաքական վիթխարի աճումով:

Յեթե վերցնենք վերջին յերկու հասարակական-քաղաքական կամպանիներ—խորհուրդների և արհմիությունների վերընտրությունները (31 թ.), ապա մենք կնկատենք, վոր փաստորեն բոլոր աշխատավորները մասնակցել են այդ կամպանիաներին և կտեսնենք, վոր սոցիալիստական շինարարության ոգնության են գալիս նորանոր միլիոններ:

Բանվորուհիների աճն արտադրության մեջ հսկայական է, մի տարվա ընթացքում ավելի քան մեկ ու կես անգամ։ Յեթե վերցնենք կոլտնտեսությունները, ապա կտեսնենք, վոր վարչություններում կոլտնտեսուհիների թիվը կազմում է 20 տոկոս, ԿԱՖ-երում—60 տոկոս, տրակտորիստներ 14 տոկոս և այլն։

Սա ցույց է տալիս հսկայական առաջխաղացում, սա ցույց է տալիս, վոր պատմականորեն աշխատավորության ամենահետամնաց խավերը բարձրանում են և ակտիվ ու ստեղծագործող մասնակցություն ցույց տալիս սոցիալիստական շինարարությանը։

Յեթե մենք նայենք դեպի առանձին ազգությունները, ապա կըտեսնենք այստեղ ավելի մեծ առաջադիմություն, աշխատավորության նույն խավերի ավելի ակտիվ մասնակցություն մեր աշխատանքների ղեկավարության մեջ։

Յես նաև շատ համառոտ կանգ կառնեմ մեր աշխատավոր մասսաների այն ահագին կուլտուրական աճի վրա, վորն արտահայտվեց հիմնականում մեր յերկրամասի անգրագիտության վերացման մեջ, արտահայտվեց այն բանում, վոր մենք դարձանք հիմնականում վոչ միայն համատարած կոլեկտիվացման, այլ յեվ հիմնականում համատարած գրագիտության յերկրամաս։ Բայց բանն այն է, վոր մինչև անգամ այդ նվաճումները մեզ չեն բավարարում։ Զինվորական շրջանային կոնֆերենցիային հաղորդեցին այն մասին, վոր զորակոչիկների 30% անգրագետ են դուրս գալիս։ Սկզբում դա թվաց զարմանալի, անհավատալի։ Յերևաց, վոր նրանք այնտեղ հաշվում են նաև կիսագրագետներին։ Յեվ ճիշտ են անում։ Ներկայումս կիսագրագետներն ել մեզ համար անգրագետներ են։ Ներկայումս սոցիալիստական շինարարության բանակի, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, արդյունաբերության շինարարության խնդիրները պահանջում են վոչ թե կիսագրագետ, այլ քաղաքականապես և տեխնիկապես գրագետ մարդիկ։ Մեզ այլևս չի բավարարում այնպիսի գրագիտություն, յերբ մարդ ստորագրում է միայն իր ազգանունը և կարդում է ցուցակները։ Մեր առաջ կանգնած է կիսագրագիտությունը լրիվ վերացնելու, մտցրած ընդհանուր տարրական պարտադիր ուսումն ամրացնելու խնդիրը, վորն արդեն դառել է իրական գործ։ Մենք այս տարի մտցնում ենք յոթամյա ուսուցումը, մեզանում աճում են մասնագետների ահագին կադրերը—այդ բոլորն ասում են աշխատավոր մասսաների կուլտուրական աճի մեծագույն առաջխաղացման մասին։

Մի ֆաբրիկայում, վորտեղ կան 2,5—3 հազար բանվորներ, ինձ ասացին, վոր այնտեղ 500 բանթղթակիցներ կան։ Յես սկզբում չհավատացի և հարցնում եմ․ «բայց ի՞նչ են անում այդ բանթղթակիցները»։ Ասում են—գրում են։«Ի՞նչի մասին են գրում»։Ամեն ինչի մասին, ասում են, գրում են, իսկ ամենից շատ—տնտեսության։ Միայն դժբախտությունն այն է վոր, ասում են, չգիտենք վորտեղ տեղավորել նրանց բոլոր գրածները»։Դուք յերևակայեք, 2,5 հազար բանվորներ և նրանցից 500 մարդ համառորեն, շարունակ գրում են, հանդիսանում են թղթակիցներ։ Ապա մեզանից ամեն մեկին ստիպեք գրել։ Դժվարությամբ կհաջողվի։ Իսկ 2,5 հազար բանվորներից 500 մարդ համառորեն գրում են իրենց թերթերում։ Մի քանիսը գրում են վատ, մյուսները լավ, բայց դա այլ հարց է։

Յեթե դրա հետ միասին դուք հիշեք, վոր 1930 թվին կար 140 թերթ, իսկ 1931 թվին 633 թերթ, վոր կար 816 կինո, յեղավ 2333, վորոնցից 1688 գյուղում, վոր 4 հազար ռադիոկետերի փոխարեն գյուղում կա 26 հազար կետ, այն դեպքում հասկանալի կդառնա, թե ինչպիսի տեմպերով է ընթանում կուլտուրական աճը, գյուղի կուլտուրական մակարդակի առաջընթացումը։ Խավար գյուղում, վորը ճանապարհախանգարումների ժամանակ կտրված է ամբողջ աշխարհից, վորն ունի շրջիկ և կայուն կինո (յուրաքանչյուր գյուղխորհրդին մեկ ու կես կինո), ռադիո, այնտեղ իսկապես կազմվում է նոր հասարակություն, նոր կուլտուրա։

Աշխատավորության ակտիվության ահագին աճը, նրանց կուլտուրական աճը շատ ուժեղ դրին բանվորական մասսաների նյութական յեվ կուլտուր-կենցաղային սպասարկման բարձրացման հարցը։ Դա մեր սոցիալիստական շինարարության բաղադրիչ, անբաժան մասն է։ Ճիշտ է ընկեր Ստալինը, յերբ ասում է, վոր բանվորն անձնվիրաբար տալով սոցիալիստական շինարարության գործի համար իր եներգիան, իր ուժերը, իր բոլոր հնարավորությունները, իրավունք ունի լավ նյութական և կենցաղային պայմաններ պահանջելու։ Այդ հարցը կրկնակի սուր նշանակություն է ձեռք բերել մեզ համար և պահանջում է գործնական լուծում։

Մենք այս տարի յերկու անգամ ավելի յենք պայոկ տալիս, քան անցյալ տարի, բավական լայնացրինք հասարակական սննդի ցանցը։ Բայց և այնպես, կարելի յե բերել առանձին աղաղակող փաստեր, թե ինչպես է դրված վորոշ տեղերում մատակարարման և հասարակական սննդի գործը։ Հազար անգամ ճիշտ է Կենտրոնական Կոմիտեն, յերբ նա իր վերջին վորոշման մեջ դրել է «կենտրոնացած բաշխիչ սիստեմից ծավալված խորհրդային առևտրի սիստեմին անցնելու» խնդիրը։ Վորպեսզի ճիշտ կարողանանք գնահատել դրությունը, պետք է հիշել, վոր 1929 թվին յերկրամասում կային 42 հազար առևտրա-բաշխիչ կետեր, իսկ այժմ կա 12 հազար։ Այդ նեղ անցքից չեն կարող անցնել ամեն տարի, ամեն ամիս աճող ապրանքային մասսաները։ Ընդամենը պարզ է, վոր մենք չենք կարող կազմակերպել առևտուրը, մատակարարումը կենտրոնացման կարգով այն ահագին ծավալով, վորը պահանջում է մեր աճը, այն ել յերբ դեռ մենք փակում ենք մասնավոր շրջանառության, մասնավոր կուտակման բոլոր առուները, վոչնչացնում ենք կապիտալիստական տարրերի համար ամեն մի հնարավորություն—պահելու մասնավոր շուկան։

Դրա համար ել խորհրդային առևտրի հարցը—դա բանվոր դասակարգի կենցաղային դրության լավացման հիմնական հարցերից է։ Մատակարարման լավացման և խորհրդային առևտրի ծավալման հարցերի լուծումը հենց կախված է այն կապից, վոր հաստատվում է անմիջապես ձեռնարկության, պրոլետարական կազմակերպության և կոլտնտեսության և խորհտնտեսության միջև, կախված է հենց կոլտնտեսության առևտրից, վորը մենք կարգավորում ենք պլանի սահմաններում և նրանից դուրս։ Անհրաժեշտ է ստիպել մեր արդյունաբերական ձեռնարկություններին, խորհտնտեսություններին յեվ կոլտնտեսություններին առևտուր անել խորհրդային գների յեվ պլանների հիման վրա։ Դա ահագին նշանակություն կունենա վոչ միայն մատակարարման համար, այլև

կվճռի քաղաքի և գյուղի տնտեսական շրջանառության վերակազմության հսկայական հարցը սոցիալիստական շինարարության նոր շրջանում, ըստ վորում խորհրդային առևտրի ծավալումը կնշանակե, վոր մասնավոր շրջանառությունը վերջնականապես դուրս է քշվում: Ուրիշ ուղի գոյություն չունի:

Եվ մի հարց, վորը լինելով ամենայեական գործնական հարց; մեր շատ ձեռնարկությունների աշխատանքի համար հանդիսանում է խորհրդային առևտրի ծավալման առաջին քայլերից մեկը. դա այսպես կոչված ինքնամթերումների մասին է: Վորպեսզի ընկերները հասկանան այդ գործի իրական նշանակությունը, պետք է մեջ բերել մի քանի թվեր: Առնենք Միկոյանի անվան ֆաբրիկի փակ բաշխիչը, ինչ վոր ստանում են նրանք մատակարարման պլանով, ապակենտրոնացման մթերումների կարգով մթերել են ել 108 տոկոս: Հասարակական սննդի տրեստն իրեն տրվածների վրա մթերել է ել 67 տոկոս, ծխախոտագործարանի (ДГТФ) փակ բաշխիչն իրեն տվածների վրա մթերել է ել 174 տոկոս, Սելմաշը մթերել է միայն 20 տոկոս, Լենգործարանը միայն 17 տոկոս: Այ թե ինչ են մթերել: Պլանային մատակարարման կարգով այդ փակ բաշխիչներին հասնում է 10.000 ռուբլու կենդանական յուղ: Բացի դրանից, նրանք մթերել են 80 հազար ռուբլու: Նրանց բոլորովին պանիր չի հասնում, իսկ նրանք մթերել են 172.000 ռուբլու: Կենտրոնացած մատակարարման համաձայն նրանց միս և թռչուն տրված է 322 հազար ռուբլու, իսկ բացի դրանից, նրանք մթերել են 249 հազար ռուբլու և այլն, և այլն այսինքն մթերված է հենց այն, ինչ վոր ամենից ավելի անհրաժեշտ է սննդի, մատակարարման համար: Մինչդեռ պետք է նկատել, վոր շատ ձեռնարկություններ այդ տեսակետից չեն շարժվում:

Մյուս հարցը—դա կոմունալ և բնակարանային շինարարության մասին է: Բնակարանատարածության աճումով մենք դեռ չենք անցել մեր քաղաքների բնակչության աճից: Սակայն այդ ուղղությամբ ել կա ակնհայտ բեկում և պարզ յերևում է բնակարանային շինարարության ու կոմունալ սպասարկումը լավացնելու տեմպերի կրկնապատկումն ու յեռապատկումը:

Բանվորների կենցաղային սպասարկման լավացման և նյութական դրության հարցը—դա վոչ միայն մեր ձեռնարկությունների բանվորների դրության լավացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման հարց է, այլ նա ունի և միջազգային նշանակություն այն իմաստով, վոր մեր շինարարության ազդեցությունը միջազգային պրոլետարական շարժման վրա զգալի չափով վորոշվում է բանվորների նյութական դրության բարձրացումով: Ներկայումս հենց այդ հարցի շուրջն է ամենից շատ քննարկվում ԽՍՀՄ դրությունը, սոցիալիստական շինարարության արդյունքների գնահատումը: Այն, վոր մենք արդյունաբերական տեսակետից ունենք ահագին հաղթանակներ—դա դժվար են ժխտում նույնիսկ մեր յերդվյալ թշնամիները և նրանք փորձում են պրովոկացիա անել բանվորի նյութական դրության մասին խորհրդային պայմաններում:

Դուք ըստ յերևույթին բոլորդ կարդացել եք «Պրավդայում» զետեղված Բերնարդ Շոուի և Ե. Սինկլերի հոդվածները: Ե. Սինկլերի հոդվածն «ռուսական ուղու» մասին փայլուն, սրամիտ հոդված է ուղղված

Կաուցկու դեմ: Կաուցկին պատասխանելով այդ հոդվածին, գրում է հետևյալը—

—«Յեթե մենք (սոցիալ-դեմոկրատները, սոցիալ-ֆաշիստները. Բ. Շ.) մինչև այժմ համամիտ եյինք այն համոզմունքում, վոր Ռուսաստանը դիկտատուրայի հիման վրա չի կարող տնտեսապես առողջ լինել և վոր ժողովրդական մասսան չի կարող այնտեղ հասնել տանելի գոյության, ապա այժմ ընկերներն այն տեսակետն են պաշտպանում, վոր դա Ռուսաստանում ամենևին չի բացասվում, այլ միանգամայն հնարավոր է» (Կ. Կաուցկի, «Գեզելշաֆտի» նոյեմբերյան համարը):

Սոցիալ-դեմոկրատիայի մեջ և նրան մոտ շրջաններում, մասնավորապես Սինկլերը մեր հաջողություններին տալիս է ուրիշ գնահատական: Ծաղրելով Կաուցկուն, Սինկլերը համեմատում է նրան ֆերմերի հետ, վորը պտտվելով ուղտի (Խ. Միության շինարարության հաջողությունների. Բ. Շ.) շուրջը, շոշափելով նրան, հայտարարում է. «Վոչ, այդպիսի կենդանի չի կարող լինել»: Կաուցկին պատասխանելով Սինկլերին, ասում է. «Մենք բոլորս լավ գիտենք, վոր դա միայն մորթի յե, վոր ձգված է վոսկորների վրա առանց մսի և արյան»: Բայց վոչ միայն Սինկլերի դեմ է գրում Կաուցկին այդ հոդվածը: Նա այդ գրում է նույնպես և Ոտտո Բաուերի—ավստրո-մարքսիզմի ղեկավարներից մեկի դեմ: Դուք գիտեք, վոր վոչ Բերնարդ Շոուն, վոչ Սինկլերը կոմունիստներ չեն: Դեռ ավելին—Բաուերը, վոր միշտ հանդիսացել է մեր կուսակցության, մեր սոցիալիստական շինարարության ամենակատաղի թշնամին, Բաուերը մեր թշնամին է, վորը հաշվի յե առնում բանվորների և մանր բուրժուական մասսաների ձախացման փոխվող դրությունը: Նա գրում է. «Հնգամյա պլանի ներկա յերրորդ տարին մեծագույն ջանքերի տարի յե: Դրա համար յերկյուղ կար, վոր հենց այդ տարին կպահանջե ամենածանր զրկանքներ, ուժերի ամենածանր լարում: Բայց իրապես բուրժուական մամուլի Մոսկովյան թղթակիցները հաղորդում են, վոր հատկապես ընկ. Ստալինի հուլիսյան ճառից հետո քաղաքականության մեջ յեղած փոփոխություններից սկսած, վորոնք կետ առ կետ ի նկատի յեն առնում իմ գրքում պարունակած քննադատությունը, այդ փոփոխություններից սկսած կյանքը Ռուսաստանում հենց այս տարի սկսել է զգալի լավանալ» (Ոտտո Բաուեր. «Բամպֆում» տպված հոդվածը. դեկտեմբեր, 1931 թիվ):

Այդ դիսկուսիան, այդ բանավեճը տեղի յե ունենում վոչ միայն վերևում, սոցիալ դեմոկրատիայի տեսական շրջաններում, նա տեղի յե ունենում բանվորական և աշխատավորական ամենալայն մասսաներում, արևմտյան կապիտալիստական յերկրների քաղաքների մասսաներում: Մոսկվայի բանվոր Ֆիլիպովի ընտանիքի կյանքի և կենցաղի նկարագրության շուրջն սկսված դիսկուսիայում, քննարկվում եր ամենալայն մասսաների կողմից սոցիալիզմի շինարարության, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հարցը, վոչ միայն առաջավոր պրոլետարներին, այլ և նույնիսկ բանվորական ամենահետամնաց խավերին և, ինչպես անվանում են, քաղքենի, քաղաքի մանր բուրժուական տարրերին ամենամատչելի, ամենահասկանալի ձևով:

Կենտկոմի վորոշումը—բարելավել աշխատավորության նյութական—կենցաղային դրությունն յերկրորդ հնգամյակի վերջում 2—3

անգամ ավելի, համեմատած առաջին հնգամյակի վերջին տարվան, ունի ահագին, միջազգային պրոլետարական հեղափոխության համար. զորահավաքող նշանակություն: Բայց այդ լոզունգը վոչ միայն պետք ե տալ, այլ պետք ե իսկապես իրագործել նրան:

Շնորհիվ նրան, վոր մեր կուսակցությունը լրջորեն ձեռնամուխ յեղավ այդ հարցերին, չամաչելով սև աշխատանքից, չամաչելով կենցաղային մանրունքներից—բանվոր դասակարգը և կոլտնտեսական գյուղացիությունը տեսնում են, վոր այն բարելավումը, վորը կա—դա միայն սկիզբն ե բանվորական և կոլտնտեսական մասսաների նյութական բարեկեցության արագ աճման: Դա հսկայական նշանակություն ունի բանվոր դասակարգի համար, նրան վստահություն և հնարավորություն ե տալիս ել ավելի մեծ եներգիայով պայքարել սոցիալիզմի շինարարության համար:

Այս բաժինը վերջացնելու համար մի անգամ ել պետք ե ընդգծել աշխատավորության նյութական դրության հարցի անխզելի կապվածությունն աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, վորը հանդիսանում ե մեզ համար հիմնական հարց:

Դրա հետ միասին մեր առաջ կանգնած են հետևյալ հարցերը—աշխատանքի ղեկավարության կազմակերպության գործում նախ և առաջ ինչ ել վոր լինի, ամեն տեսակետից և բոլոր ասպարեզներում բարելավել մեր աշխատանքի վորակը: Յերկրորդը—անհրաժեշտ ե ղեկավարությունը հասցնել մինչեվ վերջին օղակը, մինչև աշխատանքի վայրը, մինչև ստանոկը, կոլտնտեսությունը, բրիգադը: Ռայոնների ամրացումն արդեն մեզ համար բավական չե, ռայոններն ամրացել են, դարձել են քաղաքական, տնտեսական իսկական կենտրոններ, սոցիալիստական շինարարության օղակ: Մենք պետք ե ավելի ներքև իջնենք: Յերրորդ—մենք պետք ե վճռականապես լավացնենք մեր մասսայական կազմակերպությունների աշխատանքը, պետք ե ճիշտ դասավորենք մարդկանց յեվ ստուգենք մեր վորոշումների կատարումը վերևից մինչեվ ներքև:

Ահա այս ուղղությամբ պետք ե կազմակերպվի աշխատանքը, վորպեսզի ամրապնդենք գործնականում մեր տնտեսական աշխատանքի բարելավումները:

7. ՀԱՆՈՒՆ ԼԵՆԻՆԻԶՄԻ, ՀԱՆՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ

Մեր հաջողությունների վճռական պայման հանդիսանում են կուսակցության գլխավոր գծի կիրառումը, պայքար յերկու ֆրոնտում, պայքար կուսակցության գլխավոր գծից շեղվող աջ և «ձախ» թեքումների դեմ:

Անցած ժամանակաշրջանում մենք ունենք դասակարգային պայքարի նոր ձևեր և կուսակցության գծից շեղվող մեզ ծանոթ նույն թեքումների արտահայտության նոր ձևեր:

Շատ դեպքերում գործնական աշխատանքի սխալները, շինարարության նոր ետապում հարցերը ճիշտ վորոշելու անկարողությունը բղխում են նրանից վոր չեն հասկանում, թե մտնելով սոցիալիզմի ժամանակաշրջանը, մենք դեռևս դուրս չենք յեկել նեպի վերջին ժամանակաշրջանից, վոր սոցիալիզմի առաջին ժամանակամիջոցը—դա

նեպի վերջին ժամանակաշրջանն ե: Մարքս—լենինյան այդ հասկացողությունը չի հաջողվում ամեն անգամ ճիշտ կիրառել տեղերում:

Յես մի զույգ որինակով ցույց կտամ այդ գործի դժվարությունը, կուսակցության ղեկավարության դժվարությունն ու բարդությունը շինարարության ներկա ետապում:

Վերցնենք տնտեսհաշվարկը, վորի մասին վերևը խոսք յեղավ: Յերբ մենք արձակեցինք սոցիալիզմի շրջանը մտնելու մասին լոզունգը, ապա շատերը հասկացան այդ, վոր իբր թե մենք հրաժարվում ենք տնտեսհաշվարկից և բացառապես կենտրոնացած պլանավորման ենք անցնում: Միայն գործնականում կոփվեց տնտեսհաշվարկը, իր նոր աստիճանի վրա, կենտրոնացած տնտեսական պլանավորման հետ կապակցելու նոր ձևը: Մեզ համար այդ ներկայումս բոլորովին հասկանալի յե, մենք դրանում վոչ մի հակասություն չենք տեսնում, մինչդեռ մի քանի ժամանակ սրանից առաջ այն հարցը, թե ինչպես կապակցել տնտեսհաշվարկը պլանի հետ, շատ շատերի համար հանդիսանում եր փորձության քար:

Վերցնենք ուրիշ խնդիր—սոցմրցություն յեվ նյութական շահագրգռվածություն: Համարում եյին այսպես, քանի վոր սոցիալիզմի շրջանն ե, քանի վոր գոյություն ունի սոցմրցություն, ուրեմն, վոչ մի նյութական շահագրգռվածություն: Մինչդեռ պրակտիկան տվեց տնտեսհաշվարկային բրիգադա, վորն ստեղծված ե շինարարության ներկա ետապի պահանջների համաձայն—այն ե՝ նյութական շահագրգռվածության կապակցումը սոցմրցության և հարվածայնության հետ:

Վերցնենք մի ուրիշը. մենաշնորհը հացամթերումների ասպարիզում յեվ կենտրոնացած մատակարարումը—մի կողմից, իսկ մյուս կողմից խորհրդային առևտրի ծավալումը: Այդ չեր ըմբռնվում մի քանիսի կողմից, ասում եյին, հնարավոր չե այդ «հակասությունը» հաղթահարել, մինչդեռ պրակտիկան գտավ հարցի հիանալի լուծում խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների առևտրի ծավալումով, պլանի հիման վրա և ցույց տվավ, վոր այստեղ «հակասությունը» միայն յերևույթական ե, այլ վոչ իրական:

Կարելի յե ասել նաև գործավարձի մասին, վորը հսկայական դրական հետևանք ե տվել, վորը սակայն մի շարք դեպքերում տվել ե նաև վրիպումներ: Որինակ, ճակնդեղի քանդումը ցույց տվավ, վոր քանդել են միայն կեսը, հարկ յեղավ քանդելու յերկրորդ անգամ, վորովհետև գործավարձը ցենտներներով չեր հաշվված: Այդպիսով, գործավարձը վորոշ չափով հակասության մեջ մտավ աշխատանքի վորակի, տնտեսական գործնեյության հետևանքի հետ: Այն միտքը, հարցի այն վորոշումը, վոր բրիգադան պետք ե ամրացնել հողամասի և վճարել նրան համաձայն հանձնած յուրաքանչյուր ցենտներ արտադրանքի, մեջտեղից վերացնում ե այդ դժվարությունը:

Կարելի յե թվել մի շարք այլ սխալներ, կապված հատկապես հարցի ճիշտ, գործնական լուծումը շոշափելու անկարողության խնդրի հետ, կուսակցության գլխավոր գծի հիման վրա, նեպի շրջանից սոցիալիզմի շրջանն անցնելու այն յուրահատուկ ետապում, վոր մենք ապրում ենք:

Կարող ենք արդյոք ասել, վոր դրա հետ կապված բոլոր սխալները—լոկ սխալներ են: Վոչ, շատ դեպքերում նրանք կապվում են

քաղաքական վորոշ մոտեցման հետ, կուսակցության գլխավոր գծից թեքվելու հետ:

Այդպիսի սխալների կողքին մենք ունենք թե աջ և թե «ձախ» ոպորտունիզմի արտահայտության անարգել թվով փաստեր: Յես ձեզ հիշեցնում եմ նրանցից միայն մի քանիսը նրա համար, վոր կրկնում եմ, կուսակցության գլխավոր գծի ճիշտ իրականացման հարցը—դա վճռական հարց ե թե աշխատանքի կազմակերպման գործում և թե տնտեսական շինարարության արդյունքներում:

Բուրժուական ձգտումները կոլտնտեսություններում, կուլակային ազդեցությունը, հացամթերումներին դիմադրելը, իրենց շահերի տեղայնական հակադրությունը պետական շահերին, ինչպես դա տեղի ուներ «Շաքարամիության» մեջ, այդ բոլորը հայտնի խտացած աջ ոպորտունիզմ ե: Չկամենալ անցկացնել հացամթերումները—մենք ուրիշ կերպ չենք անվանի, քան թե խտացած աջ ոպորտունիզմ, և դա ըստ եյության ճիշտ ե, վորովհետև հակադրելով իր ձեռնարկությունը, իր կոլտնտեսական շահերը պետականին, նրանք ավելի բարձր գերադասել պետական շահերից—դա անկասկած իսկական ոպորտունիստական թեքում ե կուսակցության գծից, դա բուրժուական ձգտումների թափանցման հետևանք ե այս կամ այն կազմակերպության աշխատանքում:

Աջ ոպորտունիստական տատանումների յերկրորդ բնորոշ օրինակը—դա խուճապն ե կոլտնտեսական շինարարության դժվարությունների առաջ, այն թերությունների առաջ, վորոնց մասին միանգամայն խիստ զեկուցեցի: Վոչ այլ ինչ ե, յեթե վոչ խուճապ դժվարությունների առաջ, յերբ մի քանի ընկերներ փորձում են հարցը լուծել կոլտնտեսությունները այն չափով մանրացնելով, յերբ մինչև անգամ արտադրության միջոցները բաժանվեն յուրաքանչյուր կոլտնտեսականին՝ այսինքն փաստորեն վոչնչացվեն խոշոր համայնացրած տնտեսությունը, կամ ժամանավոր ապրանքաշրջանառության հարցի այնպիսի դրույթով, վորը գործնականում բաց կաներ այն առուները, վորոնցով անխուսափելի կերպով կթափանցի կապիտալիզմը, անխուսափելի կերպով կվերահաստատվի այն դասակարգը, վորին մենք ջախջախեցինք:

Տնտեսվարների կողմից փորձեր են լինում իջեցնել մեր ձեռնարկությունների արտադրական պլանները սարքավորման պակասության, ներմուծման, վատ մատակարարման և այլ պատճառաբանություններով: Այդ տրամադրությունները մեզանում դեռևս բավական ուժեղ են: Շատերն այժմ փորձում են պլանների թերակատարումը բացատրել օբյեկտիվ պատճառներով, նրանցով արդարացնել արդյունաբերության ծավալման տեմպերի փաստացի իջեցումը: Ըստ վորում փոխանակ բոլշևիկորեն հաղթահարելու յեղած նեղ տեղերը, նրանք փորձում են պլանն իջեցնել և այդպիսով կասեցնել սոցիալիստական շինարարության տեմպերը: Փորձել բացատրել տնտեսհաշվարկը վորպես հրաժարում պլանից, «նեպմանական վոգին» կոոպերատիվ և տնտեսական կազմակերպությունների ղեկավարման մեջ—այդ բոլորն աջ ոպորտունիզմի արտահայտություն են գործնականում, վորի դեմ մենք պայքարում ենք և անխնա պիտի պայքարենք:

Մեր գիծը—ծավալուն հարձակման, սոցիալիստական շինարարության հաղթանակի, աջ յեվ «ձախ» տրամադրությունների դեմ պայքարելու գիծ ե, վորտեղ յեվ ինչպես վոր նրանք ծագելու լինեն:

«Ձախ» թեքումներն են—կոլտնտեսությունների իդեալականացումը, կոլտնտեսականների դասումը սոցիալիստական հասարակության աշխատողների շարքին, և իբրև դրա հետևանք—հացի պայքարից հրաժարումը և բոլոր պլանային սկզբունքների քայքայումը—թունդ աջ պրակտիկա յեն:

Վարչական ձևով ղեկավարելը շատ տարածված խեղաթյուրում ե: Կարծողներ կան, վոր միայն հրամանով, առանց մասսաներին կազմակերպելու մենք կարող ենք վճռել սոցիալիստական շինարարության խնդիրները:

Մենք շատ հարուստ նյութ ունենք նման յերևույթների մասին—կոլեկտիվացման տոկոսների հետևից ընկնելը, «աշխատանքի գները», կոլտնտեսությունների խորհտնտեսացման, կոլտնտեսականների բանվորացման փորձերը, «դեդանտամոլությունը», խոշոր կոլտնտեսությունից չցանկանալ նահանջել, «ձախլիկ» հավասարեցումը ձեռնարկություններում, շեղումները դպրոցական շինարարության ասպարեզում—այսպես կոչված «նախագծային» մեթոդը և այլն:

Այնուհետև—կան մեծապետական շովինիզմի արտահայտություններ ազգային մարզերում, կոլեկտիվացման պատրվակով փորձել սեղմել ազգային—կենցաղային առանձնահատկությունները կամ ինքնափակվել: Այս բոլոր փաստերն այս կամ այն ձևով կամ աստիճանով տեղի ունեն ազգային կազմակերպություններում:

Առանձին ե դրված տեղամոլության հարցը. յերբեմն համաձայնվելով վորոշումների հետ, իրենք—«հանդարտ խղճով», տեղական շահերից յելնելով, տապալում են այդ վորոշումները: Այդ վերջին խեղաթյուրումների նկատմամբ, յես չեմ փորձում բնորոշել ինչպիսի թեքում ե այդ, յես չեմ վորակելու այն, սակայն վոր այդ գիծը բացարձակ հակակուսակցական ե—բոլորովին պարզ ե:

Գործնական սխալներն անխուսափելիորեն կապված են տեսության սխալներին և ընդհակառակը: Որինակ, Գելենջիկի կուրսերում քննարկվող իբր թե տեսական հարցը—դասակարգ ե արդյոք կոլտնտեսական գյուղացին, թե վոչ—շատ սերտ կապված ե իսկական գործնականին: Մի մասն ասում եր, վոր կոլտնտեսականները սոցիալիստական հասարակության աշխատավորներ են, մյուս մասն ասում եր, վոր կոլտնտեսական գյուղացիությունն այնպիսի դասակարգ ե, ինչպես առաջ: Այդ բոլորը լոկ խոսակցություն ե, փոխանակ ճիշտ կուսակցական վորոշում տալու, վոր կոլտնտեսական գյուղացին դեռ մնում ե վորպես դասակարգ, ունի մի շարք դասակարգային տարբերություններ, չնայած տեղի յեն ունեցել արմատական փոփոխություններ այդ դասակարգի հիմքում, տնտեսության մեջ, վոր այդ դասակարգի վերացման գործողությունն այնքան արագ ե ընթանում, վոր մեր կուսակցության կենտկոմն այդ գործողության հետևյալ ժամկետը վորոշեց—յերկրորդ հնգամյակում վոչնչացնել դասակարգային տարբերությունները:

Այս բոլոր տեսական սխալներն անկասկած ունեցել են իրենց հետևանքները հացամթերումներում, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման հարցերում, նրանց պրոլետարական ղեկավարության նշանակության թերագնահատման մեջ և այլն:

Յես չեմ խոսում արդեն Սլուցկու վերաբերյալ ընկեր Ստալինի

նամակի մասին, վորը մերկացրեց տրոցկիստական ուղղակի մաքսանենգություն և առանձին ընկերների սխալները կուսակցության պատմության կարևորագույն հարցերի գնահատման գործում, ինչպիսիքն են՝ 1905 թվի հեղափոխության մասին, բուրժուական հեղափոխության սոցիալիստական վերաճման լենինյան հասկացողության մասին, իմպերիալիզմի խնդիրների մասին, վորը Ռ. Լյուկսենբուրգի կողմից մեկնաբանված է մենշևիկյան վոգով և զենք է տվել «կազմակերպված կապիտալիզմի», «կապիտալիզմի ինքնուրույն լիկվիդացիայի» կողմնակիցների ձեռքին և այլն: Պետք է նկատել, վոր այդ նամակի կապակցությամբ, մեր դասախոսների նշանակալից մասը բացատրեց իր սխալները և խեղաթյուրումները, վորոնք թույլ եյին տրված դասախոսություններում և հոդվածներում:

Յերբ մենք ավելի մոտեցանք այդ հարցերին, պետք է ասել, ամաչեցինք նրա համար, վոր իր ժամանակին չեյինք զբաղվել այդ հարցերով և չեյինք տեսել, վոր մի քանի պրոֆեսորներ ապացուցում են, վոր Հյուսիսային Կովկասի կուլակությունը ցարիզմի ժամանակաշրջանում յեղել է ամենաճնշված դասը—ամբողջովին հետևել է մեզ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ և համարյա մինչև մեր որերը: Այսպիսի քաղաքական սխալներ մտցվում են մեր ակտիվի, լայն մասսաների գլուխներն և անկասկած սխալ են կողմնորոշում գործնական աշխատանքում:

Մենք ուղղեցինք մեր մի շարք կազմակերպություններին: Ամենից առաջ մենք ուղղեցինք մի շարք կազմակերպությունների աշխատանքների, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման, ցանքի և ուրիշ կամպանիաների խնդիրներում: Հարկ յեղավ նույնիսկ կուսակցական ներգործության միջոցներ ձեռք առնել, ստիպելու համար մեր կազմակերպություններին ապահովելու պետական շահերը կոլտնտեսություններում: Պետք յեղավ ուղղել մի խոշորագույն կուսկազմակերպություն—Շախտի, պետք յեղավ փոխել ղեկավարությունը, վորը վերցրել եր մերկ վարչականության գիծ և փոխարինում եր տնտեսական և այլն կազմակերպություններին: Վերջին ժամանակներս պետք յեղավ ուղղելու Տագանրոգի կազմակերպությունը, վորն անհրաժեշտ դասեր չվերցրեց վորոշումից, «Կարմիր Կատելշչիկ» գործարանի մասին յեղած Յերկրկոմի վորոշումից, ինքնաքննադատության ծավալման, բանգյուղթղթակցական շարժման խնդիրներում և այլն: Կուսակցության Յերկրային Կոմիտեն հավատացած է, վոր այդ դրական հետևանքներ տվեց և Տագանրոգի կազմակերպությունը, վորը ճիշտ է անցկացնում կուսակցության գլխավոր գիծը և վորը սակայն չի կարողացել իր առանձին ողակներում ապահովել ինքնաքննադատության լոզունգի ճիշտ կիրառումը—այդ ուղղումներից հետևություն կանի և համապատասխան դասեր կվերցնի:

Մենք ուղղեցինք Յեյսկու կազմակերպությունն այն կապակցությամբ, վոր այստեղ վարչական ծռում եր կազմակերպված (աշխատանքային գնդեր և այլն):

Պետք է նկատել, թեև այդ մեծ մասամբ վերաբերում է Յերկրային Վերահսկիչ Հանձնաժողովին, վոր մենք ունենք առանձին կուսկազմակերպությունների ղեկավարության ուղղակի քայքայման փաստեր: Վերցրեք Սոչու, Սևերսկու գործը և այլն, վորը ցույց է տալիս, թե մեր

ղեկավարության առանձին բջիջները, կորցնելով ուղիղ գիծը, յենթակա յեղան քայքայման այս կամ այն չափով:

Պայքարն այս բոլոր առանձին յերևույթների դեմ, ինչպես գործնականում, նույնպես և թեորիայի ասպարեզում, հաստատակամ կերպով է տարված Յերկրային Կոմիտեյի կողմից:

Դրա հետ միասին, պետք է ասել, վոր Հյուսիսային Կովկասի կազմակերպությունը, խորտակելով հակահեղափոխական տրոցկիզմը և աջ ոպոզիցիան, բոլշևիկորեն պայքարեց կուսակցության գլխավոր գծի համար, ընդդեմ ամեն տեսակի շեղումների, ընդդեմ ամեն տեսակի կոնտրաբանդի, ընդդեմ ամենափոքր հաշտվողականության կուսակցության գլխավոր գծից շեղումների և դրա հետևանքը յեղավ այն, վոր մենք հաջողություններ ունեցանք սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում, կուսկազմակերպություններն ուժեղացան և համախմբվեցին:

Հյուսիսային Կովկասի յերկրային կազմակերպությունը հասցնելով կուսակցության անդամների թիվը մի տարում 130 հազարից 200 հազարի, ունենալով կոմյերիտական ահագին կազմակերպություն—մոտ 400 հազար մարդ—կարողացել է բոլշևիկաբար պայքարել կուսակցության գլխավոր գծի համար, կարողացել է գործնականում իրականացնել սոցիալիստական շինարարության գործը:

Հիմնական յեզրակացությունը, ինչ վոր խոսեցի յես մեր աշխատանքի թերությունների և սխալների մասին—հիմնական յեզրակացությունը մեր կուսկազմակերպության համար այն է, վոր մենք պետք է համառորեն աշխատենք մեր շարքերի դաստիարակության, մարքսիզմի տիրապետության, լենինիզմի տիրապետության վրա: Մենք պետք է ուսումնասիրենք Լենինին վոչ թե ցիտատներով, վոչ թե պոկած ֆրազներով (խոսքերով), մենք պետք է լենինիզմի բուն եյությունը տիրապետենք իսկական կերպով և միայն դա յե յերաշխիք այն բանի, վոր սխալներն ավելի պակաս կլինեն, վոր մենք ավելի շատ և ավելի լավ կապահովենք կուսակցության գլխավոր գիծը:

Այդ ուղղությամբ կոչ է անում ընկեր Ստալինի նամակը, կյանքը պահանջում է մեր շարքերի կուսակցական-քաղաքական մակարդակի վճռական բարձրացում:

Ց. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Յես միայն համառոտ կերպով կանգ կառնեմ այն բանի վրա, թե ինչ հնարավորություններ է տալիս մեզ յերեկվա և այսորվա որն ապագայի նախագծումների համար, թե մեր ներկա աշխատանքների արդյունքներն ինչ են թույլատրում պլանավորելու մոտակա ժամանակամիջոցի և յերկրորդ հնգամյակի համար:

Մենք բոլոր հիմքերն ունենք դնելու 1932 թվին արդյունաբերության ընդհանուր արտադրանքի բարձրացման խնդիրը 52 տոկոս, ընդարձակելու ցանքատարածությունը 1 միլիոն հեկտարից ավելի:

Մենք գիտենք, վոր ցանքի կամպանիան դժվար է լինելու, բայց գիտենք, վոր կազմակերպված ենք ավելի քան առաջ, վոր մենք ամ-

բացել ենք կոլտնտեսական և խորհտնտեսական ասպարեզում և կկարողանանք լուծել այդ մեծ խնդիրները։ Մենք մեր առաջ խնդիր ենք դնում ավարտել ամբողջ գյուղատնտեսության վերակառուցումն և նրա մեքենայացումը տեխնիկայի վերջին նվաճումների հիման վրա, լուծել անասնապահական խնդիրը սոցիալիստական վերակառուցման հիման վրա, իսկապես տիրապետել տեխնիկական բույսերին։

1932 թիվը պետք է հանդիսանա մեզ համար նաև յերկրորդ հընգամյակի պատրաստվելու տարի։

Մենք չենք կարող թույլ տալ այն յետամնացությունը, վորը գոյություն ունի մեզանում հետախուզական, հանքահորերի պատրաստման, փորման և այլ աշխատանքներում։ Յեթե այդ ուղղությամբ մենք կորցնենք այս տարին, ապա հաջորդ հնգամյակում այդ կատարել չենք կարող։

Իսկ մենք խնդիր ենք դնում յերկրորդ հնգամյակին, վճռապես շրջել յերկրամասը դեպի արդյունաբերությունը, առաջ շարժել յերկրամասը վորպես մեր յերկրի վճռական արդյունաբերական յերկրամասերից մեկը։

Փոխանակ միութենական հիմնական ներդրումների թվին 3 տոկոս ավելացնելու, մենք պետք է ձգտենք կրկնապատկել այդ ներդրումներն արդյունաբերության մեջ։ Կան բոլոր հիմքերը նրա համար, վոր Ուրալ-Սիբիրյան պրոբլեմի լուծումից հետո, Լենինգրադի, Մոսկվայի մարզերի, Դոնբասի արդյունաբերության հզորության ամրացումից հետո Հյուսիսային Կովկասը դարձնենք մեր Միության առաջավոր, արդյունաբերական յերկրամասերից մեկը։

Բայց դրա համար մենք այժմ անմիջապես պետք է սկսենք համառ աշխատել արդյունաբերության մեջ, հետևյալ հնգամյակի նախապատրաստության վրա։

Մինչև այժմ ազգային մարզերում մենք գնում եյինք շոշափելով, փնտրում եյինք նրանց արդյունաբերության զարգացման հնարավորություններն և ուղիները։ Այժմ կարելի յե ասել՝ մեր յերկրամասի ազգային մարզերը պետք է տան յերկրին արդյունաբերական հարստություններ, վորովհետև նախապատրաստական շրջանն ավարտված է, մենք պետք է իրացնենք յեղած հնարավորությունները։

Մենք պետք է միևնույն ժամանակ ապահովենք յերկրամասի զարգացումը, վորպես գյուղատնտեսական հումույթ և պարենամթերք հայթայթող վճռական ռայոններից մեկը։

Յերկրորդ հնգամյակը պետք է տա մեր պարենային և սպառողական ռեսուրսների վիթխարի աճում։

Յերկրորդ հնգամյակում մենք պետք է տանք յերկրին յերկու անգամ ավելի հաց, քան այս տարի, 10 անգամ ավելի միս, 2—3 անգամ ավելացնենք մեր աշխատավոր մասսաների բարեկեցությունը։ Մենք պետք է նոր յերկաթուղիներ անցկացնենք, պետք է կառուցենք Մանիչի նավարկելի ծովային ջրանցքը, վորովհետև դա բաց է անում ահագին հնարավորություններ վոչ միայն յերկրամասի, այլև ամբողջ յերկրի արտադրական ուժերի ծավալման գործում։ Դա յե մեր բոլշևիկյան ծրագիրը մոտակա ժամանակաշրջանի, յերկրորդ հնգամյակի համար։

9. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Խոսելով մեր ներքին գործերի, մեր աշխատանքի մասին, մենք մի րոպե անգամ չենք կարող մոռանալ կապիտալիստական շրջափակման մասին։ Ներկայումս կապիտալիստական շրջափակման հարցը ձեռք է բերում հատուկ սրություն։ Կապիտալիստական ճգնաժամը, վոր շարունակվում է ավելի քան 2 և կես տարի և կապիտալիստական վըճռական յերկրներն 30 տարով յետ է շպրտել, ընդգրկել է բոլոր յերկրները, վորոնց թվում և Ֆրանսիան, այդ ճգնաժամն ուրիշ յելք չունի, բացի համաշխարհային սպանդանոցից։

Մենք չենք նկատում ապրանքների միլիարդավոր զանգվածների սպառման նշաններ, վորոնք (ապրանքները) խեղդում են կապիտալիստական աշխարհին։ Ընդհակառակը, սովի, աղքատության և գործազրկության աճման հետ միասին ապրանքների գերարտադրությունը շարունակում է աճել։ Ընդհակառակը, շարունակվում է համաշխարհային ճգնաժամի խորացումը։

Կապիտալիզմն ուրիշ յելք չունի, քան թե փորձել զենքով լուծել հարցն ի հաշիվ ավելի թույլերի։ Յեվ մենք գիտենք, վոր Ճապոնիան, վոր նույնպես ապրում է ծանրագույն ճգնաժամ, սկսել է լուծել իր համար այդ հարցը Չինաստանում հենց զենքի ուժով։

Ահա ինչու մենք պետք է պարզ տեսնենք, վոր կապիտալիզմի ճգնաժամն անխուսափելիորեն մղում է դեպի նոր համաշխարհային սպանդանոց։ Մենք իհարկե, չգիտենք, թե ինչպես և յերբ վերջնականապես կբռնկի հրդեհը. արդյոք իմպերիալիստներն ավելի առաջ կծեծկեն իրար, կամ թե նրանք կփորձեն լուծել ճգնաժամը մեր հաշվին—բայց պարզ է, վոր միջազգային դրությունը քանի գնում, ավելի յե սպառնում մեզ։

Բացի այդ, ճգնաժամը մերկացրեց «կազմակերպված կապիտալիզմի» տեսությունը (թեորիան), ճգնաժամը մերկացրեց բանվորական լայն մասսաների առաջ «սոցիալիզմ ներաճելու, սոցիալական հաշտության» տեսությունը, մերկացրեց «վերջին» իմպերիալիստական պատերազմի մասին յեղած խոսակցությունները։ Աշխատավորության լայն մասսաների համար ակներև յեղավ նոր համաշխարհային պատերազմի անխուսափելիությունը։ Հենց ճգնաժամը, սրելով կապիտալիզմի բոլոր ներքին հակասությունները, մերկացնում է սոցիալ-ֆաշիստական դեմագոգիան և սրում է պրոլետարիատի պայքարը կապիտալիզմի դեմ։ Դա նույնպես մղում է համաշխարհային իմպերիալիզմին պատերազմական արկածախնդրության, ներքին հարցերն արտաքին իմպերիալիստական պատերազմով լուծելու փորձերին։

Մեր աճն ապացուցելով սոցիալիզմի կառուցման իրական լինելը նույնիսկ իր ժամանակին կապիտալիզմի հետամնաց յերկրներից մեկում, ցույց է տալիս, վոր հնարավոր է աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի սիստեմատիկ բարձրացումը համաշխարհային ընդհանուր ճգնաժամի պայմաններում։ Անկասկած է, վոր Խորհրդային Միությունը ներկայումս ամենապոպուլյար քննարկման նյութ է վոչ միայն բանվորների համար, այլև ճգնաժամից քայքայվող կապիտալիստական յերկրների մանր-բուրժուական մասսաների համար։ Առաջին անգամ մենք նվաճեցինք ամենալայն մասսաների հա-

մակրանքը Հոկտեմբերյան հեղափոխության որերին, այժմ մեր հաջողություններով կրկին անգամ և ել ավելի մեծ չափով նվաճեցինք աշխատավորական ամենալայն մասսաների համակրանքը։ Յեվ այդ հիանալի կերպով հաշվի յեն առնում կապիտալիստները։

Մենք հանդիսանում ենք այն իրական ուժը, վորը պաշտպանում ե միջազգային պրոլետարական հեղափոխությունը և դա ավելի ևս սրում ե ձգտումները, զենքով լուծելու Խորհրդային Միության հարցը։

Կապիտալիստները վախենում են, վոր արևելյան յերկրները կսկսեն հետզհետե ավելի կողմնորոշվել դեպի Խորհրդային Միությունը։ Ներկայումս արտասահմանյան մամուլում ամենից շատ գրում են Խորհրդային Միության համաձայնության հնարավորության մասին Թուրքիայի և Պարսկաստանի հետ։ Թուրքական և պարսկական մամուլն ուղղակի հարց ե դնում այն մասին, վոր միջազգային կապիտալիզմն անընդունակ ե բարձրացնել իր տնտեսական հզորությունը և վոր միայն Խորհրդային Հանրապետությունների Միությունն ե, վոր տալով արդյունաբերության և գյուղատնտեսության կազմակերպության նոր ձևեր, կարող ե որինակ ծառայել Արևելքին։

Վերջապես, կապիտալիստները հասկանում են, վոր 2—3 տարուց հետո վոչ մի իմպերիալիստական պատերազմ սարսափելի չի լինի մեզ համար։ Մեր տնտեսական աճման, մեր հզորության ամրացման հիման վրա մեր սոցիալիստական շինարարությունը զինված ձեռքով քանդելու վոչ մի փորձը մեզ վտանգավոր չի լինի։

Ահա յեթե այդ բոլորը միակապենք, հանրագումարենք, այն դեպքում միանգամայն ակներև կերպով անհրաժեշտ ե դառնում, հատուկ ուշադրությամբ վերաբերվել միջազգային քաղաքականության հարցերին։ Ըստ վորում հատկապես Մանջուրիայի և Ճապոնիայի հարցը մեզ համար ստանում ե կրկնակի նշանակություն, կրկնակի հետաքրքրություն։ Այսորվա «Պրավդայում» կա Փարիզի թերթերին գրած Խարբինի թղթակցի հետևյալ նկատողությունը. «Նրանց համար, ովքեր յերկար տարիներ ապրում են այնտեղ, այլևս վոչ մի կասկած չկա այդ մասին։ Հարցը վերաբերվում ե միայն Ճապոնիայի հարձակման ժամանակի մասին։ Ռուսական հեռավոր Արևելքում հարձակվելու ամբողջ նախապատրաստությունն ավարտված ե։ Ճապոնացիներն ամենևին չեն վախենում Կարմիր բանակից և նրանք այլևս չեն թագցնում, վոր մտադիր են կռվել» (ՏԱՍՍ, «Պրավդա» 23 հունվարի 32 թ.)։

Հավանաբար ճապոնական իմպերիալիզմը հաշվի յե առնում, վոր խորհրդային յերկիրն զբաղված ե հնգամյակով, վոր յեթե ձեռք տա նրա շահերին Արևելքում, խորհրդային յերկիրը չի կռվի։ Միևնույն ժամանակ Ճապոնիան վախենում ե Ամերիկայից, վորն ամեն կերպ փորձում ե նրան կռվի մեջ գցել Չինաստանի և Խորհրդային Միության հետ, նպատակ ունենալով հետո հաշիվ տեսնել նրա բազմամյա մրցման համար Արևելքում։ Ինչպես կդասավորվի դրությունը, մենք չգիտենք։ Յես կարծում եմ, վոր ճապոնական իմպերիալիստները հաստատ կսխալվեն մի բանում։ Մենք կկռվենք և կկռվենք բոլշևիկաբար (յերկարատև ծափեր) մեր խորհրդային հողի ամեն մի քայլի համար (ծափեր), իսկ կապիտալիստները, վորոնք ցանում են քամի, կհնձեն փոթորիկ, վորը կավելի նրանց (ծափեր)։

Իսկ դրա համար անհրաժեշտ ե՝

Առաջին համառորեն կառուցել մեր տնտեսությունը, իրագործել հնգամյակը 4 տարում։

Յես ձեզ կհիշեցնեմ Լենինի խոսքերը, վորը մեջ եր բերել ընկեր Ստալինը կուսակցության վերջին համագումարում. «Այժմ մեր գլխավոր ներգործությունը համաշխարհային հեղափոխության վրա մենք ցույց ենք տալիս մեր տնտեսական քաղաքականությամբ։ Բոլոր աշխատավորները, աշխարհի բոլոր յերկրներում, առանց վորևե բացառության և չափազանցության՝ նայում են Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությանը։ Սա ձեռք ե բերված։ Կապիտալիստները լռել, թագցնել վոչինչ չեն կարող, այդ պատճառով նրանք ամենից շատ վորսում են մեր տնտեսական սխալները և մեր թուլությունը։ Այդ ասպարեզում պայքարը դրված ե համաշխարհային մասշտաբով։ Յեթե լուծեցինք այդ խնդիրը, այն ժամանակ մենք շահած կլինենք միջազգային մասշտաբով անպայման և վերջնականապես» (հատ. XVIII, մաս առաջին, եջ 282)։

Լենինի այս խոսքերն ել ավելի մեծ չափով վերաբերում են իրերի ներկա դրությանը։

Յերկրորդ—մենք պետք ե ազատենք մեր յերկիրը կապիտալիստական յերկրներից տեխնիկական կախում ունենալուց, համառորեն աշխատենք ներմուծման կրճատման համար, աշխատելով մեզ չհերիքող նյութերը լրացնել սեփական ուժերով։ Ամեն մի գործարան, ամեն մի ֆաբրիկա այդ ուղղությամբ պետք ե վճռական քայլ անի, բոլշևիկորեն մասնակցի այս խնդիրների լուծմանը։

Յերրորդ խնդիրը մասսաների կազմակերպումն ե։ Պետք ե յուրաքանչյուր բանվորին, ամենահետամնաց կոլտնտեսականին բացատրել մեր շինարարության խնդիրները և հետագա հեռանկարները։

Պետք ե կարողանալ բացատրել մեր աշխատանքների ամեն մի առանձին թերության պատճառները և սխալները։ Բացատրել այնպես, վորպեսզի մեր կուսակցության շուրջը, մեր շինարարության շուրջը կարողանանք կազմակերպել և զորահավաքման յենթարկել ել ավելի լայն միլիոնավոր մասսաներին, ել ավելի միաձուլել աշխատավորական մասսաներին սոցիալիզմի շինարարության, մեր յերկրի պաշտպանության համար մղվող պայքարում։

Չորրորդ խնդիրը մեր պաշտպանության, մեր փառահեղ Կարմիր բանակի ամրացումն ե (ծափեր)։

Յեվ վերջապես, մեր շարքերի հետագա համախմբումը մեր կուսակցության գլխավոր գծի հիման վրա, կուսակցության հետագա համախմբումը Կենտկոմի յեվ մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը (ծափեր)։ Այդ պայմաններում պրոլետարական հեղափոխությունը յեվ մենք—վորպես նրա պատվար—անպարտելի յենք (յերկարատև ծափեր)։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) Հ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԸ

Ընկերներ, մեր Հ-Կովկասի կուսկազմակերպության աշխատանքի արդյունքները, վորոնց մասին զեկուցեց ընկեր Ծերոլդաևը, հնարավոր դարձան շնորհիվ մեր յերկրամասի բանվոր դասակարգի և կոլտնտեսականների անագին ակտիվության: Կուսակցության կազմակերպչական աշխատանքը Հ-Կովկասում ծավալվում եր կուսակցության 16-րդ համագումարի վորոշումների համապատասխան՝ զորահավաքելով բանվոր դասակարգի և կոլտնտեսական լայն մասսաների այդ ակտիվությունը, լուծելով մեր յերկրամասի ինդուստրացման խնդիրը, ավարտելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, ավելացնելով և ամրացնելով բանվոր դասակարգի հետագա ազդեցությունը, ամրացնելով մեր կուսակցության հետագա կապը բանվոր դասակարգի և կոլտնտեսական ամենալայն մասսաների հետ, գաղափարապես և կազմակերպչապես ամրացնելով մեր կուսակցության աշխատանքը:

Անցած ժամանակաշրջանում շարունակել է աճել բանվոր դասակարգի կազմակերպվածությունը: Այդ տեսակետից բավական է ցույց տալ բանվոր դասակարգի քաղաքական ակտիվության այն անսովոր աճը, վոր ունեցանք խորհրդների վերընտրությունների 31 թվի սկզբին և բանվոր դասակարգի ակտիվությունը, վոր մենք ունեցանք արհմիությունների վերընտրություններին 31 թվի վերջին: 31 թվի քաղխորհրդների վերընտրությունների հաշվետվական ժողովներին ներկա լինելը համեմատած 29 թվին, բավական ավելացել եր—60 տոկոսից մինչև 82 տոկոս: Ընտրություններին ներկա լինելը բարձրացել եր 77 տոկոսից մինչև 88 տոկոս, այսինքն բանվոր դասակարգի ամբողջ մասսան հիմնականում մասնակցում եր քաղխորհրդների ընտրություններին: Արհմիությունների ընտրություններին 31 թվի վերջին բանվորների ներկայությունն ընդհանուր ժողովներին հասնում է 92 տոկոսի:

Մեծ չափով աճել է քաղխորհրդների անդամների, պատգամավորական խմբերի սեկցիաների քանակը 31 թվի ընթացքում: Մեր յերկրամասում քաղխորհրդների անդամների քանակն ավելացել է 6.800 մինչև 8.200 մարդ: Յերկրամասում կան 158 պատգամավորական խմբակներ (խորհրդների կազմակերպության նոր ձև), վոր ընդգրկում են մինչև 2000 մարդ:

Արհմիությունների գծով բանվոր դասակարգի կազմակերպվածության աճն անցած ժամանակաշրջանում հասնում եր հետևյալ քանակին—վերջին տարում բանվորների ընդգրկումը արհմիություններում ավելացել է 110 հազար մարդով: Այժմ արհմիություններն յերկրամասում ընդգրկում են 824 հազար մարդ:

Կոմյերիտմիությունն անցած ժամանակաշրջանում աճել է կրկնակի—200 հազարից մինչև 400 հազար մարդ:

Բանգյուղթղթակիցների քանակն յերկրամասում աճել է հաշվետու ժամանակամիջոցում 16 հազարից մինչև 40 հազար մարդ, համաձայն հինգ յերկրային թերթերի տվյալների:

Անցած ժամանակամիջոցում քաղաքային սպառկոոպն աճել է 150 հազար մարդով և այժմ ընդգրկում է իր շարքերում 880 հազար մարդ:

Կինպատգամավորական շարժումը ներկայումս ընդգրկում է 100 հազար մարդ:

Կամավոր ընկերությունները անցած ժամանակաշրջանում ցույց են տվել անագին աշխատանք նոր բանվորներին իրենց շարժման մեջ ներգրավելու մասով: Բավական է բերել մի վերին աստիճանի ցուցադրական թիվ, դա Պաշտ-ավիաքիմի աճն է: Զեկուցման յենթակա ժամանակամիջոցում Պաշտ-ավիաքիմն աճել է 460 հազարից մինչև 806 հազար մարդ:

Ահա ընկերներ, մեր յերկրամասի բանվոր դասակարգի կազմակերպվածության աճի համառոտ ցուցանիշները:

Բանվոր դասակարգի կազմակերպվածության աճի, նրա ակտիվության բարձրացման հետ միասին ընթացել է մեր յերկրամասի բանվորական լայն մասսաների աշխատանքային վերելքի կազմակերպման աճը: Բանվոր դասակարգի կազմակերպվածության աճը պրոֆմիութենական գծով արտահայտվել է արտադրական խորհրդակցությունները բանվորների նոր շերտեր ներգրավելով, այդ խորհրդակցությունների միջոցով ներմուծած առաջարկությունների աճով: Յես կբերեմ միայն յերկու որինակ, վորպեսզի բնորոշեմ այդ տեսակետից յեղած դրությունն յերկրամասում: Յես այդ տեսակետից կառնեմ լավ և միջակ ձեռնարկությունները: Ընկեր Ստալինի անվան գործարանը արտադրական խորհրդակցությունների աշխատանքի, արտադրական խորհրդակցություններում նոր բանվորներ ներգրավելու ասպարեզում անշուշտ կանգնած է առաջին շարքերում: Ընկեր Ստալինի անվան գործարանում անցած 31 թվի ընթացքում այսպիսի հաջողություն կա՝ յեթե առաջին յեռամսյակում ցեխային և հերթային արտադրական խորհրդակցությունների թիվը հասնում եր 71, մասնակցությամբ 8400 մարդու և խմբակային խորհրդակցությունների թիվը 419, մասնակցությամբ 22 հազար մարդու, ապա միայն այդ տարվա հոկտեմբերին ցեխային և հերթային խորհրդակցությունների թիվը հասնում է 88, մասնակցությամբ 12 հազար բանվորների և խմբակային խորհրդակցություններինը—570, մասնակցությամբ մոտ 15 հազար բանվորների, «Պրոլետար» գործարանում անցած 31 թվի առաջին յեռամսյակում յեղել են 33 ցեխային և հերթային խորհրդակցություններ, մասնակցությամբ 1500 մարդու: Յերրորդ յեռամսյակում յեղել են 45 ցեխային և հերթային խորհրդակցություններ, ներգրավելով 2 հազար մարդ: Խմբակային արտադրական խորհրդակցությունների քանակն առաջին

յեռամսյակում լինելով 40, յերրորդ յեռամսյակում բարձրացել ե մինչև 72։ Հարվածայնության և սոցմրցման աճն անցած ժամանակաշրջանում նույնպես բավական աճել ե։

Պրոֆմիության տվյալների համաձայն, վորոնք ինչպես ճիշտ կերպով յերեկ ցույց տվեց ընկեր Շերոլգաևն իր զեկուցումում, մի քիչ չափազանցրած են, մրցողների աճն ավելացել ե 68 տոկոսից մինչև 78 տոկոս, հարվածայինների աճը—55 տոկոսից մինչև 77 տոկոս։ Սակայն պրոֆմիությունների բերած այդ թվերն ել արտահայտում են հարվածայնության աճի անկասկած ճիշտ ձգտումը։

31 թվի կեսին կուսակցության Յերկրկոմը պրոֆմիութենական կազմակերպությունների առաջ խնդիր դրեց ստուգել սոցմրցում և հարվածայնություն ներգրավվածներին, վորպեսզի պարզվի սոցմրցման և հարվածայնության իսկական պատկերն յերկրամասում։ Այն ժամանակ մեծ վեճ կար այն մասին, թե ում համարել հարվածային. արդյո՞ք նրան, ով կատարում ե իր նորման կամ հարվածային համարել նրան, ով կատարում ե արտադրական առաջադրությունը։

Այն թվերը, վոր յես զեկուցում եմ ձեզ, ճիշտ ցույց տալով ձըգտումը, սակայն պատկերը պարզ և ճիշտ չեն տալիս։ Նրանք քողարկում են իրականությունը, դրա համար ել այդ ասպարեզում մեր առաջ ներկայումս, 1932 թվին խնդիր ե դրված, հարվածայնության շարժումն ավելի ճիշտ ռելսերի վրա դնել, հենց արտադրական առաջադրությունները կատարելու և գերակատարելու սկզբունքով։

Տնտեսվարների խորհրդակցության մեջ ընկ. Ստալինի արտասանած ճառից հետո բավական աճել ե սոցմրցման և հարվածայնության բարձր ձևը մեր յերկրամասի բանվոր դասակարգի միջև հանձինս տըն-տեսհաշվարկային բրիգադների աճի։ Այդ տեսակետից անցած ժամանակամիջոցում բանվորներն ունեցան ղգալի շարժում դեպի սոցմրցման և հարվածայնության այդ բարձր ձևերը։ Շատ ձեռնարկություններում, վորտեղ հարվածային բարձր ձևի աշխատանքը հանձինս տըն-տեսհաշվարկային բրիգադների դրված ե բավարար, վերջիններս ընդգրկում են մոտավորապես 70 տոկոս։ Յերկրամասում ներկայումս գոյություն ունեն 5 հազար տնտեսհաշվարկային բրիգադներ։ Մենք կարող ենք այժմ արդեն բերել տասնյակ որինակներ, այն բանի, թե ինչպիսի հետևանքների կարող են հասնել տնտեսհաշվարկային բրիգադները ձեռնարկություններում, պայքարելով վոչ միայն արդֆինպլանի քանակական կատարման համար, այլև պայքարելով վորակական ցուցանիշների, ինքնարժեքի իջեցման, խորհրդային կոպեկի տնտեսման համար։

Սակայն յես կբերեմ վորպես որինակ ամենաբնորոշ բրիգադն այդ տեսակետից։ Յես կարծում եմ և թվում ե, թե պրոֆմիութենականներն ել ինձ կպաշտպանեն, վոր յերկրամասում ամենահատկանշականն այդ տեսակետից Կարպելի բրիգադն ե Սելմաշում։ Նա արդեն ահագին պայքար ե տարել հենց վորակային ցուցանիշների համար։ Այդ բրիգադն արժանի յե, վոր նրանից որինակ վերցնեն մնացած բրիգադները, թե ինչպես պետք ե պայքարել վորակական ցուցանիշների համար ձեռնարկություններում։

Նախ և առաջ բրիգադը վերին աստիճանի ուշադրությամբ ե մոտենում իր կազմին։ Նա 1931 թվի ընթացքում իր շարքերից հեռացրել ե մոտ 12 մարդ վոչ հարվածայիններ, վորպես վոչ հարվածայնորեն վերաբերվող աշխատանքին ձեռնարկություններում։

Ամեն ամիս, սկսած հունվարից, յերբ բրիգադան կազմակերպվեց, նա գերակատարում ե իր առաջադրությունները։ Զափազանց բնորոշ ե, վոր նա գերակատարում ե առաջադրությունը, ունենալով արդֆինպլանի վորոշածից մոտ 40 տոկոս պակաս բանվորական կազմ։ Հոկտեմբերին և նոյեմբերին փոցխերի հավաքի առաջադրությունը կատարեց 1000 փոխարեն 1100, 30 մարդկանցով, փոխանակ պլանով վորոշված 50 մարդու։ Փոցխի ինքնարժեքն անցած 7-8 ամիսների ընթացքում իջել ե 55 ռուբլուց մինչև 8 ռուբլի 85 կոպեկ հունվարին։ Բրիգադը նորմայի հանդեպ բրակն իջեցրել ե 60 տոկոս։

Այդ բրիգադը պետք ե հանդիսանա աշխատանքի որինակ մեր յերկրամասի ամբողջ հարվածայնության և բոլոր տնտեսհաշվարկային բրիգադների համար։ Մենք հանձինս Կարպելի ունենք այնպիսի բրիգադիր, վորը որինակ պիտի դառնա մնացած բոլոր բրիգադիրների աշխատանքի համար։

Յես կրկնում եմ, վոր կարող եյինք թվել տասնյակ բրիգադներ, վորոնք թեվերը վեր քաշած ամբողջ յեռանդով պայքարում են վորակական ցուցանիշների, ինքնարժեքի, աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատանքի կոմունիստական վերաբերմունքի համար։

Դա անկասկած հանդիսանում ե մեր պրոֆկազմակերպությունների աշխատանքի առաջդիմական մի ահագին քայլ, վորովհետև տնտեսհաշվարկային բրիգադները 31 թվի վերջին կիսում բավական լայն ֆրոնտով ծավալվել են մեր ամբողջ յերկրային արդյունաբերության մեջ։

Վոչ պակաս ընդարձակ ծավալվել ե պրոֆկազմակերպությունների աշխատանքն աշխատավարձի վերակառուցման ասպարեզում, հատկապես տնտեսվարների խորհրդակցության մեջ արտասանած ընկեր Ստալինի ճառից հետո։

Մենք այժմ կարող ենք ասել, վոր ժամանակավարձին, այդ չարիքին, հավասարեցման և դիմազրկության այդ տեսակին, աշխատավարձի ասպարեզում բավական մեծ հարված ե հասցված։ Գործավարձով ընդգրկումը, վոր առաջին յեռամսյակում 48 տոկոս եր, չորրորդ յեռամսյակում հասավ 61 տոկոսի։ Մետաղի գործում գործավարձով ընդգրկումը հասնում ե 62 տոկոսի ըստ աշխատած ժամանակի, ածուխի գործում հասնում ե 65—66 տոկոսի։ Աշխատավարձի վերակազմության ասպարեզում արված են առաջին, յես այդ ընդգծում եմ, առաջին, բայց բավական վճռական քայլերը։

Յեթե 31 թվի առաջին կիսամյակում ըստ ամսական աշխատավարձի ածուխը բռնում եր 11-րդ տեղը, սև մետաղագործությունը 10-րդ տեղը, նավթը 12 րդ տեղը, պոլիգրաֆիան առաջին տեղը, թղթի արդյունաբերությունը 4-րդ տեղը, ծխախոտինը 5 տեղը, կաշվինը 7-րդ տեղը, այսինքն մեր արդյունաբերության գլխավոր ճյուղերում բանվորների աշխատավարձը հետ եր մնում, ապա արդեն հոկտեմբերին և նոյեմբերին մենք, ընդգծում եմ, ունենք առաջին քայլերը դեպի այդ հավասարեցման վճռական փոփոխման և բեկման կողմն արդյունաբերության առանձին ճյուղերի բանվորների վարձատրության գործում։

Արդեն սև մետաղագործությունն անցել է 2-րդ տեղը, ածուխը 6-րդ տեղը, նավթը 8-րդ տեղը։ Արհմիութենական կազմակերպությունները անցած ժամանակամիջոցում վճռաբար վերակազմում էին իրենց շարքերը, յերեսներն արտադրությունը դարձնելու տեսակետից։

Մենք ներկայումս ունենք 23-27 արտադրական միությունների փոխարեն, 8 ինքնուրույն ռայոնական կոմիտեներ, 66 ֆաբրիկա-գործարանային ինքնուրույն կոմիտեներ, վորոնք անմիջապես կապված են կենտրոնական միությունների հետ, 5600 ֆաբգործկոմներ և մոտ 9000 արհմիութենական խմբակներ ձեռնարկություններում։ Այդպես է արհմիությունների աշխատանքի վերակազմության պատկերն արտադրությանը մոտենալու ուղղությամբ։

Այդ անցած ժամանակամիջոցում մեծ չափով թարմացել և ներհոսել են նոր կադրեր արհմիութենական շարժման մեջ։ Բավական է բերել այսպիսի փաստեր, վոր անցած հաշվետու-վերընտրական կամպանիայի ֆաբգործտեղկոմների կազմը նորոգվեց 75 տոկոս, ցեխկոմների կազմը նորոգվեց 80 տոկոս։ Հարվածայինները ֆաբգործներում կազմում են 85 տոկոս, ցեխային կոմիտեներում—87 տոկոս։ Այժմ ներհոսել են և շարունակ ներհոսում են նոր, թարմ կադրեր, վորոնք նոր ձևով են դնում բանվորների միջև աշխատելու հարցն և այն խնդիրների լուծումը, վորոնք դրված են արդյունաբերության ասպարեզում։

Անցած ժամանակամիջոցում աճել է նույնպես յերիտասարդական մասսաների աշխատանքային վերելքի կազմակերպումը։

1931 թվին, շնորհիվ յերիտասարդության միջև կոմյերիտմիության տարած լայն աշխատանքի, կազմակերպվել են յերիտասարդական խմբակներ, յերիտասարդական բրիգադներ, յերիտասարդական հերթեր և մինչև անգամ յերիտասարդական ցեխեր։ Այդ յերիտասարդական բրիգադները, ցեխերը, հերթերը, խմբերը ցույց են տալիս, թե ինչպես պետք է կռվել վորակական ցուցանիշների համար։ Այդ տեսակետից որինակելի պետք է համարել այն յերիտասարդությանը, վոր կազմակերպել է կոմսոմոլը Գրոզնու կրեկինգ-գործարանի (նավթամշակման) 7-րդ մեքենասարքում։ Այդ յերիտասարդական կոմյերիտական կազմակերպությունը լիովին հասավ ամերիկական որինակներին իր աշխատանքում։ Այդ յերիտասարդական բրիգադի աշխատանքը պետք է որինակ դառնա մյուս բոլոր յերիտասարդական բրիգադների համար։ Այդ բրիգադն զգալի չափով բարձրացրեց լուսավոր մթերքների ստացման տոկոսը, աշխատելով 45 որ առանց ապարատը մաքրելու, յերբ նորման 27 որ է։

Վոչ պակաս փայլուն որինակներ է տալիս ընկ. Արտեմի անվան 249 շախտի յերիտասարդական ուստուպի (молодежный уступ) աշխատանքը։ Այդ յերիտասարդական ուստուպը արդեն հոկտեմբերին, յերբ ամբողջ Շախտի ռայոնում իրենց առաջադրությունը լրիվ կատարող շատ քիչ բրիգադներ կային, կարողացավ կատարել իր առաջադրությունը 117 տոկոս։

Աշխատանքի վերելքի կազմակերպման աճը տեղի էր ունենում նաև բանվորուհիների աշխատանքի հրաշալի ցուցանիշների գծով։ Այդ տեսակետից թույլ տվեք վորպես աշխատանքի որինակ բերեմ ընկեր Պանովայի № 9 բրիգադը Դոնի պետական ծխախոտաֆաբրիկայի

(ДГТФ) ծխախոտալիցքի բաժնում։ Ընկեր Պանովայի բրիգադը վոչ միայն կատարեց ու գերակատարեց պլանային նշանակումները. այլև նա գերակատարեց առաջադրությունը հոկտեմբերին 6 տոկոս, նոյեմբերին 12 տոկոս, դեկտեմբերին 10 տոկոս։ Բացի այդ, բրիգադը կարողացավ տնտեսել հոկտեմբերին 320 ռուբլի, նոյեմբերին 356 ռուբլի և դեկտեմբերին 276 ռուբլի։

Ահա, ընկերներ, մեր յերկրամասի բանվոր դասակարգի աշխատանքային վերելքի կազմակերպման աճի ցուցանիշները։

2. ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆՈՐ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր կուսակցական կազմակերպությունների վերակազմության ասպարեզում, իսկ այդ վերակազմությունն ուղղված է դեպի աճումը և բանվոր դասակարգի աշխատանքային վերելքի կազմակերպման ապահովումը—բավական է բերել այսպիսի կարճ փաստեր. անցած շրջանում արդյունաբերության և տրանսպորտի մեջ բջիջների աճը արտահայտվում է 700-ից մինչև 1300-ի, իսկ կուսաշխատանքի վերակազմության հետևանքով մենք ունենք արդեն 3765 առանց կանոնադրության ցեխային, ողակային, հերթի բջիջներ և կուսխմբակներ։

Անկասկած, շնորհիվ կուսաշխատանքի նման վերակազմության, վերակազմություն, վորն ուղղված է դեպի կուսակցական-մասսայական աշխատանքների մոտեցմանը ցեխին—մենք ունենք անկուսակցական մասսայի ավելի ու ավելի ընդգրկում մեր աշխատանքների մեջ, ունենք արհեստակցական և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքների բարելավում։ Հենց այդ վերակազմության շնորհիվ, տնտեսվարների խորհրդակցությանը ընկեր Ստալինի արտասանած ճառից հետո, մեզ հաջողվեց ապահովել ձեռնարկություններում գտնվող մեր բոլոր կազմակերպությունների—արհեստակցական, կոմյերիտական, պատգամավորական ժողովներ, խորհուրդների պատգամավորական խմբակներ—վճռական պայքարն ընկեր Ստալինի վեց պայմանների իրացման համար, ապահովել վճռական պայքար դիմազրկության, հավասարեցման դեմ և շարժման մեջ դնել լայն բանվորական մասսաներին՝ տեխնիկայի յուրացման համար։

Սակայն, ընկերներ, չնայած բանվոր դասակարգի կազմակերպվածության աճին, չնայած կուսակցության, արհմիությունների, կոմյերիտմիության, պատգամավորուհիների շարժման, խորհրդների պատգամավորների խմբակների անկասկած խոշոր հաջողություններին, բանվոր դասակարգի աշխատանքային վերելքի աճման և կազմակերպման ասպարեզում, վերելք, վորն ուղղված է դեպի քանակային և վորակային ցուցիչների լուծումը,—չնայած սրան, մենք ամենակտրուկ կերպով պետք է դնենք այն հարցը, վոր այժմյան ժամանակաշրջանում կուսակցական, արհմիութենական, կոմյերիտական կազմակերպությունների, պատգամավորական խմբակների և պատգամավորուհիների շարժման առաջ դրված են ավելի պատասխանատու խնդիրներ՝ բանվորական լայն մասսաների աշխատանքային վերելքի կազմակերպման թափի ասպարեզում։

Լուսաբանությամբ այն խնդիրների, վորոնք դրված են մեր առաջ 1932 թվին և վորոնց մասին մանրամասն զեկուցեց մեզ ընկեր

Շերոլդայնը, յերբ անհրաժեշտ է ապահովել հնգամյակի իրագործումը 4 տարում, յերբ մեզ անհրաժեշտ է ապահովել յերկրամասի արդյունաբերության արտադրանքի աճը մոտավորապես 60 տոկոսով, յերբ 1932 թվին հարկավոր է ինչ գնով էլ ուզում է լինի վերացնել ինքնարժեքի այն բարձրացումը, վորը մենք ունեյինք 1931 թվին և ապահովել վորակային ցուցիչների կատարումը—հենց այդ պատճառով հարկավոր է ձեռնարկություններում յեղած մեր բոլոր կազմակերպությունների աշխատանքներում ավելի խիստ շրջադարձ՝ բանվորական լայն մասսաների աշխատանքային վերելքի կազմակերպման գործում։ Անհրաժեշտ է վճռականորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, վորակային ցուցիչների կատարման գործում յեղած այդ հիմնական գործոնը, ձեռք բերել խոշոր նվաճումներ, դեպի աշխատանք ունեցած կոմունիստական վերաբերմունքի ասպարեզում և պայմաններ ստեղծել մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների վերացման համար, ինչպես ասված է այդ մասին մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վերջին վորոշման մեջ։

Թույլ տվեք անցնել մի շարք կազմակերպությունների աշխատանքների գնահատմանը և հայտնաբերել այն թերությունները, վորոնք ունեն դեռ նրանք բանվորական մասսաների աշխատանքային վերելքի կազմակերպման գործում։

Չնայած մեր արհմիութենական կազմակերպությունների վորոշ, բավական զգալի հաջողություններին, մենք պետք է ասենք, վոր արհմիութենական կազմակերպությունների աշխատանքները դեռ բավականաչափ արագորեն չեն վերակազմվում յերեսով դեպի արտադրությունը։

Պատահական չէ, վոր անցած հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում գործարկոմների 37 տոկոսի, իսկ ցեխային կոմիտեների 48 տոկոսի աշխատանքները գտնվեց թույլ և անբավարար։

Արհմիությունների աշխատանքը դեռ հարկ յեղած չափով չի ծավալված ձեռնարկություններում նոր յեկած բանվորների միջև։ Անդամագրությունն այնպիսի խոշոր միություններում, ինչպիսին է հացահատիկային խորհտնտեսությունների արհմիությունը, վորտեղ նա հասնում է ընդամենը 42 տոկոսի, անասնապահական խորհտնտեսություններում—46 տոկոսի, բատրակների և ՄՏԿ բանվորների միության մեջ—69 տոկոսի—միանգամայն անբավարար է։ Առանձին խոշորագույն ձեռնարկություններում, ինչպիսին են Սուլինը, Սելմաշը—բանվորների 20—30 տոկոսը դեռ ընդգրկված չեն արհմիութենական անդամությամբ։

Սրա հետ միասին արհմիութենական կազմակերպությունները պետք է ցուցաբերեն առանձին զգոնություն, ուշի ուշով հետևեն, թե ովքեր են մեր ձեռնարկություններում մտնում արհմիությունների մեջ։ Արհկազմակերպությունների ստուգումները քիչ թվով դասակարգայնորեն անհարազատ տարրեր չեն յերևան բերել։

Պետք է այդ տարրերի ներս թափանցումը ժամանակին յերևան հանել և դուրս վռնդել նրանց արհմիություններից։

Լայն ծավալված բրիգադային հարվածայնության և սոցմրցման հետ միասին, անհատական հարվածայնությամբ ու սոցմրցմամբ բանվորները դեռ բավականաչափ չեն ընդգրկված բրիգադների ներսում։

Հետևապես, սոցմրցման և հարվածայնության ծավալման ասպարեզում արհկազմակերպությունների առաջ խնդիր է դրվում՝ խորացնել աշխատանքը բրիգադի ներսում բանվորներին անհատական հարվածայնությամբ ու սոցմրցմամբ ավելի լայնորեն ընդգրկելու համար։

Չնայած տնտհաշվարկային բրիգադները ցույց են տալիս աշխատանքի փայլուն որինակներ, մենք ունենք դեռ տնտհաշվարկային բրիգադների դերի թերագնահատում և այդ պատճառով մի շարք վայրերում մինչև այժմ դեռ տնտհաշվարկային բրիգադների շարժումն ընդգրկել է չնչին քանակությամբ բանվորների։ Որինակ՝ Շախտում, Գրոզնեֆթի նոր նավթահանքերում մենք ունենք տնտհաշվարկային բրիգադների չափազանց աննշան ծավալում։ Մենք պետք է ամենավճռական պայքար մղենք առանձին տնտեսական կազմակերպությունների կողմից դեպի բանվորների այդ շարժումը յեղած անթույլատրելի, յերբեմն բյուրոկրատական վերաբերմունքի դեմ։ Մենք չպետք է թույլ տանք այնպիսի փաստեր, ինչպես տնտհաշվարկային բրիգադների պրեմիա չտալը, ինչպես պրեմիայի կեսի չափ տոկոսների մուծումը ապահովագրական ֆոնդը, վորը գործադրվում է Գրոզնեֆթի կողմից և այլ խեղաթյուրումներ ու շեղումներ։

Արհմիութենական կազմակերպությունների աշխատանքն ընկեր Ստալինի պատմական վեց պայմանների կիրառման ուղղությամբ կարող է դրվել էլ ավելի բարձր աստիճանի միայն այն պայմանով, յեթե արհկազմակերպություններն ավարտեն և մինչև վերջ հասցնեն իրենց շարքերի վերակազմությունը։ Միայն մի պայմանով՝ յերբ արհեստակցական կազմակերպությունները վերակազմելով իրենց շարքերը կընդգրկեն մեր յերկրամասի ձեռնարկություններում և տրանսպորտում յեղած բոլոր բրիգադներն առանց բացառության, միայն այդ պայմանով ընկեր Ստալինի վեց պայմանների համար մղվող պայքարը կդրվի հարկ յեղած բարձրության վրա։

Կոմյերիտմիության դերն անչափ բարձրացել է։ Յերկրամասի 10 արդյունաբերական ռայոններում կոմյերիտմիության տեսակարար կշիռը, հանդեպ բանվոր յերիտասարդության, կազմում է 72 տոկոս Յերկրամասի առանձին խոշոր ձեռնարկություններում յերիտասարդության տեսակարար կշիռը բանվորների մեջ հասնում է 50 տոկոսի և ավելի։ Այս պայմաններում ներմիութենական աշխատանքների խորացումը, առանձին յերիտասարդական բրիգադների, ցեխերի, նույնիսկ առանձին ձեռնարկությունների կազմակերպման փորձը, վորպես դրական արդյունքներ տվող—պետք է ամեն կերպ ընդարձակվի։

Կոմյերիտմիության առաջ դրված էր և դրվում է՝ կոմյերիտմիության մեջ նոր գրված յերիտասարդության կուսակցական-քաղաքական դաստիարակության խնդիրը։ Կոմյերիտմիության աճի կրկնապատկման պայմաններում այս խնդիրը դառնում է ամենաարմատականներից մեկը։

Կոմյերիտմիության շարքերում ծավալուն ինքնաքննադատության հիման վրա միայն, ներմիութենական դեմոկրատիայի հիման վրա միայն, մենք կարող ենք ապահովել կոմյերիտմիության աշխատանքներում յեղած թերությունների ժամանակին վերացումը։

Կանանց մեջ տարվող աշխատանքների ասպարեզում կուսկազմակերպությունները պետք է յուրացնեն այն, վոր այժմ կանանց մեջ

տարվող աշխատանքը պետք է դառնա ամբողջ կուսակցական ապարատի աշխատանք: Կանանց թվի աճումն ձեռնարկություններում և արդյունաբերության մեջ հսկայական է անցած տարվա ընթացքում: Բանվորուհիների տեսակարար կշիռը ածխային արդյունաբերության մեջ բարձրացել է 11-ից մինչև 16 տոկոս, նավթային արդյունաբերության մեջ—6-ից 12 տոկոս, ցեմենտի—16-ից մինչև 26 տոկոս: Այս ուղղությամբ առանձնապես ուժեղ հառաջխաղացում է տալիս ազգային մարզերի արդյունաբերությունը, վորտեղ մենք ներկայումս ունենք արդեն ավելի քան 1000 բանվորուհի: 1931 թվին ձեռնարկությունների մեջ ներգրավված բանվորների զգալի մասը կազմում են կանայք: Այս ամենը պարտավորեցնում է արմատապես փոխել կանանց մեջ տարվող աշխատանքներն այնպես, վոր նա դառնա կուսակցական ամբողջ ապարատի գործը:

Մեր կուսակցական կազմակերպությունների աշխատանքները ձեռնարկություններում ևս պետք է հարկ յեղած բարձրության վրա դրվի: Մի շարք խոշորագույն ձեռնարկությունների ընտրովի հետազոտությունները ցույց են տալիս, վոր մենք ունենք դեռ բավականին զգալի քանակությամբ բրիգադներ առանց կուսխմբակների: Ստալինի անվան գործարանում այդպիսի բրիգադների թիվը է 98, «Կարմիր Կատելշչիկում»—58, Սելմաշի դարբնոցա-մամլային ցեխում 85 բրիգադներից միայն 45-ում կան կուսխմբակներ. մոխրագույն չուգունի ցեխում 40 բրիգադներից 8-ն ունեն կուսխմբակներ, չուգունի մյուս ցեխում 50 բրիգադներից 9-ն ունեն կուսխմբակներ: 1932 թվին մենք պետք է կուսխմբակներով ընդգրկենք մեր յերկրամասի ձեռնարկություններում յեղած բոլոր բրիգադները առանց բացառության: Դրա համար մենք պայմաններ ունենք:

Միայն այն ժամանակ, յերբ ամեն մի բրիգադում առանց բացառության կկազմակերպվի կուսխմբակ և նրան զուգընթաց նաև արհմիութենական խմբակ, կոմյերիտական խմբակ,—մենք իսկապես կկարողանանք ապահովել բանվորների ակտիվության ավելի լիակատար ընդգրկում: Ցեխում, ողակում, հերթում (սմենա) տարվող աշխատանքն զգալիորեն ամրացել է: Բայց մենք պետք է սուր դնենք նաև կուսակցական և արհմիութենական աշխատանքների ծանրության կենտրոնը դեպի բրիգադա տեղափոխելու խնդիրը, վորովհետև միայն այդ պայմանով մենք կարող ենք ապահովել ընկեր Ստալինի վեց պայմանների լիակատար կիրառումը, մենք կարող ենք ստեղծել բոլոր պայմանները մեր յերկրամասի բանվոր դասակարգի կազմակերպվածության և ակտիվության ավելի խոշոր չափով ընդգրկման համար—հնգամյակը 4 տարում կատարելու, սոցիալիստական հասարակության հաջող կառուցման համար:

3. ԳԼԽԱՎՈՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱՃՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է բոլոր մեր մասսայական կազմակերպությունների, արհմիութենական, խորհրդային, կոմյերիտական, կանանց պատգամավորական շարժման ուժեղ շրջադարձ, աշխատանքի վերակազմություն նոր

ձևով, զորահավաքելու մասսաների ակտիվությունը, լուծելու 1932 թվի խնդիրները, այն խնդիրները, վորոնք դրել է մեր կուսակցության Կենտկոմը—մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարման գործում:

Գյուղատնտեսության վերակառուցման պայքարում սոցիալիստական սկզբունքներով մեր կուսակցության աշխատանքն անցած ժամանակաշրջանում ծավալվել է առաջին հերթին այն գծով, վոր քաղաքն ոգնություն է կազմակերպել մեր յերկրամասի կոլտնտեսական շարժմանը:

Բանվորական շեֆ կազմակերպությունները 1931 թվի գարնանացանի կամպանիային մեր յերկրամասի կոլտնտեսական շարժմանն ոգնելու համար ուղարկեցին 3.500 բրիգադ, վորտեղ մասնակցում եյին 30 հազար մարդ: Այդ բրիգադները նորոգել են մինչև 23 հազար զանազան գործիքներ: Գարնանն և ամառն ուղարկել են ահագին ուժեր, անցկացնելու ագրոկոլտնտեսային և անասնապահական կոլտնտեսային արշավ: Ագրոկոլտնտես արշավն ընդգրկեց 775 հազար կոլտնտեսականներ և անասնապահական կոլտնտեսային արշավանքն ընդգրկեց 670 հազար կոլտնտեսականներ մեր յերկրամասում: Այդ ժամանակամիջոցում քաղաքից ուժեր են փոխադրվել կոլտնտեսական կադրերի վերապատրաստմանն ոգնելու: Կոլտնտեսական կադրերի վերապատրաստումը 1931 թվին ընդգրկեց 144 հազար մարդ: Շրջանների վերացումից սկսած մշտական աշխատանքի համար գյուղ են փոխադրված 938 շրջանային (ոկրուգի) պատասխանատու աշխատողներ: Բացի այդ, 1931 թվի ընթացքում մշտական աշխատանքի համար գյուղ են ուղարկված 3.980 մարդ, նրանցից ազգային մարզերը 520 մարդ և մասնավորապես կուսակցական աշխատանքի համար զորահավաքված են քաղաքային կազմակերպություններից 300 մարդ: Ընթացիկ աշխատանքի կարգով ուղարկված են 200 մարդ: 1930 թվի ոգոստոսի մեկից մինչև 1932 թվի հունվարի 1 զորահավաքել են Ռոստովի և մյուս քաղաքների ակտիվից 12 հազար մարդ, ոգնելու գյուղին, վոր անցկացնի բոլոր կամպանիաները: Կարմիր բանակը նույնպես մեծ աշխատանք է կատարել գյուղի ոգնության գործում այս ժամանակամիջոցում: 1930 թվին Կարմիր բանակից զորացրվածներից պատրաստվել են զանազան տեսակի կադրեր—տրակտորիստներ, հաշվետարներ, անասնապահներ, խրճիթվարներ 4,358 մարդ և 1931 թվին 3.551 մարդ:

Դրան զուգընթաց գնում եր հենց գյուղի կազմակերպվածության աճը: Բավական է մատնանշել այն, վոր խորհուրդների պատգամավորների քանակն անցած ժամանակամիջոցում ավելացել է մինչև 58.000: Աճել է արտադրական խորհրդակցությունների սեկցիաների և նրանց մասնակիցների քանակը, ծավալել են նաև խորհրդային աշխատանքի նոր ձևեր—պատգամավորական խմբերը: Խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում հաշվում են արդեն 479 պատգամավորական խմբեր, վոր ընդգրկում են 12.000 մարդ:

Սպառկոոպի ընդգրկումը գյուղում անցյալ տարում բարձրացել է 1,600,000 անդամից մինչև 3 միլիոն 100 հազար անդամ: Կոմյերիտական բջիջների ցանցն այդ ժամանակամիջոցում բավական ընդարձակվել է և կոմյերիտական բջիջները կրկնակի անգամ ավելի յեն գյուղեր ընդգրկում, քան կուսակցական բջիջները:

Հաշվետու ժամանակամիջոցում աշխատանքը կանանց մեջ հատկապես ընդարձակ ծավալ է ընդունել։ Բավական է բերել մի քանի ընտրական տվյալներ։ 51 ռայոններում կան 48 կոլտնտեսությունների կին նախագահներ, վարչությունների 2.873 անդամուհիներ, վերստուգիչ հանձնաժողովների 970 անդամուհիներ, կաթնապրանքային ֆերմաներում 1.100 վարչուհիներ, 62 բրիգադուհիներ, 1.800 տրակտորիստներ, 28 վարպետուհիներ ՄՏ Կայաններում։ Վերին աստիճանի հատկանշական է, վոր ազգային մարզերում, օրինակ Ադիգեյում կան արդեն 100 բրիգադիր լեռնուհիներ, կոլտնտեսությունների նախագահների 81 տեղակալուհիներ։ Կաբարդինո-Բալկարիայում կան 121 լեռնուհիներ, վորպես կոլտնտեսային վարիչներ։ 4 ազգային մարզերում վարչությունների կին անդամներ կան 107 և վերստուգիչ հանձնաժողովների կին անդամներ 87 մարդ։

Այդ բոլորը ցույց են տալիս այն թափը, վորն անցած ժամանակամիջոցում ձեռք է բերված գյուղի կոլտնտեսուհիների միջև կատարած աշխատանքում։ Աճում են կոլտնտեսուհիների նոր կադրերը, վորպես կոլտնտեսական շինարարության կազմակերպողներ։

Անցած ժամանակամիջոցում բավական աճել են նաև մեր կուսակցական կազմակերպությունները։ Գյուղական բջիջների քանակը 1.700 բարձրացել է մինչև 3.000. հատկապես արագ է աճել բջիջների ցանցը խորհտնտեսություններում, չնայած դեռ վոչ բոլոր խորհտնտեսություններն ունեն կուսբջիջներ։

Գյուղական կուսակցական կազմակերպությունների քանակական կազմն անցած ժամանակամիջոցում ավելացել է 50 հազար և ազգային մարզերում (առանց Դաղստանի) 7 հազար։

Ահա, ընկերներ, համառոտ կերպով մեր կուսակցության կազմակերպչական աշխատանքը, վոր ուղղված է մեր յերկրամասի կոլտնտեսական և խորհտնտեսական շարժման ամրացման և տնտեսական-քաղաքական խնդիրների լուծման գործին, վորոնք անցած յերկու տարվա ընթացքում դրվեցին մեր յերկրամասի գյուղատնտեսության առաջ։

Մենք անկասկած դրա հիման վրա լավացրինք գյուղի բոլոր կազմակերպությունների աշխատանքը։ Դրան ապացույց ծառայում են մեր Հ.-Կովկասի կազմակերպության աշխատանքի այն արդյունքները խորհտնտեսային և կոլտնտեսային շինարարության և մթերման պլանների կատարման ասպարեզում, վորոնց մասին յերեկ զեկուցեց ընկ. Շեբոլդաեվը։

Սակայն մենք ամենայն սրությամբ պետք է դնենք կոլտնտեսական լայն մասսաների վոչ թե օրերով, այլ ժամերով աճող ակտիվության զորահավաքի աշխատանքում ավելի կտրուկ շրջադարձ կատարելու, նոր ձևով աշխատելու խնդիրը մեր բոլոր գյուղական կազմակերպություններում, վորպեսզի ապահովենք խորհտնտեսությունների հաջող շինարարությունը, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական հետագա ամրացումը։

1931 թ. շեֆական աշխատանքի փորձով պետք է ձգտել, վոր շեֆական աշխատանքում ավելի քիչ հանդիսավորություն լինի, ավելի շատ ամենօրյա գործնական օգնություն յենթաշեֆ կազմակերպություններին—Ցերկոմի վերջին վորոշման կիրառման գործում կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրացման մասին։

Կոմյերիտմիության մասին։ Գյուղական կոմյերիտկազմակերպության ցանցի կոմյերիտմիության տեղի ունեցող աճի շնորհիվ կոմյերիտկազմակերպությունը կարող է դառնալ հզոր կազմակերպող օղակ կոլտնտեսական շինարարության ամրացման գործում։

Մինչև այժմ կոմյերիտմիությունն իր հատուկ խնդիրը համարում եր պայքարը կրծողների դեմ և հենց դրանով մեր դաշտերի բերքատվության բարձրացման ապահովումը։ Մինչև այժմ կոմյերիտմիությունն իր հատուկ խնդիրը համարում եր սիլոսացման պլանի կատարումը և հենց դրանով մեր յերկրամասի կոլտնտեսությունների ապահովումը կերով։ Ընկերներ, դա ներկայումս քիչ է։ Կոմյերիտությունը կարող է բացի այդ յերկու հատուկ խնդիրներից, իր վրա վերցնել դարձյալ յերկու հատուկ խնդիրներ 1932 թվին—դա բամբակի և կոլտնտեսական ձիու պահպանման պայքարն է։ Պայքարը կրծողների դեմ, սիլոսացման պլանների կատարման համար, դրան զուգընթաց բամբակի և կոլտնտեսական ձիու պահպանման պայքարը պետք է դառնա կոմյերիտության մարտական խնդիրը գյուղում 1932 թվին։

Միանգամայն անհրաժեշտ է արդյունաբերության օրինակով կազմակերպել հատուկ յերիտասարդական բրիգադներ կոլտնտեսություններում

Յեթե յերիտասարդությունն արդյունաբերության ձեռնարկություններում յերբեմն հանդիսացել է աշխատանքի լավագույն արտադրողականության պայքարի նախաձեռնող, ապա կոլտնտեսական յերիտասարդությունը վորպես ավելի նախաձեռնող, ավելի յեռանդուն—պետք է նույնպես դառնա ակտիվ պայքարող կոլտնտեսական շինարարության կազմակերպչական-տնտեսական ամրացման գործի համար, կոլտնտեսական շինարարության բարձրացման և ամրացման գործի համար բերքատվության բարձրացման, մեր յերկրամասի խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում անասնապահության ծավալման համար։

Կոլտնտեսուհիների միջեվ աշխատանք տանելու մասին: 1931 թվի արդյունքների հիման վրա կարելի յե 1932 թվին յերկրամասի կոլտնտեսուհիների առաջ համարձակ խնդիր դնել—լիովին և ամբողջությամբ իրենց ձեռքն առնել կաթնապրանքային ֆերմաները, խոզապահական տնտեսություններ և թռչնապահական ֆերմեր։ Ունենք օրինակներ, վոր կոլտնտեսուհիները հրաշալի աշխատում են կաթնային ֆերմաների, թռչնապահական և խոզապահական տնտեսությունների ամրացման ասպարեզում։ Յես կարող եյի բերել տասնյակ օրինակներ, թե ինչպես կոլտնտեսուհիները պայքարում են մեծ կաթնատվության, մեծ ձվաբերության, մեծ ճտահանության համար։ Յես ուզում եմ միայն մի օրինակ բերել, թե ինչպես կոլտնտեսուհիները պայքարում են կոլտնտեսական անասնապահության համար։ Այդ օրինակը ընկեր Վորոշիլովի անվան կոլտնտեսության հարվածային բրիգադն է Չեչնիայի ինքնավար մարզում։

Այդ բրիգադը նպատակ եր դրել Հոկտեմբերյան հեղափոխության 14-րդ տարեդարձին կազմակերպել կոլտնտեսությունում թռչնապահական ֆերմա։ Հարվածային բրիգադը, բաղկացած 24 կոլտնտեսու-

հիներից, արագ վերջացրեց թռչնոցի կառուցումը 3.800 թռչնի համար: Հետո ստացած վարկերով գնեց ձվարեր հավեր և ֆերման կազմվեց: Յերկրամասի կոլտնտեսուհիներն իրենց ունեցած անսովոր ակտիվության շնորհիվ և այդ շարժումը կուսակցության կողմից հմուտ ղեկավարելու դեպքում ՄՏ ֆերմերը, խոզապրանքային ֆերմաները, կոլտնտեսությունների թռչնապահական տնտեսությունները կդարձնեն վորպես օրինակելի կոլտնտեսային տնտեսություն:

Կուսակցական-մասսայական աշխատանքը կոլտնտեսական մասսաների միջև պետք է դրվի նոր ձևով: Պետք է ուղղակի ասել, վոր մի շարք գյուղական կուսակցական կազմակերպություններում կուսակցական-մասսայական աշխատանքը կոլտնտեսականների միջև շատ հաճախ փոխվում է վարչական կարգադրությամբ և շնորհիվ դրան մեր մի քանի կազմակերպությունները չեն կարողացել կատարել տնտեսական-քաղաքական կամպանիաները: Յես նախ և առաջ նկատի ունեմ Պրոխլադնենսկու, Ալեքսանդրովսկու կազմակերպությունները, վորոնք մասսայական աշխատանքը փոխարինել են մերկ վարչական կարգադրություններով: Մենք նույնպես փաստեր ունենք, յերբ Պավլովսկի ռայոնում, վորտեղ կազակները 65 տոկոս են կազմում, խորհրդներում նրանց թիվը հասնում է 41 տոկոսի, կոլտնտեսությունների վարչություններում 33 տոկոսի, բրիգադների միջև—42 տոկոս, կոոպերացիայի անդամների միջև—34 տոկոս: Բրյուխովեցկի ռայոնում, վորտեղ 51 տոկոս կազակներ կան, խորհրդներում նրանք կազմում են 31 տոկոս, իսկ խորհրդների նախագահություններում—36 տոկոս, կոլտնտեսությունների վարչություններում—31 տոկոս, կոոպերացիայի վարչություններում—27 տոկոս: Դա ցույց է տալիս, վոր այստեղ տեղական բնակչության միջև աշխատանքն անբավարար է ծավալված, դեռ թույլ են կոփվում տեղական բնակչության կադրերը. անբավարար են ներառնվում այդ կադրերը դեպի կոլտնտեսական շինարարություն, խորհրդային շինարարություն և այլն: Վորպես վառոշ նմուշ և օրինակ բոլոր կազմակերպությունների համար տեղական բնակչության միջև աշխատանք տանելու ասպարիզում, կարելի յե վերցնել Միլլերովի կուսկազմակերպությունը, վորտեղ կուսակցական մասսայական աշխատանքը բավական լավ է և այդ բանն արտահայտվում՝ տեղական բնակչությունից կադրեր առաջ քաշելու և կոփելու գործում: Յեվ պատահական չէ, վոր Միլլերովի կազմակերպությունն ուժեղ է նրանով, վոր մասսայական աշխատանքի հիման վրա կարողացավ տեղական բնակչությունից առաջ քաշել նոր կադրեր, ներգրավել կոլտնտեսական շարժման ղեկավարության մեջ նոր կադրեր և կարողանում է այդ կադրերը կոփել ու առաջ տանել: Կադրերի, ակտիվի հարցը մեր գյուղական կազմակերպությունների համար հանդիսանում է սուր հարց: Կադրերի պահանջն ահագին է, այնինչ արդյունաբերությունից գյուղ տեղաշարժելու նոր կազմակերպող պահեստի ուժերը շատ սահմանափակ են: Ներկայումս ձեռնարկություններում պրոլետարական ուսուցման դպրոցն անցած վորակավորված կադրերի տեսակաբար կշիռն այնքան էլ մեծ չի: Այդ պայմաններում ներկայումս յուրաքանչյուր գյուղական կուսկազմակերպության խնդիրն այն է, վոր կոփի իր կադրերը, ուսումնասիրի աճող կադրերը կոլտնտեսական շինարարության մեջ: Իսկ կոլտնտեսական շինարարության պայքա-

րում, դասակարգային թշնամու և ամեն տեսակ օպորտունիստական տարրերի դեմ տարած պայքարում ստուգված կադրեր ունենք:

Կադրերի ուսումնասիրության, ընտրության գործը խոշորագույն խնդիր է, վորն այժմ կայանում է նրանում, վորպեսզի կուսակցական կազմակերպությունները կարողանան համարձակ ու մարտականորեն առաջ քաշել կոլտնտեսականներից արդեն ծնված, ստուգված նոր կադրերին:

Չնայած նրան, վոր գյուղատնտեսական ԲՈՒՀ երը, տեխնիկումները անցած տարիներում լայնորեն ծավալեցին իրենց աշխատանքները.—այսպես օրինակ՝ ընդունելությունը գյուղատնտեսական ԲՈՒՀ-երում վերջին տարում բարձրացել է 50 տոկոսով հանդեպ 29—30 թվի, գյուղատնտեսական տեխնիկներում սովորում են արդեն 8.000 մարդ, ի դիմաց 5.400 մարդու, գյուղատնտեսական ԲՈՒՀ-երը սկսեցին բաց թողնել բավական մեծ թվով կադրեր, այն է՝ 1929—1930 թվին 420 մարդ և 680—1930—31 թվին—չնայած այս բոլորին, կադրերի կարիքը շատ մեծ է առաջիկա ժամանակամիջոցում:

Ահա թե ինչու մեր բոլոր տնտեսական կազմակերպությունները, կոլտնտեսական կազմակերպությունները չպիտի ժլատանան և լայն ծավալեն ամեն տեսակի կարճատև դասընթացքները՝ կադրերի պատրաստման և վերապատրաստման համար մեր յերկրամասում: Չժլատանալ, այլ գնալ առաջ կարճատև կուրսերի ցանցի ծավալման ուղղությամբ, վորովհետև գյուղատնտեսական ԲՈՒՀ-երն ու տեխնիկումները մոտակա ժամանակաշրջանում չեն կարող տալ հարկավոր չափով կադրեր և բավարարել կադրերի այն սովը, վորը զգացվում է մեր յերկրամասում: Գյուղում տարվող կուսաշխատանքների ընթացքում անհրաժեշտ է դնել մարտական խնդիր՝ 1932 թվին ամեն մի խորհտնտեսության մեջ, խորհտնտեսության ամեն մի բաժնում ունենալ կուսակցական կազմակերպություն: Մենք պետք է հասկանանք, վոր խորտնտեսությունները մնում են, վորպես գյուղատնտեսության սոցվերակառուցման վողնաշարը: Մենք պետք է վճռական կերպով պայքարենք և հակահարված տանք խորհտնտեսական ծավալման օպորտունիստական թերագնահատմանը, վորը (խորհտնտշինարարությունը) մեր յերկրամասում հսկայական տեսակարար կշիռ ունի: Հացահատիկային և անասնապահական խորհտնտեսությունների ապրանքայնությունն այժմ արդեն կազմում է յերկրամասի գյուղատնտեսության այդ ճյուղերի ապրանքայնության մեկ հինգերորդ մասը: Այս պայմաններում կուսկազմակերպությունների 1932 թ. խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի արհեստակցական, կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքները բարձրացնել այնպիսի մակարդակի, վորն ապահովեր խորհտնտեսական շինարարության հետագա հաջողությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, վորն ապահովեր մեր խորհտնտեսությունների աշխատանքների շահեկանության ամրապնդումը:

Միանգամայն պարզ է, վոր չպետք է լինի վոչ մի խոշոր ստանիցա—վորտեղ կա ՄՏԿ—առանց ամուր ստանիցային կուսակցական կոմիտեյի: Կոլտնտեսական շինարարության մեջ 1932 թվին մեր առաջ դրված է հատուկ խնդիր, վորը կայանում է նրանում, վոր անասնապահությունը 1932 թվին պետք է ավելի բարձր մակարդակի վրա

դրվի։ Այս հարցի լուսաբանությամբ պետք է կուսխմբակներ կազմակերպել բոլոր ԿԱՖ-երում, խոզաբուծական ֆերմաներում, վոչխարաբուծական ֆերմաներում, թռչնաբուծական տնտեսություններում այնպես վոր, վոչ մի ԿԱՖ, խոզաբուծական, վոչխարաբուծական ֆերմաներ և թռչնաբուծական տնտեսություն չլինի առանց կուսբջիջի, կուսխմբակի, վորոնք ե՛լ ավելի բարձրացնեյին անասնաբուծական շինարարության գործը։

Այնպիսի պայմաններում, յերբ ռայոնն ամրապնդվել է քաղաքականապես և տնտեսապես, գյուղական կուսկազմակերպությունների խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի կուսակցական-մասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը տեղափոխվի դեպի խորհտնտեսություն, խորհտնտեսության բաժինը, ՄՏԿ, ԿԱՖ-ը, խոզաբուծական ֆերմաները, վոչխարաբուծական և թռչնաբուծական տնտեսությունները։

Հյուսիսային Կովկասի պայմաններում, ուր կան խոշորագույն ստանիցաներ և մանավանդ կոլտնտեսությունների ու ՄՏԿ-ի մանրացման հետևանքով, յերբ ամեն մի խոշոր ստանիցա կունենա ՄՏԿ, յերբ ամեն մի խոշոր ստանիցայում կլինեն մի քանի կոլտնտեսություններ, այդպիսի պայմաններում մենք պետք է հրաժարվենք կուսակցության հենարանային կոմիտեներից, ամրացնենք ստանիցային կուսկոմիտեները, ստեղծենք ուժեղ ստանիցային կուսկազմակերպություններ, վորոնք կարողանան ապահովել անհրաժեշտ ղեկավարություն ՄՏԿ-ների, կոլտնտշինարարության վրա, կարողանան ապահովել անասնապահական տնտեսության անհրաժեշտ վերելքը։

Սակայն, մեր յերկրամասի մի շարք վայրերում (յերկրամասի հյուսիսային մասում), վորտեղ դեռ ևս գոյություն ունեն մեծ քանակությամբ ցրված մանր բնակավայրեր, ազգային մարզերում ևս, վորտեղ նույնպես գոյություն ունի կուսակցական բջիջների նոսր ցանց, —այնտեղ կուսակցական աշխատանքի հենման կետերը պետք է պահպանվեն, վորպեսզի ոգնություն ցույց տրվի մոտակա գյուղերի սպասարկման գործին, վորտեղ բացակայում են կուսկազմակերպություններ, վորպեսզի ոգնություն ցույց տրվի բարձրացնելու մասսայական աշխատանքները լուծելու տնտեսական այն խնդիրները, վորոնք դրված են մեր առաջ գյուղատնտեսության ասպարեզում։ Հենման կետերը, մանավանդ ազգային մարզերի լեռնային ռայոններում, վորտեղ կուսբջիջների ցանցը նոսր է և մեր յերկրամասի մի շարք Հյուսիսային ռայոններում, կունենան իրենց դրական նշանակությունը միայն այն պայմանով, յեթե այդ հենման կետերը կմիացնեն սահմանափակ գյուղական բնակավայրեր և չեն վերածվի յենթառայոնական կոմիտեների։ Նրանք կկատարեն իրենց դերը, այն իմաստով, վոր ավելի մեծ գյուղբջիջը կսպասարկի 3, 4, 5 շրջակա գյուղեր և աուլներ, վորտեղ կուսակցականներ կամ միավորներով են հաշվում, կամ բոլորովին չկան և այդպիսով կբարձրացնի գյուղական կազմակերպությունների, խորհրդների, կոմյերիտ և այլն մասսայական աշխատանքները, գյուղատնտեսության առջև կանգնած խնդիրների համապատասխան բարձրության վրա։

Գյուղատնտեսական կազմակերպությունները, խորհրդային, կոլտնտեսական, կոմյերիտական կազմակերպությունները պետք է իրենց

աշխատանքներում հաշվի առնեն կործանված դասակարգի նոր գործելակերպը, կուլակության մնացորդների գործելակերպը։ Բացարձակ կռվում ջարդված կուլակը փոխում է իր մեթոդները, կոլտնտերի և խորհրդների դեմ բացարձակ յելույթներ կազմակերպելուց անցնում է կոլտնտեսություն խցկվելու մեթոդին, փորձում է ներս խցկվել կոլտնտեսության, կոմյերիտմիության, կուսակցության շարքերը, վորպեսզի կոլտնտեսության, կոմյերիտմիության, կուսակցության ներսից վնասի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի ամրացմանը։ Մենք մի շարք որինակներ ունենք, յերբ կոմյերիտմիության մեջ նույնիսկ հայտնաբերվել են աքսորված կուլակների վորդիներ։ Մենք որինակներ ունենք, յերբ գործարանային կուսկազմակերպության մեջ ներս են խցկվել նախկին առևտրականներ, կուլակներ, սպիտակների մոտ ծառայողներ և այլն տարրեր։ Մենք պետք է այժմ, հաշվի առնելով դասակարգային թշնամու այս գործելակերպը, —ժամանակին և վճռականորեն մերկացնենք նրան և թշնամու փորձերին անխնա հարված տանք։

Մենք պետք է հետագայում փշրենք աջ-ոպորտունիստական տարրերի դիմադրությունը մեր սեփական շարքերում, հարվածենք «ձախլիկ» առաջվազողներին, վարչականության մեթոդներին, հիշելով, վոր միայն ոպորտունիստների դիմադրությունը փշրելով. յետ քշելով «ձախլիկներին», մենք կարող ենք ապահովել տնտեսական-քաղաքական բոլոր կամպանիաների և խնդիրների հաջող կատարումը, վորոնք դրված են մեր կազմակերպությունների առաջ գյուղում։ Ցես չեմ հիշատակելու այն կուսկազմակերպությունները, վորոնց ղեկավարությունը նորոգվել թարմացվել եր, այն իսկ պատճառով, վոր չեյին կարողացել ապահովել առանձին ոպորտունիստական ելեմենտների դեմ պայքարը իրենց կազմակերպության շարքերում։

Միանգամայն ակնհայտ է, վոր յեթե անցած ժամանակամիջոցում կուսկազմակերպությունը գյուղում ձեռք է բերել ամենալուրջ հաջողություններ քաղաքական-տնտեսական կամպանիաների կատարման, կոլտնտեսական ու խորհտնտեսական շինարարության ամրապնդման գործում, ցրելով կուլակին, կուլակության մնացորդներին, փշրելով ոպորտունիստական տարրերի դիմադրությունը, յետ ձգելով մի շարք կազմակերպությունների վարչականության քայլերը, ապա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհով ընթանալու համար, սոցիալիզմ կառուցելու ուղիով ընթանալու համար մեր յերկրային կուսկազմակերպությունը հետագայում ևս պետք է տանի այդ նույն գիծը, յերկու ֆրոնտով ոպորտունիստական տարրերի դեմ անհաշտ պայքար մղելու գիծը, ցրի կուլակության և նրա գործակալների ամեն տեսակի փորձերը սոցիալիստական շինարարությանն արգելակելու գործում։ Հաշվի առնելով, վոր մոտակա ժամանակաշրջանում, ինչպես այդ ասված է ԿԿ վորոշման մեջ, դրված է աշխատավորության լայն մասսաների սոցիալիստական վերադաստիարակման մեծագույն խնդրի համար յեռանդագին աշխատանք տանելը, այս խնդրի համապատասխան, մեր բոլոր կազմակերպությունները՝ կուսակցական, արհմիութենական, կոմսոմոլական, պատգամավորական կազմակերպությունները, վորպեսզի լինեն նրանց լուծման բարձրության վրա, պիտի աշխատեն նոր ձևերով, նոր ձևերով կազմակերպեն

կուլտուրական մասսաներին, ընդգրկել մեր յերկրամասի կոլտնտեսականի լայն մասսաների ակտիվությունը, վորը ուղղված է այն խնդիրների լուծման, վորոնց մասին խոսեց ընկ. Շեբոլդաեը (ծափահարություններ):

4. ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Ընկերներ, անցած շրջանը բնորոշ է կոլխոզային և բանվորական մասսաների կուլտուրական-քաղաքական մակարդակի հսկայական աճումով: Մատնանշեմ այդ ասպարեզում ամենափայլուն ցուցանիշները: Քաղլուսվարական հիմնարկների ցանցի ասպարեզում մենք ունենք աճում, սոցիալիստական կուլտուրայի տների՝ 57-ից մինչև 99. խրճիթ ընթերցարանների՝ 1400-ից մինչև 1900, կարմիր անկյունների՝ 6500-ից մինչև 11 հազար: Չափազանց բնորոշ է, վոր ազգային մարզերում մենք ունենք լենունհինների ակումբների աճը 48-ից մինչև 67, իսկ խրճիթ-ընթերցարանների աճը 270-ից մինչև 348: Կաբարդինա-Բալկարական մարզը ունի կոշերում կարմիր անկյուն կազմակերպելու հաջող փորձ: Քաղլուս հիմնարկների ցանցը իր շոշափուկներն է տարածում յերկրամասի ամենահեռավոր և հետամնաց անկյունները, ինչպես կոշերը:

Պրոֆմիությունների կուլտաշխատանքները այս ժամանակաշրջանում նույնպես նշանակալից չափով վերակառուցվել են դրական ուղղությամբ: Յեթե 1929 թվին ֆիզկուլտուրան կլանում եր նույնչափ միջոցներ, ինչքան վոր արտադրական-լո սավորության, հակակրոնական և անգրագիտության վերացման աշխատանքները, այսինքն 512 հազարից—241 հազար, ու. ապա հիմա—1931 թվին ֆիզկուլտուրայի վրա ծախսված է 15 տոկոս: Առաջ—1929 թվին ինտերնացիոնալ դաստիարակության և ընդհանուր պարտադիր ուսման վրա, բոլորովին վոչինչ չեր ծախսվում, 1931 թվին միջոցները հիմնականում գործածված են ինտերնացիոնալ դաստիարակության, ընդհանուր պարտադիր ուսման, անգրագիտության լիկվիդացիայի, արտադրական լուսավորության, հակակրոնական աշխատանքների համար: Ֆիզկուլտուրան իր արժանի տեղն է գտել: Այդ գործի վրա ծախսված է պրոֆմիությունների կուլտֆոնդի 15 տոկոսը: Յես չեմ ուզում գրավել ձեր ուշադրությունը, կուլտ-մասսայական աշխատանքների ծավալման վրա, սպառկոոպի և մի շարք ուրիշ կազմակերպությունների գծով: Կբերեմ միայն կուլտ-քաղաքական պահանջների աճի ցուցանիշները, բանվորական և կոլտնտեսական լայն մասսաներում:

Կինոյի ցանցը ընդարձակված է 1350-ից մինչև 2300-ի, գյուղում՝ 920-ից մինչև 1600, իսկ ազգային մարզերում՝ 174-ից մինչև 265: Բացի այդ, գյուղում աշխատել են 707 շարժական կինոներ: Ռադիո-կետերի թիվը յերկրամասում ավելացել է 16500-ից մինչև 54 հազար, գյուղում՝ 4000-ից մինչև 26900, իսկ ազգային մարզերում 3900-ից մինչև 7600: Մշտական լրագրերի թիվը յերկրամասում ավելացել է յերկու անգամ, 120 ից հասնելով 236-ի: Մենք ներկայումս 74 ռայոններում թերթեր ունենք և միայն 8 ռայոններում դեռ լրագիր չունենք (Թուրքմենական, Ոտրադնոյի, Ռեմոնտնենսկու, Պրոխլադնենսկու և այլն), այսինքն յերկրամասի համարյա բոլոր ռայոնները ունեն իրենց

մշտական թերթ: Լրագրային արտադրանքն ազգային մարզերում ավելացել է յերկու անգամ, 27 հազար որինակից հասնելով 58 հազար որինակի: Յերկրամասի գրքի արտադրությունը նույնպես ընդլայնվել է: Այդ կատարվում է առանձնապես ազգային մարզերում և ռայոններում: Բնորոշ է, վոր գրքերի մեծ մասը ամեն տեսակի դասագրքեր են: Առաջին անգամ 1931 թվին յերկրամասում սկսվեց հրատարակվել տեխնիկական գրականություն, թեև նրա տեսակարար կշիռը դեռ մնում է աննշան:

Ի՞նչի վրա պետք է ուշադրություն դարձնել աշխատանքների այդ ասպարեզում: Առաջին, քաղլուս-աշխատանքների, առանձնապես ռադիոյի և կինոյի գծով աշխատողների կադրերը, պետք է ուղղակի ասել, բավարար չափով չեն պատրաստված, քաղաքականապես անգրագետ են, մինչդեռ դուք գիտեք, վոր և ռադիոն և կինոն հանդիսանում են չափազանց սուր զենքեր մեր ձեռքում բանվորական և կոլխոզային մասսաների քաղաքական ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկելու համար: Յես, ընկերներ, որինակի համար կարող եյի բերել Նալչիկում պատահած այն փաստը, յերբ ռադիոյով տարածում եյին հակահեղափոխական ֆելյետոն՝ «Ուր ենք մենք գնում, դեպի վոր կողմն ենք ծփում»: Կարող եյի որինակ բերել, յերբ Կրասնոդարում, ռադիոյով դրամական միջոցների մոբիլիզացման համար բնակչության մեջ ագիտացիա մղելու ժամանակ, թույլ եյին տվել լկտիություններ: Յես այդ այստեղ չեմ ասելու (ծիծաղ): Դասակարգային թշնամին փորձ է անում ոգտագործել ռադիոն և կինոն, վորոնք արդեն ընդգրկել են մեր յերկրամասում հսկայական քանակությամբ հանդիսականներ—լսողներ: Այդ պատճառով խնդիր է դրված ուշադրությամբ նայել և ջոկել կադրեր, վորոնք աշխատում են ռադիոյի և կինոյի ասպարեզում: Քաղլուսվարի աշխատանքների ասպարեզում աչքի յե ընկնում կադրերի անսովոր հոսունությունը: Վորպես որինակ, Կրասնոդարի ռայոնը, վորտեղ 19 խրճիթ-ընթերցարաններում, մի տարվա ընթացքում փոխվել են 74 խրճիթվարներ: Ի՞նչպես կարելի է այս պայմաններում իսկապես լուրջ սպասել, գոնե քաղլուսվար աշխատանքների բավարար դրություն:

Մեր յերկրամասը, ինչպես դուք գիտեք, դարձել է վոչ միայն համատարած կոլեկտիվացման, այլ և համատարած գրագիտության յերկրամաս: Անցնող տարում անգրագիտության վերացման ցանցում ընդգրկված է յեղել 815 հազար հոգի և, ինչ հատկապես բնորոշ է, սկսվել է հսկայական շարժում անգրագիտության վերացման համար: Յեթե անցյալ տարում կիսագրագետների ուսուցման ցանցում ընդգրկված եր 150 հազար, ապա այժմ՝ 720 հազար հոգի, այսինքն ավարտելով անգրագիտության վերացումը, ուժերը վերադասավորվում են կիսագրագիտության լիկվիդացիայի համար:

Բայց և այնպես, կիսագրագիտության լիկվիդացիայի ասպարեզում դեռ մեծ աշխատանք ունենք կատարելու: Դեռ վոչ բոլոր կիսագրագետներն են սովորում: Դուք լսեցիք փաստեր, վորոնց մասին յերեկ խոսեց ընկ. Շեբոլդայեը. շնորհիվ կիսագրագիտությունը վերացնելու աշխատանքների անբավարար լինելուն, Կարմիր բանակի զինակոչիկների մեջ մեծ տոկոսով կիսագրագետներ կան: Յերկրամասը ամբողջովին ընդգրկված է ընդհանուր պարտադիր ուսուցմամբ և մի շարք քաղաքներում, մենք ձեռնամուխ ենք յեղել 7-ամյա պարտադիր

ուսուցման։ Յեթե 1915 թվին տարրական դպրոցներում սովորում եյին 344 հազար յերեխա, ապա հիմա յերկրամասում սովորում են 1.135 հազար յերեխա, այդ թվում ազգային մարզերում 118 հազար յերեխա։ Ազգային մարզերի Ադիգեյում, բոլոր դպրոցներում, Օսեթիայում— համարյա բոլոր դպրոցներում, Չերկեզիայում, Կաբարդո-Բալկարիայում, Կարաչայում, Չեչնիայում 80 տոկոս և Ինգուշեթիայում 57 տոկոս, դպրոցներում դասավանդությունը կատարվում է մայրենի լեզվով։

Յերկրամասը 1931 թվին հսկայական հաջողություններ է ձեռք բերել ընդհանուր պարտադիր ուսուցման, անգրագիտության և կիսագրագիտության վերացման ասպարեզում։ Մոտակա շրջանի մարտական խնդիրներից մեկն է՝ ամբողջապես վերացնել կիսագրագիտությունը յերկրամասից։

Յես կցանկանայի այդ կապակցությամբ կանգ առնել մի խնդրի վրա—ուսուցչության դրության վրա։

Ուսուցչությունը մեր յերկրամասում բարեխղճությամբ է իրագործում Կենտկոմի վորոշումը։ Ուսուցչության ակտիվությունը ուսման վորակի բարելավման և պայքարը դպրոցական շինարարության «ձախլիկ» խեղաթյուրումների դեմ ծավալվում է մեր յերկրամասում։ Սակայն գործն առանց խեղաթյուրումների գլուխ չեկավ։ Սևմաշի 19-րդ դպրոցում Կենտկոմի վորոշումը հասկացան վորպես արտադրողական աշխատանքի կիրառման ժխտումը դպրոցում և վերադարձան դեպի հին «մաքուր գիտության» սխոլաստիկական դպրոցը։ Յեղան առանձին «ձախլիկ» խեղաթյուրումներ նաև դպրոցի վերակառուցման ասպարեզում։

Ուսուցչության մեջ դեռ կան Ադամից մնացած մարդիկ, վորոնց դեմ պետք է վճռականորեն պայքարել։ Որինակ, Յեյսկու ռայոնի մի դպրոցում վարժուհին գործածում եր համարյա միջնադարյան միջոցները՝ մազերը խուզել, ճակատներին թանաքով խաչեր նկարել և այլն։ Պատահում են և այսպիսի դաստիարակիչներ՝ չակերտների մեջ, որինակ, մի «դաստիարակիչ» վեցերորդ խմբի մի աշակերտի աշխատանքի վրա, վորի մեջ վերջինս հակահեղափոխական մտքեր եր արծարծում՝ —«Ամերիկան, դա կապիտալիստական յերկիր է, բայց այնտեղ բոլորը ապրում են ազատ և մեկը մյուսին չի խանգարում ապրել։ Այնտեղ կան կապիտալիստներ և կալվածատերեր, բայց նրանք վոչ մի կերպ աշխատավորներին չեն ճնշում։ Բանվորները Ամերիկայի գործարաններում ստանում են համարյա լրիվ իրենց աշխատանքի արդյունքը, իսկ կապիտալիստը յեթե ստանում է ոգուտ, ապա չնչին, համարյա թե բանվորին հավասար։ Այս ճանապարհը և ռուս ժողովրդի կյանքի ճանապարհն է»-գրում է իր յեզրափակումը՝ «առավելապես ուրախալի յե այն, վոր արտահայտված մտքերի մեծ մասը, մտածված և ուղիղ են կազմված և ուղղագրական սխալներ չկան» (Ծիծաղ)։ Այսպիսի «դաստիարակիչների» դեմ մենք պետք է վարենք վճռական պայքար և չենք կարող այդպիսիներին հնարավորություն տալ մեր աճող սերնդին դաստիարակելու։

Կրկնում եմ, ուսուցչությունը հիմնականում բարեխղճորեն է կատարում իր դերը կուլտուրական հեղափոխության հսկայական ծավալման ասպարեզում։ Այդ լույսի տակ մենք պետք է բոլոր կազմակերպություններում վճռական պայքար ծավալենք բյուրոկրատիզմի, ան-

փափկանկատության առանձին արտահայտությունների դեմ ուսուցչության նկատմամբ։

Ստանխորհուրդներից մեկում առաջարկել են դատի տալ ուսուցչին այն բանի համար, վոր նա լամպ չի տվել ստանխորհրդին։ Գուդերմեսում, որինակ, ճաշարանը բոլորին ճաշ է տալիս 60 կոպեկով, իսկ ուսուցիչներին՝ մի ռուբլով։ Նովո-Միշաստովսկայա ստանիցայում սպառկոոպի նախագահը առաջարկում է ուսուցիչներին յերկու որվա ընթացքում տարածել 650 ռուբլու մարկաներ և յերկու որից հետո ուսուցիչներին բոյկոտի յե յենթարկում կոոպերատիվում։

Կան ուսուցիչների աշխատավարձը ժամանակին չվճարելու խայտառակ դեպքեր, դպրոցներին վառելիք հայթայթելու, ինչպես նաև մի շարք դեպքերում ուսուցիչներին մատակարարելու անհոգ վերաբերմունք։ Այդ բոլորի դեմ մենք պետք է խստորեն պայքարենք։

5. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ

Անցած շրջանում խիստ բեկում է կատարվել մեր պրոլետարական կադրեր պատրաստելու գործում։

Միայն Յերկրային ժողտնտխորհի արդյունաբերության գծով 1930 թվին մասնագետներ պատրաստելու կուրսերից անցել են 443 հոգի, իսկ 1931 թվին 884 հոգի։ Գրոզնեֆթը պատրաստում է 500 մարդ, Սևկավուգլ 470 մարդ, Հյուսիսային-Կովկասի յերկաթուղին 670 մարդ։ Բարձրագույն տեխնիկական ուսումնական հիմնարկները (ԲՏՈՒՀ) արդեն ավարտել են 1930 թվին 134 հոգի, իսկ 1931 թվին 447, տեխնիկումներն ավարտել են 1930 թվին 386 հոգի, իսկ 1931 թվին 1812։ Հեռակա ուսմամբ ընդգրկված են 10500 մարդ արդյունաբերության մեջ և 2239 մարդ տրանսպորտի մեջ։

Կոոպերացիայի գծով հիմնված են 51 նոր ուսումնական հիմնարկներ, վորոնք ընդգրկել են 5000 սովորողներ։ Կարճատև կուրսերից անցել են 20000 հոգի։

Բայց, ինչպես գյուղատնտեսության, այնպես ել արդյունաբերության ասպարեզում մենք մասնագիտական կադրերի սուր կարիք ունենք։ Մոտակա յերկու տարում մեր ԲՏՈՒՀ-երը և տեխնիկումները դեռ չեն կարողանում բավարարել կադրերի պահանջը, չնայած նրան, վոր վերջին տարիներում վճռական հառաջխաղացում ունենք այդ ասպարեզում, այս պայմաններում տնտեսական կազմակերպությունները պարտավոր են լայն կերպով ծավալել մասնագետներ պատրաստելու ամեն տեսակի կուրսեր։ VI—VII կուսկոնֆերենցիաների ժամանակաշրջանում Յերկրկոմի կողմից գործուղված աշխատողների քանակն է 7,100 մարդ, V—VI կոնֆերենցիաների ժամանակաշրջանի 3500-ի դիմաց։ Կադրերի բաժանումն կատարվում եր վոչ թե ամենքին քիչ-քիչ, այլ այս կամ այն կազմակերպության նշանակության չափով։

Յերկրկոմի կողմից մեծ աշխատանք է կատարվել տրանսպորտին ֆինանսական և մատակարարման որգանները ամրացնելու ուղղությամբ։ Տրանսպորտին տրված է 26 ինժեներներ և 92 տեխնիկներ, կոոպերացիային—260 պատասխանատու աշխատողներ և ֆինանսական որգաններին—220 պատասխանատու աշխատողներ և 720 կոմյերիտներ։

Բացի տրանսպորտի, կոոպերացիայի, մատակարարման և ֆինանսական օրգանների ամրապնդումից, առանձին հսկողության տակ առնվեցին (աշխատողներով ամրապնդելու մասով) տնտեսական նոր շրջանները—Սելմաշը, Ապշերոնսկու ռայոն, Նավթ, ածխային շրջանները): Բավական է բերել այն փաստը, որ Շախտու ռայոնը գործուղվել են 95 հոգի: Հատկապես դրվեց Նորիս Հյուսիսային Կովկասի կազմի մեջ մտած Դաղստանի Հանրապետության ռայոնները աշխատողների կադրերով ապահովելու խնդիրը, որտեղ, շատ կարճ ժամանակամիջոցում, տեղափոխվեց 90 մարդ:

Ի՞նչպես են ամրացված տնտեսական կազմակերպությունների ղեկավարող կադրերը:

Ցերկրային տնտեսական կազմակերպությունների 1124 ղեկավարներից 90 տոկոսը կուսակցականներ են և 55 տոկոս իրենց սոցիալական դրությամբ բանվորներ են:

Միութենական, հանրապետական, յերկրային միավորների, տրեստական, կոոպերատիվ, խորհտնտեսային, մատակարարման կազմակերպությունների դիրեկտորները, ռայկոլխոզմիությունների նախագահները—բացարձակ մեծամասնությամբ կոմունիստներ են և նրանց 50 տոկոսը բանվորներ: Ավելի վատ է դրությունը միջին հրամկազմի նկատմամբ:

Հյուսիսային-Կովկասի յերկաթուղիների դիրեկցիայի ապարատում բաժինների, յենթաբաժինների վարիչների, հրահանգիչների, տեսուչների միայն 18 տոկոսն են կուսակցականներ: Սեկավուզլում, այդ ողակներում—կուսակցականները կազմում են 15 տոկոս, յերկրային հողային վարչության մեջ՝ 27 տոկոս, Ցերկրային տրակտորային կենտրոնում—25 տոկոս, Զերնոտրեստի—30 տոկոս, Սկոտովոդը—23 տոկոս, Ովցեվոդը—25 տոկոս, Ցերկրային Ժողտնտխորհում—21 տոկոս, Գրոզնեֆթում—41 տոկոս:

Ամբողջապես պարզ է, որ մոտիկ ժամանակամիջոցում մեր առաջ խնդիր է դրված ուժեղացնելու տնտեսական կազմակերպությունների միջին հրամկազմի կուսակցական շերտը:

Հատուկ կերպով դրված է ազգային մարզերի կադրերի տեղայնացման խնդիրը: Անցած շրջանում յերկրամասի կազմակերպությունը այդ տեսակետից մեծ հաջողություններ է ձեռք բերել: Բոլոր ազգային մարզերի գործադիր կոմիտեների նախագահները տեղական ազգությունից են, իսկ ազգային մարզերի ռայոնների գործադիր կոմիտեների նախագահներից 85 տոկոսը տեղական ազգություններից են, աուլ-խորհրդների նախագահները՝ 81 տոկոսով, աուլխորհրդների քարտուղարների ընդհանուր թվի 62 տոկոսը տեղական ազգություններից են, մարզային հողբաժնի վարիչների 75 տոկոսը տեղական ազգություններից են, մարզային դատախազների 87 տոկոսը տեղական ազգություններից են: Բայց և այնպես, ազգային մարզերի միջին օղակների տեղայնացումը բացարձակորեն անբավարար է:

Միջին օղակի 7.300 աշխատողներից տեղական ազգություններից են 889 հոգի, այսինքն 12 տոկոս, իսկ մասնագետների մեջ դրանից էլ պակաս—8 տոկոս:

Ի՞նչ է արված կադրերի պատրաստման տեսակետից: Գյուղատնտեսական բարձրագույն ուսումնական հիմնարկներում 1931 թվի

ընդունվածների 8 և կես տոկոսը տեղական ազգություններից են, տեխնիկական ԲՈՒՀ-երում՝ 9 և կես, Մասժողկոմի ԲՈՒՀ-երում՝ 7 և կես տոկոս: Այս տարին որոշ բան տալիս է:

Ահագին աշխատանք է կատարված ազգային մարզերի համար կոլխոզային կադրեր պատրաստելու տեսակետից—նախապատրաստական կուրսերից անցել են 7950 հոգի: Բայց և այնպես, թե ազգային կազմակերպությունները, թե տնտեսական կազմակերպությունները կադրերի պատրաստման աշխատանքները ծավալում են անբավարար տեմպերով: 3 հազարի վերջին հավաքը յերկրային արդյունաբերության մեջ բացարձակ անբավարար անցավ: 3 հազարի հաշվին ազգային կուսկազմակերպություններն արդյունաբերության մեջ ուղարկեցին միայն 347 հոգի, որոնցից լեռնուհիները՝ ընդամենը 27 հոգի: Ինչի վրա մենք ուշադրությունը պիտի կենտրոնացնենք, այդ տնտեսական հրամանատարական կադրերի ծայր աստիճան հոսունությունն է: Այստեղ հոսունությունը շատ մեծ է: Ահա օրինակներ՝ համամիութենական արդյունաբերության 11 ձեռնարկներից հնգում, յերկու անգամ փոխվել են դիրեկտորներ: 34 Զերնոտրեստի խորհտնտեսությունների դիրեկտորներից 9-ում փոխվել են յերկու անգամ, 5 ում—յերեք անգամ:

ՄՏԿ-ների 160 դիրեկտորներից 45 ՄՏ կայաններում աշխատում են յերկրորդ դիրեկտորներ, 20-ում յերրորդ, 6-ում—չորրորդ դիրեկտորները: Մթերման և մատակարարման 51 կազմակերպությունների ղեկավարներից—18-ում աշխատում են յերկրորդ աշխատակիցներ 5-ում յերրորդ աշխատակիցներ: Ռայկոլտնտմիությունների 79-ից 28—յերկրորդ, 28—յերրորդ, 13—չորրորդ և 1—ում, մի տարվա ընթացքում աշխատում է արդեն 5-րդ նախագահը:

Այս բոլոր փաստերը յես մեջբերում եմ նրա համար, որպեսզի ցույց տամ մի կողմից, թե ինչպես անբավարար ուշադրությամբ և պատասխանատվությամբ են մոտենում հրամանատարական կադրերի ընտրության, և մյուս կողմից ինչպես կուսկազմակերպությունները յերբեմն խարազանում են ու վարկաբեկում ոչ վատ տնտեսական աշխատավորներին: Դուք ինքներդ լավ եք հասկանում, որ մեր տնտեսական կադրերի այսպիսի հոսունության դեպքում, կարելի՞ յե արդյոք պահանջել ռայկոլտնտմիության հինգերորդ նախագահից լավ աշխատանք, կարելի՞ է արդյոք իսկապես լուրջ պահանջ դնել ՄՏԿ-ի չորրորդ դիրեկտորին գոնե բավարար աշխատանքի համար:

Տնտեսական հրամանատական կադրերի հոսունությանը մենք պետք է հայտարարենք վճռական պայքար: Միանգամայն պարզ է, որ այն հսկայական խնդիրները, որոնք 1932 թ. դրված են թե մեր արդյունաբերության և թե գյուղատնտեսության, ինչպես նաև խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների դիրեկտորների և միութենական, հանրապետական ու յերկրային արդյունաբերական ձեռնարկների առաջ, անհրաժեշտ են դարձնում, որպեսզի ղեկավարող կադրերի վրա հատուկ ուշադրություն դարձվի և որպեսզի այդ կադրերը շատ հաճախ չփոփոխվեն: Կադրերը և տեխնիկական ուսուցումը—անքակտելի հարցեր են:

Մեզ մոտ արդեն գոյություն ունի բանվորական կրթության 44 կոմբինատ, որոնք ընդգրկում են մոտ 40.000 բանվորներ: Տեխնիկական կրթությամբ ընդգրկվածների ընդհանուր թիվը հասնում է 90

հազարի, 1930 թվի 23.000-ի փոխարեն: Բայց և՞այնպես տեխնիկական կրթության վորակը անհրաժեշտ բարձրության վրա չէ: Տեխնիկական կրթության մեջ ընդգրկվածների թիվը անբավարար է: Լենինյան գործարանի 1224 կուսակցության անդամներից տեխուսուցման մեջ ընդգրկված են ընդամենը 65 հոգի, իսկ 501 թեկնածուներից միայն 18-ը: Ցեմենտա-շիֆերային գործարանում 119 կուսակցականներից տեխուսուցմամբ ընդգրկված են 23 հոգի, իսկ 78 թեկնածուներից՝ 8 հոգի և այլն և այլն:

Այս ցույց է տալիս, վոր տեխնիկական ուսուցման ասպարեզում, մենք պետք է մեր աշխատանքը բոլորովին այլ ձևով վերակառուցենք: Մենք չենք կարող հաշտվել այն դրության հետ, վոր մինչև անգամ կուսանդամներն ու թեկնածուները կամ բոլորովին չեն ընդգրկված կամ քիչ են ընդգրկված տեխնիկական ուսուցմամբ:

Այդ ինչպես է, վոր կուսակցության անդամներն ու թեկնածուները, այսինքն հիմնական ղեկավար կորիզը առանձին ձեռնարկներում գրեթե ընդգրկված չի տեխուսցմամբ այն պայմաններում, յերբ ընկեր Ստալինի կողմից շեշտակի դրված է տեխնիկային տիրապետելու հարցը: Ի՞նչպես կարելի յե տիրապետել տեխնիկային առանձին ձեռնարկներում բանվորների տեխնիկական ուսուցման ընդգրկման այսպիսի խայտառակ տեմպերով: Այդ հարցի վրա պետք է շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել:

6. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ներկուսակցական աշխատանքների ասպարեզում Յերկրային Կոմիտեն, անցած շրջանում, կատարել է շատ մեծ աշխատանք ռայկուսկազմակերպություններին ոգնելու մտքով:

Ուղարկված է յեղել 83 կազմկուսխմբակներ 643 հոգուց բաղկացած, վորոնցից գյուղական կազմակերպություններն են մեկնել 40 կազմկուսխմբակներ, իսկ արդյունաբերականը—20: Արդյունաբերական կազմակերպություններին ոգնելու, տնտեսհաշվարկը և գործավարձը արմատացնելու և ընկեր Ստալինի ցույց տված պայմանները իրագործելու համար խոշորագույն ձեռնարկություններն են ուղարկված 400 հոգի: Կուսակցության Յերկրկոմը ուղարկեց ամենապատասխանատու բրիգադա, Յերկրկոմի բյուրոյի անդամի գլխավորությամբ Շախտին ոգնելու համար: Բրիգադան Յերկրկոմի Բյուրոյի և Յերկրային Վերահսկիչ Հանձնաժողովի Նախագահության մի քանի անդամների գլխավորությամբ մի ամսվա ընթացքում ոգնեց Սևմաշի կուսկազմակերպությանը:

Դաղստանի կուսկազմակերպության ոգնելու համար այժմ այնտեղ է ուղարկված յերեք կազմկուսխմբակ: Շրջանների լիկվիդացիայից հետո ռայոններն են ուղարկված 1200 շրջանային պատասխանատու աշխատողներից 940 հոգի: Ճիշտ է, ամբողջությամբ վերցրած, Կենտկոմի վորոշումը 90 տոկոսի մասին, չի կատարված, սակայն Յերկրկոմը շատ մոտեցավ այդ չափին:

Այս բոլորից հետո 300 հոգի քաղաքների կազմակերպություններից մոբիլիզացիայի յեն յենթարկված և վերջապես, ընթացիկ աշխատանքների կարգով, ևս 200 հոգի գյուղում մշտական կուսաշխա-

տանքի համար գործուղման շնորհիվ կուսակցական կադրերի թվով 1447 հոգի, վերապատրաստության շնորհիվ ամրապնդվեց ռայոնական աշխատավորների կազմը:

Ռայոնական ղեկավար պատասխանատու աշխատավորների կազմում, բանվորական կորիզը ավելացավ 7 և կես տոկոսով: 1292 հոգի ռայոնական ակտիվի թվում 720 հոգին բանվորներ են, կամ բանվորները կազմում են 55,7 տոկոս: Ռայոնները անկասկած վոտքի կանգնեցին:

Մեր կուսակցական կազմակերպության աճի մասին:

Վերջին մեկ ու կես տարվա ընթացքում յերկրային կուսկազմակերպությունը աճել է 84 000 հոգով: Ըստ վորում, իրենց սոցիալական կազմով բանվորներ են 44 հազար հոգի, իսկ կոլխոզնիկներ՝ 40.000. ծառայողների քանակը աբսալյուտ թվերով, պակասել է 1930 թվի համեմատությամբ: Առանձնապես մեծ աճում կատարվեց կոլխոզնիկների հաշվին: Անցյալ մեկ ու կես տարվա ընթացքում 7000-ի դիմաց այս վերջին մեկ ու կես տարվա ընթացքում ընդունված են 40.000 կոլխոզնիկներ: Մեր կուսակցական կազմակերպությունը իր շարքերում ներկայումս հաշվում է 215.000 մարտիկների, վորոնցից 62 տոկոսը սոցիալական դրությամբ բանվորներ են. ծառայողների տոկոսը 10 տոկոսից իջել է 6 տոկոսի:

Այսպես է Հյուսիսային Կովկասի մեր կուսկազմակերպության դեմքը:

Ո՞վ է մտնում մեր կուսակցության միջ: Կուսակցության մեջ ընդունված բանվորների մեծամասնությունը խոշոր արտադրական ստաժով հարվածայիններ են: Առանձին ձեռնարկներում կատարված քննությունը ցույց տվեց, վոր ընդունված բանվորներից 5 տարուց ավել արտադրական ստաժ ունեցողները կազմում են 60 տոկոս, իսկ մինչհեղափոխության ստաժով՝ 24 տոկոս, այսինքն կուսակցության մեջ ներկայումս ընդունված բանվորների քառորդ մասը—նախահեղափոխական արտադրական ստաժ ունեցող բանվորներ են:

Ի՞նչն է դրդում բանվորներին մտնելու կուսակցության մեջ: Ահա Սևմաշի բանվորներից մեկը գրում է իր դիմումի մեջ. «Նկատի ունենալով Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության հսկայական աճը, յես գործնականում զգում եմ Լենինի կուսակցության ղեկավարության ամբողջ ճշտությունը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու գործում: Յես միշտ տանում եմ հասարակական աշխատանքներ, չեմ կարող այլևս քաղաքական կյանքի կողքից անցնել: Իմ մեծ աշխատանքով յես կոգնեմ կուսակցությանը նրա պայքարում համաշխարհային պրոլետարիատի առաջնության համար»:

Սևմաշի մի բանվորուհի գրում է. «Խնդրում եմ բջիջին ինձ ընդունելու կոմունիստական կուսակցության շարքերը, քանի վոր յես հավատացի կուսակցության գլխավոր գծի ճշտությանը բանվոր դասակարգի շահերի պաշտպանության գործում, և այդ պատճառով ցանկանում եմ լինել ընկերների հետ կուսակցության շարքերում և ոգնել նրա աշխատանքներին»: Մի բանվոր գրում է՝ «Հաշվի առնելով հնգամյակի վճռական տարվա դժվարությունները աշխատանքային ֆրոնտում, յես ցանկանում եմ մտնել կոմկուսի (բ) շարքերը և պարտավորվում եմ կատարել կուսակցության կողմից ինձ առաջադրված բա-

լոր պահանջները»։ Ցեվս մեկը՝ «Խնդրում եմ ցեխբջիջից ինձ ընդունել ՀԿԿ (բ) շարքերը, վորովհետև յես խորհրդային իշխանության գոյության սկզբից մշտապես չեմ հեռացել կուսակցության գծից և արդյունաբերության ու գյուղատնտեսության սոցշինարարության մեծ ծավալումի մոմենտում յես ավելի շատ գիտակցեցի կուսակցության գիծն ու նշանակությունը և այդ պատճառով ի պատասխան առանձին վնասարարների և կապիտալիստական պետությունների, Խորհրդային Միության դեմ պատրաստվող պատերազմի, յես այլևս չեմ ուզում կուսշարքերից դուրս մնալ»։

Ահա, ընկերներ, ինչ կադրերի հաշվին է լրացվում մեր շարքերը, ահա ովքեր են մտնում մեր կուսակցության շարքերը։

Ի՞նչ խնդիրներ են դրված ներկայումս մեր առաջ։ Կուսկազմակերպությունները բոլոր յեզրակացությունները պետք է անեն հարվածայնության, տնտեսհաշվարկային բրիգադների և բանվոր դասակարգի ակտիվության այն հսկա շարժումից, վորը մենք ունենք ներկայումս յերկրամասում և վորն առանձնապես արտահայտվեց քաղխորհրդների, արհմիութենական և կուսկազմակերպությունների հաշվետու-վերընտրողական կամպանիաներում։ Այդ նոր կադրերից, վորոնք աճել են տնտեսհաշվարկի, ինքնարժեքի իջեցման, ընկեր Ստալինի ցուցմունքների համար մղած պայքարում, պետք է ավելի համարձակ վերցնել նոր լրացումը, նրա համար, վորպեսզի լուծվի ձեռնարկների յուրաքանչյուր բրիգադայում կուսխմբակ կազմելու խնդիրը, վորը ղեկավարի բանվորների շարժումը հանուն մրցության, հարվածայնության, հանուն արտադրողականության բարձրացման, հանուն կոմունիստական վերաբերմունքի դեպի աշխատանքը։

Պետք է ավելի լավ աշխատանք տանել թեկնածուների հետ։ Ցեթե 1929 թվին թեկնածուներից անդամության են փոխադրվել 37 տոկոս, ապա 1930 թվին փոխադրումն իջել է մինչև 26 տոկոսի։ Կան խայտառակ փաստեր այդ ուղղությամբ։ Լենգործարանում մի ընկեր, վորը թեկնածությունից անդամ է փոխադրվել 1930 թվի ապրիլին, մինչև այժմ չի կարող ստանալ կուստոմսը։ Այդպիսի ապշեցուցիչ փաստերի մենք հանդիպեցինք նաև Միկոյանի անվան գործարանում։ Թեկնածուների մեջ տարվող աշխատանքը, կուսկազմակերպիչների աշխատանքները պետք է շատ ավելի լավ դրվեն։ Կուսկազմակերպիչներին գործարանային կուսկազմակերպությունները պետք է լավ օգնեն, քանի վոր վերջին վերընտրական կամպանիան մեզ տվեց կուսկազմակերպիչ-հրահանգիչների հիանալի կադրեր, բայց կուսստաժով շատ յերիտասարդ—30, 31 թվից։ Այնտեղ, վորտեղ կուսկազմակերպությունը աշխատում է կազմակերպիչների հետ, այնտեղ կուսկազմակերպիչի աշխատանքը տալիս է խոշորագույն արդյունք բրիգադայի արտադրական խնդիրը կատարելու տեսակետից։

7. ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵՆԻՆՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԿԸ

Ընթացիկ շրջանում կուսուսուցման գործը մեծ ծավալ է ունեցել կուսկազմակերպությունների մեջ։ Բավական է ցույց տալ հետևյալ փաստերը. կուսլուսավորության ցանցում ընդգրկվածների թիվը 170

հազարից հասել է մինչև 240 հազարի։ 15 կուսդպրոցներում սովորողների քանակը 2.000-ից բարձրացել է 3.700 հոգու, կոմունիստական բարձրագույն ուսումնական հիմնարկներում—678-ից մինչև 1.100 հոգի, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում, վորը պատրաստում է մեզ համար թեորիական կուսակցական կադրեր, 22-ից մինչև 73, կարմիր պրոֆեսուրայի նախապատրաստական բաժնում 58-ից մինչև 108 հոգի։ Ընդարձակվել են կոմունիստական համալսարանի յերեկոյան աշխատանքները, վորն ունի իր բաժանմունքները Սելմաշում, ծխախոտի գործարանում (ДГТФ), Միկոյանում, Լենգործարանում։ Կոմհամալսարանի յերեկոյան աշխատանքում ընդգրված են 500 հոգի։ Լայն կերպով ծավալվել է, այս ժամանակամիջոցում, հեռակա ուսումը։ Կոմհամալսարանը հեռակա կուրսերի ձեռնարկումներով ընդգրկել է 14 հազար 2.200-ի դիմաց։ Խորհրդային կուսակցական դպրոցը (СПШ) հեռակա ուսումը ավելացրել է 2.900-ից մինչև 4.900։ Կուրսային միջոցառումները (Գելենջիկի կուրսերը, միջռայոնական կուրսերը) յերկու անգամ ավելացրել են և ընդգրկում են 10.000 հոգի։

Բավական նշանակալից են Կենտկոմի պրոպ խմբակների աշխատանքները։ 1930—31 թ. գոյություն ունեյին այդպիսի 5 խմբակներ։ Յերկրկոմի 5 պրոպխմբակներն աշխատում եյին յերկրամասի արդյունաբերական կուսկազմակերպություններում։ Աշխատում եյին յերկու մշտական խմբակներ, ամեն մեկի մեջ 12 հոգի կոմվուզականներ Շախթու և Ապշերոնսկու ռայոններում։ Այս բոլորը ցույց են տալիս այն, վոր կուսակցության շարքերի թեորիական-գաղափարական սպառազինման ասպարեզում աշխատանքները ծավալվել են բավականին ընդլայնված ֆրոնտով։

Բայց և այնպես, մենք պետք է ուշադրություն դարձնենք այն բանի վրա, վոր ուսուցմամբ ընդգրկումը հետ է մնում այն ցուցմունքից, վորը տվել է Յերկրային Կոմիտեն, վորը խնդիր եր դրել կուսկազմակերպություններին, կուսուցմամբ ընդգրկել կուսանդամների 60%, թեկնածուների 100% և 40% անկուսակցական, սովորողների կազմում։

Առայժմ, կուսակցության անդամների 49, իսկ թեկնածուների 69 տոկոսն է ընդգրկված ուսուցմամբ, իսկ այնպիսին, ինչպիսին, ասենք, Կրասնոդարի ռայոնն է, ուսուցմամբ ընդգրկել է միայն 26 տոկոս։ Տիմաշևսկու ռայոնը 35 տոկոս, Կարաչայի կուսկազմակերպության մեջ 40 տոկոս։ Հաճախումը նույնպես մեծ չէ՝ 50—55 տոկոս, իսկ առանձին կազմակերպություններում—նույնիսկ 35 տոկոս։ Ահա թե ինչու մենք գտնում ենք, վոր մեր կուսկազմակերպությունների պատրաստման և գաղափարական—թեորիական սպառազինման ասպարեզում աշխատանքները դեռ անբավարար են և վոր այդ տեսակետից պետք է շատ ավելի վճռական քայլերով առաջ գնալ, ի նկատի ունենալով, բացի դրանից, վորպես հատուկ խնդիր, կոմյերիտին օգնել, կոմդաստիարակչական գործում ընդգրկելով կոմյերիտական կազմակերպությունը։ Յերկրորդը, վորի վրա հարկավոր է ուշադրություն դարձնել, այդ այն է, վոր հեռակա ուսուցումը, վորը բավական լայն է ծավալվել, սպասարկվում է շատ վատ։ Վատ է սպասարկվում այն պատճառով, վոր մեթոդական ցուցմունքներով և գրականությամբ օգնությունը թույլ է դրված, վորի հետևանքով հեռականների միայն 30 տոկոսն է ակտիվ աշ-

խատում։ Մնացածները չեն աշխատում, վորովհետև ոգնությունը թույլ է դրված։

Ազգային մարզերի նկատմամբ մենք պետք է հասնենք այն բանին, վոր խորհրդային-կուսակցական դպրոցներում, վորոնցից մենք քիչ չունենք յերկրամասում, ուսուցումը կատարվի մայրենի լեզվով։

Վերջապես, այն, վորի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել, այդ մեր կազմակերպություններում կուս-քաղաքական, լուսավորական աշխատանք տանող, մեր կուսանդամներին և թեկնածուներին թեորիապես զինող կադրերի ընտրության խնդիրն է։ 17 ռայոնների 220 հաստիքավոր պրոպագանդիստներից միայն 39 տոկոսն է բանվոր ըստ սոցդրության, իսկ կուսակցության մեջ մտնելու ժամանակի տեսակետից 25 տոկոսը 30—31 թվից. կրթության տեսակետից ավելի բավարար պատրաստություն ունեցողները կազմում են 50 տոկոս։

Կադրերի ընտրության գործն ավելի խստությամբ պետք է կատարել, քանի վոր մենք չենք կարող թույլ տալ, վոր կոմունիստների գաղափարական պատրաստության գործը գտնվի թույլ ձեռքերում։ Ընկեր Ստալինի նամակը, նրա քննարկումը մեր յերկրամասի գիտական և գիտական-հետախուզական շրջաններում ցույց տվավ, վոր մենք մեր թեորիական կադրերի ասպարեզում վոչ բավարար բարենպաստ պայմաններումն ենք գտնվում։ Վոչ բավարար բարենպաստ պայմաններում—այն մտքով, վոր նրանց շարքերում կան մեծ քանակով շփոթողներ, իսկ յերբեմն մեզ խորթ հայացքների սխալ մաքսանենգներ։

Այդ հիման վրա կուսակցության Յերկրկոմն իր առաջ խնդիր դրեց ուշադրությամբ ընտրել և վերանայել ԲՈՒՀ-երի հասարակական քաղաքական առարկաների դասավանդողների կազմը։ Զէ՞ վոր այն մարդկային մատերիալը, վորը գնում է ԲՈՒՀ-երը, տեխնիկումները, շատ բարենպաստ մատերիալ է—մեծ մասամբ բաղկացած է բանվորներից, վորոնք անց են կացել քաղաքացիական կռիվների, կոլտնտեսական և արդյունաբերական շինարարության շկոլան և այդ բարենպաստ մատերիալը յերբեմն ընկնում է վոչ բոլորովին վստահելի ձեռք, վոչ բոլորովին վստահելի հացթուխների ձեռքը։ Այդ հացթուխները կարող են թխել այդ մատերիալից վոչ այն, ինչ վոր մենք ենք ուզում։ Ընկեր Ստալինի նամակն անսովոր սրությամբ դրեց մեր կուսակցական կազմակերպությունների կադրերի գաղափարական-թեորիական մակարդակը բարձրացնելու անհրաժեշտ խնդիրները։ Պետք է էլ ավելի աշխատել մեր կուսկազմակերպության շարքերի գաղափարական-թեորիական սպառազինման ուղղությամբ։ Միայն այդ պայմաններում մենք կարող ենք իսկապես վոր մեր կուսակցության անդամների գաղափարական և թեորիական դաստիարակությունը դնել ավելի բարձր աստիճանի վրա։

Ընկեր Ստալինի նամակի քննարկումը մեր մի շարք կազմակերպություններում, վոչ բոլորովին ճիշտ ուղղություն ստացավ։ Փոխանակ բացատրելու ընկերների առանձին սխալները, վորոնք չեյին կապված նրանց տեսակետների ընդհանուր սիստեմի հետ և վորոնք գիտակցել են այդ սխալները, մի շարք կազմակերպություններ պատժելու և կուսակցությունից դուրս անելու մեխանիկական ճամբով գնացին։ Այսպիսի մոտեցում թույլ տալ չի կարելի։ Սակայն այդ չի նշանակում, վոր մենք պետք է թուլացնենք պայքարն առանձին

տարրերի դեմ, վորոնք յերևան են բերում տրոցկիստական հայացքների սիստեմ մեր կուսակցության մեջ, վորոնք փորձում են կանդրաբանդ կերպով քաշել այդ հայացքները և կեղտոտել մեր կուսակցության անդամների և կոմսոմոլիստների մտքերը—այսպիսով հուսալով իրենց համար կադրեր պատրաստել։

8. ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ ԱՆՀԱՇՏ ՊԱՅՔԱՐԸ—ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԻՄՔՆ Է

Յերկրային կազմակերպությունը դասակարգային թշնամու, յերկու ֆրոնտով ոպորտունիզմի դեմ տարվող պայքարում մեծ հաջողություններ ձեռք բերեց ընթացիկ տարում, մասնավորապես գյուղատնտեսության վերակառուցման ասպարեզում։ Դա Հյուսիսային Կովկասի կուսկազմակերպության մարտունակության ամենալայն ապացույցն է։ Սակայն, վորպեսզի Հյուսիսային Կովկասի կազմակերպության մարտունակությունն ավելի մեծ լինի, մենք պարտավոր ենք անհաշտ լինել ներսից կրծող ամեն մի տարրի հանդեպ։ Իսկ ներսից կրծողներ յեղել են մի շարք կուսկազմակերպություններում։ Բավական է բերել Բլոգոդարնենսկու կազմակերպության որինակը՝ Սոչու, Սևերսկու, Անապայի, կազմակերպություններում յեղած փաստերը։ Այստեղ մենք ունեյինք ղեկավարության կազմալուծման փաստեր։ Բնորոշն այն է, վոր հիշյալ կազմակերպություններից և վոչ մեկը թեկուզ քիչ շատ բավարար չափով չի կարողացել գլուխ բերել քաղաքական-տնտեսական կամպանիաների անցկացումը։ Գործը սկսվում էր «փոքրից» կոլեկտիվ արբեցողությունից, փողոցում և հիմնարկում ղալմաղալ անելուց և վերջանում էր միմիանց ծածկելով։ Նման փաստերի դեմ հաջողությամբ պայքար տանելու հիմնական պայմանը առաջվա նման պետք է լինի ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի հետագա ծավալումը մեր կազմակերպության շարքերում։

Տագանրոգի կազմակերպության որինակը ցույց է տալիս, վոր նույնիսկ առողջ ինքնաքննադատության ծավալման անբավարար ապահովման առանձին սխալներն իզուր չեն անցնում և այդ սխալներն անդրադառնում են առանձին ձեռնարկություններում բանվորների ակտիվության վորոշ կոծկման վրա։ Այս որինակը չափազանց բնորոշ է, նա պետք է հաշվի առնվի ամբողջ Հյուսիսային Կովկասի կազմակերպության կողմից։ Բանվոր դասակարգի մասսայական կազմակերպությունների և առաջին հերթին կոմյերիտմիության մեջ ակտիվության ծավալումն ապահովելու համար, կուսակցական կազմակերպությունն որինակ պետք է ծառայի, թե ինչպես պետք է ապահովել ինքնաքննադատության ծավալումը և ներկուսակցական դեմոկրատիան։ Ահա թե ինչու, ընկերներ, մենք պետք է ինքնաքննադատության ճնշման ամեն տեսակի փորձերի դեմ պայքարենք, որինակ, Անապայի կազմակերպության մեջ դեռ վերջերս մենք ունեյինք բանթղթակցական աշխատանքի ճնշման խայտառակ դեպք։

Գինու կոմբինատում Հոկտեմբերյան տարեդարձի որը տեղի ունեցած խնճույքից հետո, թերթերում գրված էր հոդված՝ «11-րդ խնճույքից հետո», վորտեղ նկարագրվում էր գինու կոմբինատի աշխատանքի քայքայումը։ Կուսկոմիտեյի բյուրոն հավաքվեց, քննարկեց այդ հոդվածը և, խմբագրին այն բանի համար, վոր նա զետեղել էր

այդ հոդվածը, հանդիմանություն արեց և պարսավեց խմբագրին, հոդվածի հեղինակներից մեկին վռնդել բանկորների շարքից, այն պատրվակի տակ, որ նա խորթ տարր է, խցկվել է բանկորների շարքը, իսկ պարզվեց, որ հեղինակը բանվոր է, հասարակական գործիչ: Այսպիսի անարգ փաստերը պետք է ստանան դաժան և վճռական հակահարված: Դրանք տանում են կուսկազմակերպության կյանքը դեպի անշարժություն և կուսկազմակերպության ղեկավարության լճում: Յեթե մենք ուզում ենք, որեն ապահովել մեր կուսկազմակերպության շարքերի մարտունակությունը, մենք պետք է ապահովենք, ինչ գնով էլ լինի, էլ ավելի խոր ինքնաքննադատության և ներկուսակցական դեմոկրատիայի ծավալումը մեր շարքերում:

Ազգային մարզերի կուսկազմակերպությունները նույնպես անցած ժամանակաշրջանում ձեռք են բերել լուրջ արդյունքներ իրենց աշխատանքներում: Մեկ—յերկու տարի առաջ յեղած դրության հետ համեմատած, ազգային կուսկազմակերպությունները չի կարելի ճանաչել: Սակայն, մի շարք ազգային կուսկազմակերպություններում, նրանց առանձին ներկայացուցիչների միջև յեղել են տատանումներ և խմբավորումներ սարքելու և խմբակային պայքար մղելու փորձեր:

Այդ տատանումները, յերերումները և խմբակցական պայքարի կազմակերպման փորձերը, բղխում եյին ընդհանուր, սոցիալիստական շինարարության արշավի ծավալումից ազգային մարզերում և հանդիսանում են կուլակային-մոլլայական տարրերի ճնշման հետևանք: Բավական է օրինակ բերել Չեչնիայի կուսկազմակերպության կյանքից, որտեղ ազգային ակտիվի մի շարք ղեկավար ընկերների կողմից յեղան կուսակցության քաղաքականությունն ըստ եյության ուղղել ի շահ կուլակի և այդ հիման վրա կազմակերպել խմբակային պայքար ղեկավարության դեմ: Ավելի սրված դասակարգային պայքարի պայմաններում, որը գոյություն ունի ազգային մարզերում, այնտեղ յեղած դժվարությունների պայմաններում հնարավոր են նույնանման յերևույթներ: Յերկրկոմը նման փաստերի դեմ պայքարել է, հետագայում ևս ցրելու յե խմբակային պայքար կազմակերպելու ամեն տեսակի փորձերը:

Անհրաժեշտ է կանգ առնել մեծապետական շովինիզմի փաստերի վրա, որոնք գոյություն ունեն դեռ մեր մի շարք կազմակերպություններում: Յես չեմ խոսի «Կարմիր Աքսայ» գործարանի կուսկազմակերպության կյանքում տեղի ունեցած հայտնի փաստերի մասին: Յերկրկոմը և Յերկրային ՎՀ բոլոր կազմակերպություններին կոչ արեցին այդ փաստերից դասեր վերցնել և ապահովել լենինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառումը: Այդ դոկումենտը լայն կերպով մշակվեց յերկրային ամբողջ կուսկազմակերպության կողմից: Այնուամենայնիվ մենք պետք է ասենք, որ մեծապետական շովինիզմի մնացորդներ, խայտառակ փաստեր դեռ տեղի յեն ունենում:

Յես կբերեմ Նովոռոսիյսկից ստացված մի դոկումենտ, որը ստացվել է 1932 թ. հունվարի 6-ին: Սուխումի շոսեյի վրա գտնվող № 1 հանրակացարանում տեղի յե ունեցել հետևյալ դեպքը. ժամը տասն ու մեկին յերկու բանվոր կապել են մահճակալին մի ուրիշ, հույնազգային փոքրամասնության պատկանող բանվորին և սկսել են ծեծել նրան: Ծեծվողի ձայնից ներս է վազում հավաքարարուհին, բայց նա

վոչնչով չկարողացավ օգնել: Բանվորներից մեկը շարունակում եր ծեծել, իսկ մյուսը, որն օգնել եր մահճակալին կապելուն, կանգնել եր կողքին և բարեմտորեն ժպտում եր: Այս դեպքի, խայտառակ, միջնադարյան փաստն ասում է այն մասին, որ մեզ հարկավոր է նորից բարձրացնել կուսկազմակերպությունները մեծապետական շովինիզմի ժայթքոցների դեմ պայքարելու:

Յերկրային կուսակցական կազմակերպությունն ուժգնորեն կռվել է և կռվում է օպորտունիստական խեղաթյուրումների դեմ յերկու ֆրոնտում, մասնավորապես աջ թեքման դեմ, որպես ներկա ետապում գլխավոր վտանգի: Մեր խնդիրն է հանդիսանում՝ հետագայում ևս շարունակել պայքարը կուսակցության գլխավոր գծի մաքրության համար:

Դուք բոլորդ գիտեք Յեսենտուկու կուսկազմակերպության դժբախտ դասը, որը չապահովեց պայքարն ընդդեմ աջ օպորտունիստական պրակտիկայի և «ձախլիկ» առաջվազումների իր շարքերում, որի հետևանքով կուսկազմակեիպությունն անկման դրության հասավ:

Յերկրկոմը նորերս ստացավ Տուապսեյի կուսկազմակերպության քարտուղար ընկ. Ագապիտովից մի բնորոշ փաստաթուղթ—մի նախկին կուսակցության անդամի դիմում, որտեղ ասված է՝

«Գործնական աշխատանքներում թույլ եմ տվել մի շարք ամենակոպիտ սխալներ, որոնք ուղղված են յեղել կուսակցության գլխավոր գիծը թուլացնելուն: Չեյի հավատում ԽՍՀՄ-ի ժողտնտեսության հնգամյա պլանով նախատեսնված սոցիալիստական շինարարության: Դուրս եյի գալիս զրպարտական յելույթներով, թե տեղի յե ունենում Ղրիմի միջակության և նույնիսկ չքավորի քայքայումը»:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ աջ օպորտունիստների առանձին յելույթները շարունակում են դեռ տեղի ունենալ:

Այս դրությունը պետք է ազդանշան տա, որպեսզի կազմակերպությունն առաջվա նման լինի անհաշտ և զգոն, յերկու ֆրոնտում օպորտունիզմի, հաշտվողականության, և փթած լիբերալիզմի դեմ պայքարելու համար

Մեր կուսակցական կազմակերպությունը խոշոր հաջողություններ է ձեռք բերել իր միաձուլության և կուսակցության գլխավոր գծից յեղած ամեն տեսակի շեղումների, հանդեպ այդ շեղումները յեղած հաշտվողական տրամադրությունների դեմ մղված անհաշտ պայքարի հիման վրա: Այս հիման վրա մեր Հյուսիսային Կովկասի կուսակցական կազմակերպությունը հաջողությամբ կլուծի այն խնդիրները, որոնք դրված են մեր առաջ 1932 թվին և կապահովի սոցիալիստական հետագա հաղթական շինարարությունը (յերկարատև ծափահարություններ):

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ՅԵՐԿՐԱՅԻՆ VII ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՅԵՐԿՐԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Կուսակցության գլխավոր գծի վճռական հաղթանակները, սոցիալիզմի շինարարության վիթխարի հաջողությունները, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը հանդիսանում են բանվոր դասակարգի համաշխարհային պատմական հաղթանակները:

Ամբողջ կուսակցության հետ միասին, ամբողջ ֆրոնտում սոցիալիզմի ծավալուն հարձակման քաղաքականությունը կիրառելու հիման վրա Հ-Կովկասի կազմակերպությունը ձեռք բերեց ահագին հաջողություններ յերկրամասի ինդուստրացման և արդյունաբերության ծավալման գործում (արդյունաբերության արտադրանքն աճում ե 1931 թվին 24 տոկոսով). հիմնականում ավարտված ե համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա—կուլակության վերացումը վորպես դասակարգ: Հնգամյակը չորս տարում ավարտելու հնարավորությունն ապահովված ե: Համայնացած տնտեսությունը դարձել ե գերիշխող ուժ յերկրամասի ամբողջ տնտեսության մեջ (մինչև 90—95 տոկոս): Գործնականում հաջողությամբ վճռվում ե ազգային հարցը, հաղթահարվում են առանձին ազգությունների պատմական-տնտեսական և կուլտուրական անհավասարությունը:

Ընկեր Ստալինի վեց պայմանները կյանքում կիրառելու համար մղվող համառ պայքարը, տնտեսհաշվարկի հետևողական կիրառումը, ձեռնարկություններում յեղած «ձախլիկ» հավասարեցման, աշխատավարձի վերակազմության և տեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարն ապահովեցին վերջին ժամանակներս արդյունաբերության աշխատանքների զգալի հառաջադիմություն. արդյունաբերության վճռական բնագավառների (նավթ, ածուխ, ցեմենտ) արտադրական պլանների կատարումը, վորոնք առաջադրված եյին Կենտրոնի կողմից:

Աճող և ամրացող խորհտնտեսային ու կոլտնտեսային շինարարությունն ապահովեց գյուղատնտեսության ընդհանուր և ապրանքային արտադրանքի ահագին ավելացումը (ավելի, քան 1 ու կես անգամ): Բոլշևիկյան պայքարը հանուն կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման, հանուն նոր ճյուղերի տիրապետության (անասնապահության, տեխնիկական բույսերի), ընդդեմ կուլակային ազդեցության և մանր սեփականատիրական տրամադրությունների—ապահովեց կոլտնտեսությունների վերելքն ավելի բարձր աստիճան:

Ապահովված ե յերկաթուղու և ջրային տրանսպորտի աշխատանքների լավացումը:

Անկասկած փաստ ե բանվորական մասսաների նյութական դրության և կենցաղային սպասարկման հետագա բարելավումը:

Բանվոր դասակարգը և նրա ղեկավարությամբ կոլտնտեսային գյուղացիությունը, վոր դարձել ե խորհրդային իշխանության ամուր հենարանը գյուղում, ցույց տվին աշխատանքի մեծագույն հերոսության, կուլտուրական չտեսնված աճի և հասարակական—քաղաքական ակտիվության օրինակներ:

«Առաջին հնգամյակի սոցիալիստական շինարարության կարևորագույն հանրագումարը հանդիսանում ե կապիտալիզմի արմատների վերջնական խախտումը գյուղում, վորը նախորոշում ե կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը և դասակարգերի ամբողջական վոչնչացումը: Սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումը ԽՍՀՄ նշանակում ե, վոր «ով-ում» լենինյան հարցադրումը և գյուղում և քաղաքում ամբողջովին ու անվերադարձորեն լուծված ե հօգուտ սոցիալիզմի» (Կենտկոմի թեզիսներ):

Համկոմկուսի (բ) Յերկրկոմի կողմից կուսակցության գլխավոր գծի բոլշևիկյան կիրառման, տեսականում և գործնականում յեղած ամեն տեսակի թեքումների դեմ տարվող անհաշտ պայքարի, բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաներին լենինիզմի դրոշի տակ համախմբելու հետևանքով—Հյուսիսային Կովկասի կուսկազմակերպությունն ընթացիկ ժամանակամիջոցում ձեռք ե բերել վիթխարի հաջողություններ յերկրամասի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, ազգային քաղաքականության ճիշտ կենսագործման, կուլտուրական շինարարության, բանվոր դասակարգի և կոլտնտեսականների նյութական դրության բարելավման գործում,

Ցերկրային 7-րդ կուսկոնֆերենցիան ամբողջությամբ յեվ լրիվ հավանություն ե տալիս Ցերկրկոմի աշխատանքին, քաղաքական յեվ կազմակերպչական գիծը համարում ե ճիշտ:

Կոնֆերենցիան ամբողջությամբ և լրիվ միանալով Կենտկոմի թեզիսներին՝ յերկրորդ հնգամյակի մասին, անհրաժեշտ ե համարում հնգամյակի ավարտական տարվա առաջադրությունների հաջող իրագործումով ապահովել յերկրորդ հնգամյակի համար Կենտկոմի թեզիսներով առաջադրված խնդիրների լուծումը, վորի (հնգամյակի) հիմնական քաղաքական խնդիրն ե «կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերություն ու շահագործում առաջացնող պատճառների լրիվ վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումն անդասակարգային սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների» (Կենտկոմի թեզիսները), թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության մեջ լրիվ վերակառուցման ավարտման և նոր տեխնիկական բազա ստեղծելու հիմունքներով:

Կոնֆերենցիան առաջարկում ե Յերկրկոմին, գործնական աշխատանքում առաջնորդվել հետևյալով—

I.

Ապահովել 1932 թ. ընդհանուր արտադրանքի և կապիտալ ներդրումների աճման ավելի բարձր նորմաներ, համեմատած անցյալ տարվա հետ և ձգտել ոչ միայն կատարելու, այլ նաև գերակատարելու արդֆինպլանները:

Դատապարտել, վորպես աջ ոպորտունիզմի արտահայտություն, ներժուծումը կրճատելու, անբավարար հայթայթման անվան տակ ամեն տեսակի փորձ արդյունաբերության բոլշևիկյան տեմպերը նվազեցնելու ուղղությամբ: Պարտավորեցնել տեղական կազմակերպություններին ծավալելու լայն աշխատանք հանդիպական պլանների համար—առանձնապես մետաղի, ածուխի, նավթի և ցեմենտի ասպարեզներում:

Մատնանշելով այն լուրջ թերությունները, վորոնք տեղի յեն ունեցել 1931 թվի արդֆինպլանների կատարման գործում և մանավանդ ինքնարժեքի իջեցման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջադրանքների թերակատարման գործում— կոնֆերենցիան վճռականորեն ընդգծում է արդյունաբերության աշխատանքների վորակային բոլոր ցուցանիշների անառարկելի իրագործման անհրաժեշտությունը և մատնանշում է, վոր արտադրական-ֆինանսական պլանները կարող են կատարված համարվել միայն այն պայմանով, յեթե կատարվեն արդյունաբերության աշխատանքների բոլոր վորակային ցուցիչները, մանավանդ աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և արտադրանքի վորակի բարելավման ապահովման պայմաններում:

Անհրաժեշտ է ամենակարճ ժամանակաշրջանում ավարտել ձեռնարկությունների աշխատանքները վերակառուցելու գործը, սովորել «ղեկավարել և աշխատել նոր ձևով», ձգտել գործնականորեն կիրառելու ընկ. Ստալինի 6 պայմանները, վորը նշանակում է հաստատ կերպով կիրառել տնտեսհաշվարկը, արտադրության տեխնիկայի տիրապետումը, «ձախ» հավասարեցման վերջնական վոչնչացումը աշխատատավարձի ասպարեզում, դիմազրկության ու հոսունության վերացումը բանվորական ուժի ասպարեզում, բանվորի անձնական նյութական շահագրգռվածության կապակցումը սոցմրցության և հարվածայնության հետ, հատկապես նրա բարձր ձևերում (տնտեսհաշվարկային բրիգադներ, հերթա—հանդիպական պլանավորումն և այլն):

1932 թիվը պետք է հանդիսանա վոչ միայն առաջին հնգամյակի ավարտական, այլ և յերկրորդ հնգամյակի նախապատրաստման տարի, վորը պետք է յերկրամասի արդյունաբերության զարգացման ուժեղ արագացում առաջացնի, բարձրացնի յերկրամասի արդյունաբերության տեսակարար կշիռը (նավթ, ածուխ, մետաղ, մեքենաշինարարություն, քիմիա, ելեկտրոշինարարություն) Միության արդյունաբերության մեջ և դրանով հենց առաջ քաշի Հյուսիսային Կովկասը յերկրի հիմնական արդյունաբերական շրջանների թվում, ապահովելով միաժամանակ յերկրամասի դերը վորպես գյուղատնտեսական նյութերի խոշորագույն արտադրիչ:

II.

Կոնֆերենցիան հավանություն է տալիս «կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման» մասին Ցերկրկոմի 1932 թվի հունվարի 15-ի վորոշմանը, հատկապես ընդգծելով մինչև 1934 թիվը ամբողջ յերկրամասում գյուղատնտեսական պրոցեսները (հերկ, ցանք, բերքահավաք) մեքենայացնելու, գիգանտ կոլտնտեսությունները և բրիգադները փոքրացնելու, աշխատանքը գործավարձի հիման վրա կազմակերպելու (աշխօրերով գնահատված), կանխավճարները տարվա ընթացքում կոլտնտեսություններին սիստեմատիկորեն տալու, բրիգադները հողամասերին ամրացնելու և վորպես փորձ, արտադրանքի քանակի համաձայն բրիգադի հետ հաշիվներ տեսնելու խնդիրները:

Կոնֆերենցիան առաջադրում է 1932—33 տարվա ընթացքում ասցանասնաբուծության պրոբլեմը հիմնականում լուծելու խնդիրը, անասնաբուծական խորհ. տնտեսությունները և ապրանքային անասնաբուծական կոլտնտեսական ֆերմերն ամրապնդելու և նրանք մեքենայացնելու միջոցով:

Ցերկրամասի տնտեսության մեջ տեխնիկական և հատուկ մշակույթների (բամբակի, բրնձի, գենագերչակի, ծխախոտի, կաուչուկատվի, այգե-խաղողաբուծական մշակույթների) գգալի և էլ ավելի բարձրացող տեսակարար կշիռը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել այդ մշակույթները յուրացնելու, նրանց բերքը բարձրացնելու և վերամշակման պրոցեսները մեքենայացնելու վրա:

Կոնֆերենցիան առաջարկում է ժամանակին նախապատրաստել և անցկացնել գարնանային գյուղատնտեսական աշխատանքները, վորոնք պահանջում են կազմակերպությունների վողջ ուժերի լարում, նրանց հաջող անցկացման համար:

Այս դեպքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սերմացուն լիովին հավաքելու, տրակտորները, գյուղատնտեսական ինվենտարը ժամանակին և լավ նորոգելու և ձիերին լավ խնամելու վրա, նկատի ունենալով, վոր ձին պիտի վորոշի առաջիկա ցանքսի կամպանիայի յելքը:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հիման վրա մոտ ժամանակամիջոցում վերջնականապես պետք է ավարտվի համատարած կոլեկտիվացումը և կուլակության վերացումը վորպես դասակարգ (բացի լեռնային ռայոններից և ազգային մարզերի մի մասից):

Կոնֆերենցիան հատկապես ընդգծում է խորհտնտեսությունները ամեն կերպ ամրապնդելու անհրաժեշտությունը, նրանցում կատարված վերակառուցման, ապրանքայնության բարձրացման և խորհտընտեսությունների նոր շինարարության հետագա ծավալման հիման վրա:

III.

Կոնֆերենցիան բացառիկ նշանակություն է տալիս յերկաթուղային և ջրային տրանսպորտի աշխատանքների հետագա բարելավմանը և վճռական վերակառուցմանը, վորը դարձել է նեղ տեղերից

մեկը և արգելակում է Հյուսիսային Կովկասի ամբողջ տնտեսության զարգացմանը։

Անհրաժեշտ է ապահովել ապրանքաշրջանառության հետագա աճումն այն չափերով, վորոնք համապատասխանեն յերկրամասի տնտեսության համապատասխան աճմանը։ Կոնֆերենցիան առանձին նշանակություն է տալիս ձմեռային փոխադրումների հաջող կատարմանը, ճանապարհների բեռնատարողության անհապաղ ուժեղացման և շոգեկառքերի ու վագոնների աշխատանքների վորակային ցուցիչների բարելավմանը։

Կոնֆերենցիան պարտավորեցնում է Յերկրկոմին անհապաղ, գործնականորեն ձեռնարկել Մանիչի պրոբլեմի լուծմանը, վորպես Միության հարավ-արևելյան ջրային տրանսպորտի հիմնական պրոբլեմ։

IV.

Կոնֆերենցիան մի անգամ ևս ընդգծում է, վոր ընթացիկ տնտեսական տարվա վճռական խնդիրն է հանդիսանում՝ արդյունաբերության և տրանսպորտի մեջ արտադրական պլանների վորակային ցուցիչների կատարումը, աշխատանքի արտադրողականության աճման և ինքնարժեքի իջեցման առաջադրանքների անառարկելի կատարումը, բանվորական ուժի քանակության համապատասխանեցումը պլանի կատարման հետ, նույնպես և արտադրության վորակի բարելավումը։ Գյուղատնտեսության մեջ—ագրոտեխնիկայի պահանջների ստույգ կատարումը (աշխատանքի ժամկետներ, ցանքաշրջանի գործադրում, կռիվ վնասատուների և վորոմների դեմ), նույնպես և կռիվ բերքատվության կորուստների դեմ։

Վորակային ցուցիչների թերակատարումը պետք է գնահատվի վորպես արտադրական պլանների վիժում, վորովհետև դա ըստ եյության հենց այդպիսին է հանդիսանում։

V.

Խորհրդային առևտրի ծավալումը հանդիսանում է բանվորների և աշխատավորների մատակարարումը բարելավելու, սպառողի մատակարարման գործում յեղած թերությունների և բյուրոկրատական խեղաթյուրումների վերացման վճռական նախապայմաններից մեկը։ Անհրաժեշտ է լայնորեն ծավալել ձեռնարկների ինքնամթերումը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում, կազմակերպել խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների առևտուրը պետական գներով, թե ի հաշիվ պլանի, նույնպես և պլանից ավելի՝ մթերումների պլանը բարեխղճորեն կատարելու և ձեռնարկներում ու խորհրդային շուկաներում կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կրպակային ցանցի ծավալումն ապահովելու պայմանով։

Կոնֆերենցիան ընդգծում է, վոր բանվորական մատակարարման և հասարակական սննդի բարելավման անհրաժեշտ պայմանն է հանդիսանում սննդագործական արդյունաբերության ծավալումը, այդ արդյունաբերության արտադրական պլանների կատարումը և գերակատարումը և արտադրանքի վորակի բարձրացումը։

VI.

Անհրաժեշտ է յերկրամասի արդյունաբերական հիմնական քաղաքներում (Ռոստով, Շախտ, Գրոզնի, Տագանրոգ, Նովոռոսիսկ և ուրիշներ) ապահովել բնակարանային շինարարության և կոմունալ սպասարկման (ելեկտրոքարշ, ջրմուղ և այլն) այնպիսի աճում, վորն անցներ բանվոր բնակչության աճումից և պայմաններ ստեղծեր բանվորական հիմնական մասսաների բնակարանային դրության բարելավման համար։

Անհրաժեշտ է ծավալել լայն մասսայական աշխատանքներ և հենց իրենց, մասսաների լայն ինքնագործություն բնակարանային-կոմունալ շինարարության և գոյություն ունեցող բնակարանային տարածության ոգտագործման, նույնպես և հասարակական խնդիրների շուրջը։

Հավանություն տալով Յերկրկոմի վորոշմանը Ռոստովում քաղաքային կոմիտե ստեղծելու մասին, պարտավորեցնել վերջինիս կենտրոնացնել իր ուշադրությունն ինչպես արտադրության հարցերի վրա, նույնպես և մասնավորապես բանվորների նյութական-կենցաղային հարցերի սպասարկման, բնակարային-կոմունալ շինարարության և մասնավորապես Ռոստովում բնակարանային և կոմունալ շինարարության մասին Յերկրկոմի 1931 թ. 20/VIII վորոշման իրագործման վրա։

VII.

Կոնֆերենցիան խնդիր է դնում—1932 թվին ամբողջովին վերացնել անգրագիտությունը Հյուսիսային Կովկասում։ Սրա հետ միասին կոնֆերենցիան մատնանշում է, վոր ներկա պայմաններում կիսագրագիտությունը, տեխնիկական և քաղաքական անգրագիտությունն անտանելի չարիք են հանդիսանում և պարտավորեցնում է կենտրոնացնել ջանքերը կիսագրագետների, սակավավորակ բանվորների և բանվորուհիների, կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների ուսուցման գործի, նույնպես և նրանց քաղաքական դաստիարակության վրա, նկատի ունենալով պատրաստել նրանցից սոցիալիստական շինարարության ակտիվ և լուսավորված մասնակիցներ։

Կոնֆերենցիան բավականությամբ մատնանշում է Յերկրկոմի վորոշումն ընդհանուր սկզբնական կրթության մասին, հաստատում է յերկրամասի արդյունաբերական բոլոր քաղաքներում 7-ամյա ուսուցում մտցնելու վորոշումը և անպայման պարտականություն է դնում վճռականորեն բարելավելու ուսման վորակը դպրոցում։ Կոնֆերենցիան հատկապես ընդգծում է կինոյի և ռադիոյի ցանցի տարածման անհրաժեշտությունը թե քաղաքում և թե մանավանդ գյուղում և աուլում։

Համարելով, վոր կադրերի պատրաստման խնդիրը հետագայում ևս հանդիսանալու յե սոցիալիստական շինարարության հաջողության վճռական պայման, կոնֆերենցիան պարտավորեցնում է՝ ապահովել ինչպես արդյունաբերական, նույնպես և գյուղատնտեսական տեխնիկական կադրերի պատրաստման և վերապատրաստման աճման գործը, համապատասխան այն պահանջների, վորը դնում է ժողովրդական տնտեսությունը։

VIII.

Լենինյան ազգային քաղաքականությունն իր գործնական իրացումն է գտնում ազգային մարզերում (օբլաստ) և Հյուս. Կովկասի ազգային փոքրամասնությունների միջև։ Մի շարք ազգություններ առաջ են յեկել սոցիալիստական շինարարության առաջավոր դիրքերը, ինչպես տնտեսական, նույնպես և կուլտուրական շինարարության մեջ (Ադիգեյ, Հյուս. Օսեթիա, Կաբարդ-Բալկարիա, Չերքեզիա)։ Ակնհայտ է, որ մնացած ազգային մարզերի հարթավայրերում կոլեկտիվացման պրոցեսը՝ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և կոլտնտեսությունների առավելությունների լայն պարզաբանման հիման վրա, կընթանա յերկրամասի առաջավոր ազգային մարզերի ճանապարհով։ Լեռնային ռայոնների վերաբերմամբ պահանջվում է շարունակել կուլակության վճռական սահմանափակման քաղաքականությունը, ապահովելով չքավորության և բատրակների համախմբման հետագա աշխատանքը, կոոպերատիվ արտադրական միությունների (անասնապահական ընկերություններ և այլն) նախնական ձևերի գործադրումը, լեռնային անասնապահության և այգեգործության վերակառուցումը և խորհտնտեսությունների կազմակերպումը։

Կոնֆերենցիան խնդիր է դնում՝ ամեն կերպ զարգացնել արդյունաբերությունն ազգային մարզերում, ինչպես արդեն հայտնաբերված բնական հարստությունների հիման վրա, նույնպես և այդ հարստությունների հետագա արագ հայտնաբերման և նրանց համապատասխան արդյունաբերական օգտագործման միջոցով։

IX.

Կոնֆերենցիան գտնում է, որ սոցիալիստական շինարարության ամենաէյական և անհրաժեշտ պայման հանդիսանում է ամենալայն մասսայական աշխատանքի ծավալումը, բանվորների և կոլտնտեսականների, հատկապես բանվորուհիների ու կոլտնտեսուհիների ել ավելի ներգրավումը—ակտիվ մասնակցելու այդ շինարարությանը։

Միայն մասսաների ակտիվության, ինքնագործունեյության հետագա աճը, լայն բոլշևիկյան ինքնաքննադատությունը, սոցմրցման և հարվածայնության ծավալումը կարող են ապահովել նշանակված առաջադրությունների կատարումն ու գերակատարումը, նույնպես և տնտեսել միջոցները, բարձրացնել աշխատանքի վորակը և հաջող պայքարել բյուրոկրատիզմի և գործնական աշխատանքի ուրիշ խեղաթյուրումների դեմ։

Այս կամ այն դժվարությունները հաղթահարելու համար բանվորական և կոլտնտեսական մասսաններին կազմակերպելու և մասսայական աշխատանք տանելու փոխարեն մերկ վարչական կարգադրությունների, ինքնաքննադատության ճնշմանը և ունտերպրիշիբեևյան վերաբերմունքին, վորպես կուսակցության գծի խեղաթյուրում, պետք է ամենադաժան հակահարվածը տալ։

Սրան համապատասխան, առանձին սրվածությամբ դրված է մասսայական կազմակերպությունների (խորհուրդներ, արհմիություններ, ՀԿԿՅԵՄ, կոոպերացիա և այլն) աշխատանքների հետագա բարելավման խնդիրը, նախ և առաջ նրանց աշխատանքի վորակի և բովանդակության խնդիրը։ Այդ կազմակերպությունները պետք է ապահո-

վեն մասսայական աշխատանքների ծավալումը անմիջականորեն ստորին արտադրական օղակում (բրիգադա, խմբակ և այլն), ընդգրկելով ամեն մի առանձին բանվորի և կոլտնտեսականի, նույնպես և ապահովեն մարդկանց ճիշտ դասավորումն ու ամեն մի վորոշման ստուգման կազմակերպումը վերից մինչև վար։

X.

Կոնֆերենցիան մատնանշում է, վոր չնայած կուլակության խորտակման և վոչնչացման, վորպես դասակարգ, ամենակատաղի դասակարգային պայքարը շարունակվում է նոր ձևերով, քանի վոր յերկրում գոյություն ունեն դասակարգեր։ Վճռական պայքարը կուլակային ազդեցության ամեն տեսակ արտահայտությունների դեմ կոլտնտեսություններում, բուրժուական ձգտումների դեմ խորհտնտեսություններում, ամեն տեսակ վնասարար, կորզող և աշխատանքի կարգապահությունը քայքայող տարրերի դեմ ձեռնարկություններում, նեպմանական վոգու դեմ առևտրող կազմակերպություններում—հանդիսանում են հիմնական խնդիր—հաղթահարելու դասակարգային թշնամու դիմադրությունը սոցիալիստական շինարարության ներկա ժամանակամիջոցում։

Սրա հետ միասին, բանվորների և առաջին հերթին ձեռնարկությունների նոր յեկածների և կոլտնտեսական գյուղացիության դաստիարակման համար մղվող համառ աշխատանքը, դեպի աշխատանքը յեղած իսկական կոմունիստական վերաբերմունքը, մանր-բուրժուական յերևույթների վերացումը և այլն—կարող է ապահովել աշխատավորական լայն մասսաների վերադաստիարակումը վորպես սոցիալիստական հասարակության գիտակից աշխատողներ։

XI.

Հ-Կովկասի յերկրային կուսկազմակերպության հաջող աճը վերջին տարում, մասնավորապես գյուղական կուսկազմակերպությունների կազմի զգալի ընդլայնումը վկայում է կուսակցության ճիշտ քաղաքականության մասին և բանվորական ու կոլտնտեսական լայն մասսաների հարատև վստահության մասին դեպի կուսակցության ղեկավարությունը։

Կոնֆերենցիան ընդգծում է, վոր սոցիալիստական շինարարության հաջողությունները, մասսաների քաղաքական ակտիվության աճն ապահովում են յերկրամասի կուսկազմակերպության հետագա ընդարձակումը։ Կոնֆերենցիան կազմակերպության աճի կարգավորման գլխավոր խնդիրը համարում է բանվորական կորիզի տեսակարար կշռի բարձրացումը, կուսշարքերն ավելի ուժեղ կերպով ներգրավելով առաջավոր հարվածային պրոլետարներին, տնտեսհաշվարկային բրիգադների մասնակիցներին և այլն։

Գյուղում կուսկազմակերպության աճը պետք է ընթանա խորհտնտեսությունների բանվորների և իսկական լավագույն կոլտնտեսականների հաշվին, վորոնք ստուգվել են հացի պայքարում հացամթերումների ընթացքում, վորոնք տալիս են աշխատանքին վերաբերվելու լավագույն օրինակներ և ակտիվ աշխատում են կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար։

Ազգային կուսկազմակերպություններում առաջվա պես դրված է կոմունիստների տեսակարար կշիռը բարձրացնելու խնդիրը—տվյալ ազգության հաշվին։

XII.

Չնայած յերկրամասի կուսկազմակերպության գաղափարական-քաղաքական մակարդակի վորոշ բարձրացմանը, ընկեր Ստալինի «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին» նամակի քննարկումը ցույց տվեց, վոր անհրաժեշտ է վճռապես բարձրացնել կուսկազմակերպության լայն մասսաների մարքս-լենինյան դաստիարակությունը, լուրջ և խորն ուսումնասիրել Լենինին նախ և առաջ կուսակցության ակտիվի կողմից և բարձրացնել տեսական ու քաղաքական զգոնությունը—լենինիզմի խեղաթյուրումների դեմ յեղած բոլոր պայքարներում։ Միաժամանակ կուսկազմակերպության զգալի աճն և սոցիալիստական շինարարության խնդիրների բարդացումը նույնպես ամբողջ սրությամբ դնում են կոմունիստների ամբողջ մասսայի մարքս-լենինյան դաստիարակության բարձրացման հարցը։ Այդ նույն խնդիրը կոմյերիտմիության աշխատանքում կենտրոնական տեղ է բռնում։

Միայն կուսակցության բոլոր անդամների գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման պայմանով ապահովված կլինի հարկ յեղած պայքարն ընդդեմ աջ և «ձախ» ոպորտունիզմի ամեն տեսակի արտահայտությունների։

Վճռական պայքարն յերկու ֆրոնտում, ինչպես տեսականում, այնպես և գործնական աշխատանքում, ընդդեմ աջ թեքման հին ու նոր արտահայտությունների, հակահեղափոխական տրոցկիզմի, «ձախլիկ» թռչկոտումների, հաշտվողականության և փտած ազատամտության դեմ, կարող է ապահովել կուսակցության գլխավոր գծի նոր հաղթանակները։

XIII.

Կոնֆերենցիան մատնանշում է, վոր միջազգային դրությունը, ճգնաժամի հետագա խորացումը և կապիտալիզմի հակասությունների աճը մոտեցնում են համաշխարհային նոր սպանդանոցը, ել ավելի անմիջական են դարձնում իմպերիալիստների զինված փորձը—խեղդելու Խորհրդային Միությունը, վորը հանդիսանում է համաշխարհային հեղափոխության հենարանը։ Խաղաղ շինարարության զուգընթաց, հնգամյակը 4 տարում կատարելով ու գերակատարելով, յերկրամասի կուսկազմակերպությունը պարտավոր է ել ավելի համառությամբ ամրացնել յերկրի պաշտպանությունը և Կարմիր Բանակը։

* * *

Կոնֆերենցիան հաստատ համոզված է, վոր Հ. Կովկասի կազմակերպությունը Կենտկոմի ղեկավարությամբ, գլուխ ունենալով ընկեր Ստալինին, սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելու վերաբերյալ կուսակցության վերջին վորոշման իրականացման գործում կլինի առաջին շարքերում, այնպես, ինչպես նա հանդիսացավ համատարած կոլեկտիվացման քաղաքականության իրականացման և կուլակության վորպես դասակարգ վոչնչացման գործում, առաջին նախաձեռնողը։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԲԱՆԱՁԵՎԸ

ՅԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ—ԲԱՆԳՅՈՒՂՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I.

Լսելով և քննարկելով ընկեր Նովոսելովի զեկուցումը ՅեՎՀ ԲԳՏ աշխատանքների մասին, Յերկրային 7-րդ կուսկոնֆերանսը նշում է, վոր ՅեՎՀ—ԲԳՏ-ը տարել է վճռական և անհաշտ պայքար կուսակցության գլխավոր գծից թեքումների դեմ, ամենից առաջ ընդդեմ աջ թեքման, վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» խոտորումների, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի, ընդդեմ հաշտվողականության թեքումների հանդեպ, ընդդեմ հակահեղափոխական տրոցկիստական կոնտրաբանդի և փթած լիբերալիզմի։ Քննադատության և ինքնաքննադատության ծավալման հիման վրա Յերկրային ՎՀ—ԲԴՏ-ն անողոք կերպով բաց եր անում և մերկացնում թեքումների կոնկրետ կրողներին, մաքրում եր կուսակցության շարքերն ոպորտունիստական տարրերից, ձգտելով ել ավելի համախմբելու կուսկազմակերպությունները կուսակցության գլխավոր գծի, Լենինյան Կենտկոմի շուրջը, վճռականորեն արմատախիլ անելով հիվանդագին յերևույթներն առանձին կազմակերպություններում։

Յերկրային 7-րդ կուսկոնֆերանսը Յերկրային Վերահսկիչ Հանձնաժողովի քաղաքական գիծը համարում է ճիշտ և տարած գործնական աշխատանքները՝ բավարար։

Ծավալուն սոցիալիստական շինարարության պայմաններում ՅերկրՎՀ—ԲԳՏ մեծ աշխատանք է տարել յերկրամասի ներքին միջոցների մոբիլիզացիայի, խորհրդային, կոոպերատիվ և տնտեսական ապարատի վերակառուցման, պարզացման և եժանացման, նրա (ապարատի) աշխատանքի վրա մասսայական-պրոլետարական հսկողությունն ուժեղացնելու և խորթ, բյուրոկրատական, ոպորտունիստական տարրերից մաքրելու ասպարեզներում, ինչպես նաև կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման, կուսակցական և կոլխոզային մասսաներին քաղաքական-տնտեսական կամպանիաները հաջողությամբ անցկացնելու համար մոբիլիզացիայի յենթարկելու, առանձին խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում նկատվող բուրժուական և կուլակային տենդենցները հաղթահարելու, ընկեր Ստալինի 6 պատմական պայմաններն իրագործելու գործում։

Հենվելով բանվորական մասսաների ակտիվության վրա, Յերկրային ՎՀ—ԲԳՏ վերացրեց յերկրամասի ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերի աշխատանքների մի շարք պակասությունները և այսպիսով նպաստեց հնգամյակը 4 տարում լոզունգի իրագործմանը, սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցման հաջողմանը, յերկրամասում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտելու և կուլակին վորպես դասակարգի վերացնելու գործին։

II.

Յելնելով սոցիալիստական հարձակման հետագա ծավալման խընդիրներից, մեր յերկրամասի ինդուստրացման տեմպերն ուժեղացնելու խնդրից, յերկրային կուսկոնֆերանսը ՅեՎՀ—ԲԳՏ-ն հանձնարարում է.

1. Վճռական պայքար տանել հնգամյակի 4-րդ տարվա պլանների կատարման և գերակատարման և առանձնապես վորակային ցուցանիշների համար, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի վորակի բարձրացման համար։ Հենվելով մասսաների վրա, ՎՀ—ԲԳՏ որգանները պետք է ձգտեն ստալինյան 6 պայմանների իսկական իրագործման, վորն իսկապես կապահովի մեր առաջ կանգնած չորրորդ ավարտական տարվա խնդիրների կատարումը՝ ձեռնարկությունների, խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների կողմից։

2. Սիստեմատիկ կերպով ստուգել ձեռնարկների և ռացիոնալացման և մասնագիտական աշխատանքները, ցույց տալով մշտական ոգնություն բանվոր-գյուղացիներին իրենց աշխատանքում, ապահովել կուսակցության դիրեկտիվի անպայմանորեն իրագործումը ձեռնարկների միջև յեղած փորձի լայն փոխանակության, խորհրդային և արտասահմանյան տեխնիկայի նվաճումներն ոգտագործելու մասին, վճռականորեն պայքարելով բանվորական առաջարկների և գյուտերի հանդեպ բյուրոկրատական վերաբերմունքի դեմ։

3. Կենտրոնացնել իր ուշադրությունն ել ավելի համառ պայքար տանելու արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության ներքին միջոցները հայտնաբերելու և մոբիլիզացիայի յենթարկելու, յերկրամասի տնտեսության արտադրական հնարավորություններն ամեն կերպ մեծացնելու, տեղական հումույթի և վառելանյութի հիման վրա արդյունաբերության նոր ճյուղերի ծավալման, այն արդյունաբերության ծավալման, վորն ազատում է մեզ ներմուծումից, յերկրամասի բնական հարստություններն ուսումնասիրելու վրա, ՎՀ—ԲԳՏ որգանների ուշադրությունը հրավիրելով կուսակցության դիրեկտիվները ստուգելու արդյունագործական կոոպերացիայի առավելագույն ծավալման՝ վոչ դեֆիցիտային հումույթի տեսակները մշակելու համար և արդյունաբերության և գյուղատնտեսության մնացորդներն ոգտագործելու մասին։

4. Մշտական հսկողության տակ առնել տրանսպորտի աշխատանքը և ձգտել նրան, վոր ամենակարճ ժամանակամիջոցում իրագործվի Կենտկոմի հուլիսյան և հոկտեմբերյան պլենումի վորոշումները և ընկեր Անդրեևի հրամանը յերկաթուղային տրանսպորտի մասին, անպայմանորեն ապահովելով շոգեկառքերի և վագոնների դիմադրկության լիկվիդացիան, շարժական կազմի ոգտագործման բարձրացումը, կրճատել շոգեկառքերի և վագոնների անարդյունավետ կանգնումը, ռեմոնտի վորակի բարձ-

րացումը, գործարանների և դեպոների առավելագույն բեռնավորումը և հիվանդ շոգեկառքերի և վագոնների կրճատումը, փոխանակման կետերի աշխատանքների կարգավորումը և ծավալումը։

Ծովային և գետային տրանսպորտի ասպարեզում ապահովել նավերի առավելագույն ոգտագործումը, կրճատել անարդյունաբեր կանգնումը, արագացնել բարձումը և բեռնաթափումը և այդ աշխատանքների մեքենացումը, ժամանակին պատրաստվել նավարկության սեզոնին, ավացնելով նավահանգիստների դրությունը։

5. Յելնելով աշխատավորական մասսաների մատակարարման խնդրից, ապահովել ՎՀ—ԲԳՏ որգանների ուշադրության բարձրացումը դեպի թեթև արդյունաբերության աշխատանքները, վորն արտադրում է լայն գործադրության առարկաներ։

6. Հատուկ ուշադրություն դարձնել անտառային արդյունաբերության աշխատանքներին, վորը հանդիսանում է յերկրամասի արդյունաբերության ամենահետամնաց ճյուղը, նշանակալից չափով չկատարելով հնգամյա պլանի խնդիրները և ամենակարճ ժամանակամիջոցում ձգտել այն բանին, վոր հիմնական բեկում կատարվի այդ աշխատանքներում, հիմնական խնդիր դնելով մթերված անտառանյութերի դուրս բերման մեքենայացումը, բանվորական մշտական կադրերի ամրացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, փայտերի ջրով տեղափոխման ոպերացիայի ճիշտ և ժամանակին կազմակերպումը։

7. Ուժեղացնել ուշադրությունը շինարարական խնդիրներին, առանձնապես կարևորագույն ձեռնարկումների և արդյունաբերության և ազգային ռայոնների կուլտուր-կենցաղային շինարարությանը, ձգտելով նրա տեմպերի արագացման, շինարարական աշխատանքների վորակի բարձրացման, շինարարության արժեքի իջեցման, ավելորդությունների վերացման, մեքենաների ավելի լավ և ավելի լրիվ ոգտագործմանը շինարարական աշխատանքներում և լիկվիդացիայի յենթարկելով բանվորական ուժի հոսունությունը, ամրապնդելով նախահաշվային դիսցիպլինան։

8. Իր ամենորյա հսկողության տակն առնել կուսակցության դիրեկտիվների կատարումը մեր յերկրամասի քաղաքների կոմունալ տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման մասին, առաջին հերթին յերկրամասի կենտրոնի և հիմնական արդյունաբերական ռայոնների, մոբիլիզացիայի յենթարկելով կոմունալ շինարարության խնդիրների շուրջը կուսակցական և բանվորական մասսաներին, անողոք պայքար տանելով կոմունալ տնտեսության վերակառուցման ամբողջ կարևորությունը թերագնահատողների դեմ, սիստեմատիկ կերպով ստուգելով ՀամԿԿ (բ) Կենտկոմի և Յերկրկոմի այդ մասին կայացրած վորոշումների կատարումը։

III.

Յերկրամասի գյուղատնտեսության հետագա վերելքի նպատակով և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման, սեփականատիրական տրամադրությունների հաղթահարման և կուլակային ազդեցության անողոք վոչնչացման հիման վրա, խորհտնտեսությունների, մանավանդ անասնաբուծական և տեխնիկական կուլ-

տուրանների ծավալման հիման վրա, կոնֆերենցիան, հանձնարարում է
ՅեկրՎՀ—ԲԳՏ-յան։
1. Մշտական հսկողություն ունենալ աշխատանքի ճիշտ կազմա-
կերպման, դիմազրկության և հավասարեցման վերացման, ադմինիս-
տրատիվ-վարչական ծախսերի կրճատման, գյուղատնտեսական աշխա-
տանքների բոլոր պրոցեսներում խսկական գործավարձը մտցնելու, աշ-
խատանքի արտադրողականությունը և կարգապահությունը բարձրաց-
նելու, կոլտնտեսությունների պարտավորությունները հանդեպ պե-
տությանը կատարելու վրա։
ՎՀ—ԲԳՏ-ն օրգանները պետք է ակտիվ կերպով պայքարեն կոլ-
տնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման մա-
սին Յերկրկոմի կայացրած վորոշման, յերկրամասի համատարած կո-
լեկտիվացման ավարտման և կուլակության վերջնական լիկվիդացիայի
համար։
2. Տանել անողոք պայքար մասսայական աշխատանքը մերկ վար-
չականությամբ փոխարինելու, ինչպես նաև ոպորտունիստական ինքնա-
հոսի դեմ, հանուն կազմակերպչական ներգործության կոլտնտեսու-
թյունների բոլոր աշխատանքների դրա ղեկավարող և պլանավորող
օրգանների ու մեքենա-տրակտորային կայանների կողմից։
3. Մոբիլիզացիայի յենթարկել տեղական բոլոր ՎՀ—ԲԳՏ-ներին
և նրանց մասսայական հսկողության ստորին օղակներին, 3-րդ բոլ-
շևիկյան գարնանացանին մարտականորեն նախապատրաստվելու հա-
մար, ապահովելով ժամանակին ուժերի դասավորումը, արտադրական
պլանների մշակումը, նրանց ՄՏԿ ի ամե մի բանվորին, ամեն մի կոլ-
տնտեսականին հասցնելը, գյուղատնտեսական մեքենաների և տրակ-
տորների պատրաստությունը և լծկան անասունի խնամքը։
4. Ծավալել լայն աշխատանք գյուղատնտեսության մեջ կորուստ-
ների դեմ պայքարելու, ագրոտեխնիկական միջոցառումների լայն կի-
րառման և կոլտնտեսական մասսաներին այդ խնդիրների շուրջը մո-
բիլիզացիայի յենթարկելու համար։
5. Տանել ամենավճռական պայքար սովխոզների կողմից կուսակցու-
թյան գիծն աղավաղելու, նրանց մեջ թափանցող բուրժուական տեն-
դենցների դեմ, սովխոզների աշխատանքների օրինակելի կազմակերպ-
ման համար, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակա-
ռուցման առաջավոր ձեռնարկների, ցանքսի և բերքահավաքի կամպա-
նիաներին ժամանակին պատրաստվելու համար։
Առանձին ուշադրություն դարձնել տրակտորների և քարշի ուժի
առավելագույն օգտագործման, առաջավոր տեխնիկայի յուրացման,
սպասարկող կադրերի պատրաստման, կորուստների դեմ պայքարելու վրա։
6. Ուշադրության կենտրոնը դարձնել յերկրամասի անասնապահու-
թյան պրոբլեմի լուծման վրա, մշտական հսկողության տակ առնել անաս-
նապահական սովխոզների աշխատանքը, վորպես սոցիալիստական անաս-
նապահության առաջավոր հատվածի, կենտրոնացնել գլխավոր ուշա-
դրությունը հոտի բազմացման և քանակի ավելացման վրա, վճռակա-
նորեն կրճատելով կորուստները, հոտի սպասարկումը բարելավելով,
ճիշտ դնելով անասնաբուժական գործը, ժամանակին և ամբողջությամբ
կատարելով սովխոզների շինարարության պլանը, ապահովելով կերով և
ստեղծելով կերի բազա։ Անասնապահության ծավալումն ազգային մար-

զերում և առանձնապես լեռնային ռայոններում պետք է ԲԳՏ-ն օր-
գանների մշտական հսկողության տակ լինի։

IV.

Կոնֆերանսն առաջարկում է Յերկրային ՎՀ—ԲԳՏ-ն հետագայում
նույնպես վճռական պայքար տանել խորհրդային, կոոպերատիվ և
տնտեսական ապարատի բարելավման, այդ ապարատի վերակառուց-
ման համար, համաձայն նոր ձևով աշխատելու խնդիրներին, ձգտելով,
վորպեսզի մեր ապարատն օգտագործի սոցիալիստական սիստեմի բոլոր
առավելությունները տնտեսական և կուլտուրական շինարարության
համար։
Այդ նպատակների համար կոնֆերանսը հանձնարարում է Յերկր-
ՎՀ—ԲԳՏ-ն
1. Ապահովել ԿՎՀ-ի 3-րդ պլենումի վորոշման անպայման կա-
տարումը կոոպերացիայի և մատակարարման օրգանների ապարատնե-
րը օրինակելի դարձնելու մասին, ձգտելով, վորպեսզի կոոպերացիայի
աշխատանքն իսկապես վոր յենթարկվի սոցշինարարության տեմպերի
արագացման և հիմնական արդյունաբերական ռայոնների, առաջավոր
բանվոր-հարվածայինների արտոնյալ մատակարարման խնդիրներին։
Վճռական պայքար տանել խորհրդային առևտուրը ծավալելու և կո-
ոպերատիվ ապարատից նեպմանական վոգին, բյուրոկրատիզմը և խա-
վարամտությունը, սպառողի նկատմամբ արհամարհական վերաբերմուն-
քը վանելու համար, ադմինիստրատիվ-վարչական և վերադիր ծախսե-
րը կրճատելու համար։
2. Առաջվա նման համառ պայքար տանել բյուրոկրատական ա-
ղավաղումների դեմ՝ խորհրդային, կոոպերատիվ և տնտեսական օր-
գաններում, նրան բյուրոկրատական, խորթ և ոպորտունիստական
տարրերից մաքրելու համար, ինքնաքննադատության ծավալման հի-
ման վրա ձգտել հետագայում նույնպես մոբիլիզացիայի յենթարկելու
բանվորական և կոլխոզային լայն մասսաներին ապարատի բարելավ-
ման համար։
Կոնֆերանսը հատուկ ընդգծում է պատասխանատվության բարձ-
րացման անհրաժեշտությունը հանձնարարված գործի համար, կուսակ-
ցության և կառավարության դիրեկտիվների, ինչպես նաև իր սեփա-
կան վորոշումների ճիշտ կենսագործման ստուգումը մեր ամբողջ ապա-
րատի կողմից, դիմազրկության վերացումը, սկսված գործի մինչև վերջ
հասցնելը, ձգտելով, նրան, վորպեսզի ապարատն ավելի ճկուն դառ-
նա, ընդունակ լինի աշխատելու նոր ձևով, բավարարի լայն աշխա-
տավորական մասսաների կարիքներն ու պահանջները։
3. Ավելի մեծ օգնություն և աջակցություն ցույց տալ գործա-
րանների բանվորական շեֆությանը խորհրդային և կոոպերատիվ ա-
պարատի վրա, ձգտելով, վոր այդ շեֆությունը տարածվի ինչպես
յերկրային, այնպես և ռայոնական ապարատի հիմնական օղակների
վրա, ներգրավել բանվորական շեֆային բրիգադներին կուսակցության
և կառավարության դիրեկտիվների կատարման ստուգման գործում,
ամեն կերպ աջակցել շեֆ-ձեռնարկությունների, շեֆ-բրիգադների նախա-
ձեռնությանն ապարատի ռացիոնալացման գործում, առանձին ֆունկցիա

ների կատարման հանձնումը, բանվոր բրիգադներին, սոցիալիստական փոխարինման ուժեղացման և լայնացման հիմունքով։

4. Վճռական պայքար մղել ֆինանսական և հաստիքային խիստ կարգապահության համար, բոլոր կազմակերպությունների աշխատանքներում խնայողության ռեժիմ մտցնելու համար, վարկային բարենորոգման մասին կուսակցության տված դիրեկտիվները լրիվ իրագործելու համար։ Կոնֆերանսը վորակում է այս աշխատանքը, վորպես Յերկրային ՎՀ—ԲԳՏ-ն կարևորագույն քաղաքական խնդիրը։

V.

Կուլտուրական շինարարության ասպարեզում կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդրում կոնֆերանսը հանձնարարում է Յերկրային ՎՀ—ԲԳՏ-ն։

1. Մշտական հսկողության տակ առնել Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման կատարումը նախնական և միջնակարգ դպրոցի մասին, ձգտելով դպրոցների պոլիտեխնիզացիայի լրիվ կենսագործման։

2. Սիստեմատիկ կերպով ստուգել արդյունաբերության և գյուղատնտեսության համար տեխնիկական կադրեր պատրաստող հիմնարկների աշխատանքները, առանձնապես ազգային մարզերում և ազգային փոքրամասնությունների ռայոններում, անընդհատ արտադրական պրակտիկայի ճիշտ կիրառումը, ինչպես նաև վորակավոր բանվորների վերապատրաստելու և մասսայական տեխնիկական կրթության աշխատանքները։

3. Անզուլ պայքար տանել բանվորական և կոլխոզային լայն մասսաների, առաջին հերթին առաջավորների, բանվոր հարվածայինների, կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավման համար, հաստատելով մշտական հսկողություն կուլտուր-կենցաղային հիմնարկների և նրանց աշխատանքների վերակառուցման վրա, համապատասխանի բանվորների և հատկապես բանվորուհիների բոլոր նվազներին սպասարկելուն, քանի վոր նրանք (բանվորուհիները) մասսայորեն ընդգրկվում են արդյունաբերության մեջ։

VI.

Յելնելով Լենինի այն ցուցմունքից, ըստ վորի «տղամարդկանց և հատկապես կանանց աշխատավոր մասսան մասնակից դարձնել բանվորա-գյուղացիական ինսպեկցիային», կոնֆերանսը հանձնարարում է ՅերկրՎՀ—ԲԳՏ-ն։

1. Ավարտել ռայոնական և քաղաքային ՎՀ—ԲԳՏ ների վերակառուցումը համաձայն Համկոմկուսի ԿՎՀ-ի 3-րդ պլենումի վորոշումների, բանվորական և կոլխոզային մասսաների ՎՀ—ԲԳՏ-ն աշխատանքներին էլ ավելի լայն և ակտիվ մասնակից անելու հիման վրա։ Կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին ուժեղացնել ՎՀ—ԲԳՏ-ն տեղական որգանները կայուն և տոկուն աշխատավորներով։

2. ՎՀ—ԲԳՏ-ն որգանները պետք է առավելագույն չափով բարձրացնեն իրենց աշխատանքի վորակը, ապահովելով կարևորագույն հարցերի իսկական ուսումնասիրությունը, տալով կոնկրետ ցուցմունքներ աշխատանքը բարելավելու մասին, ապահովելով կատարման, հսկո-

ղության և ստուգման ժամկետների հաստատումը, գրավելով այդ աշխատանքներին արհմիությունները, կոմսոմոլը, մամուլը և բանգյուղթղթակիցներին, ղեկավարվելով ԿՎՀ-ի այն դիրեկտիվով, ըստ վորում ՎՀ—ԲԳՏ-ն որգանները վոչ միայն պետք է խստորեն քննադատեն, այլ նաև գործնականորեն ոգնեն բացված թերությունները վերացնելուն։

VII.

Կոնֆերանսը հանձնարարում է. ՅերկրՎՀ—ԲԳՏ-ն հետագայում նույնպես նույն հաստատակամությամբ և վճռականությամբ պահպանել կուսակցական շարքերի միասնականությունը, տանել անողոք պայքար կուսակցության գլխավոր գծից թեքումների դեմ, աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, հաշտվողականության դեմ հանդեպ թեքումների։

Յերկրային ՎՀ—ԲԳՏ-ն պետք է շարունակի վճռական պայքար տրոցկիստական կոնտրաբանդիստների և տրոցկիստական կեղծարարների մերկացման համար, վորոնք (տրոց.կոնտրաբանդիստները) փորձում են ռեվիզիայի յենթարկել մեր կուսակցության պատմությունը, ընդդեմ փտած լիբերալիզմի, բարձրացնելով կուսակցության անդամների արթնությունը, ապահովելով կուսակցության պատմության, Լենինի և Ստալինի աշխատանքների խորացած ուսումնասիրությունը։

ՅերկրՎՀ—ԲԳՏ պետք է վճռական պայքար տանի ինքնաքննադատության հետագա ծավալման համար, ամենախստագույն պատասխանատվության կանչելով ինքնաքննադատության ճնշողներին, ղեկավարվելով 16-րդ կուսհամագումարի այն ցուցմունքներով, ըստ վորի, առանց ինքնաքննադատության ծավալման անհնար է հասնել սոցշինարարության մեծագույն խնդիրների լուծման։

Յերկրային ՎՀ—ԲԳՏ-ն պետք է չթուլացնի իր ուշադրությունը յերկրային կուսկազմակերպության առանձին ողակների հիվանդագին յերևույթների դեմ պայքարելուց։ Միաժամանակ պետք է խնայողաբար վերաբերվել կուսակցության անդամ դազգյահի բանվորների տուժի նկատմամբ, պարբերաբար լուսաբանել կուսկոլեգիայի աշխատանքները մամուլում և կուսժողովներում։

Յերկրային ՎՀ—ԲԳՏ պետք է ապահովի մշտական ուշադրություն և ոգնություն ՀԼԿՅԵՄ-ի կոնֆլիկտային հանձնաժողովներին։

Կոնֆերանսը հաստատ համոզված է, վոր Յերկրային ՎՀ—ԲԳՏ, շարունակելով վճռական պայքար ոպորտունիզմի դեմ յերկու ֆրոնտում, ձեռք կբերի կուսակցության անդամների էլ ավելի համախմբվածություն կուսակցության գլխավոր գծի, Լենինյան Կենտկոմի և կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։

1932 ԹՎԻ ՀՍԿԻՉ ԹՎԵՐԸ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

7-ՐԴ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԲԱՆԱՁԵՎՆ ԸՆԿԵՐ ՊԻՎՈՎԱՐՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հյուսիսային Կովկասի 7-րդ կուսկոնֆերենցիան լիովին յեվ ամբողջությամբ հավանություն է տալիս յեվ միանում է Կենտկոմի թեզիսներին «Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության 2-րդ հնգամյակը կազմելու հրահանգների մասին»։

I. ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ, ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հնգամյակի յերրորդ, վճռական տարին ավարտված է հյուսիսային Կովկասում սոցիալիզմի շինարարության անհագին հաջողությունների նշանի տակ։

1931 թվին յերկրամասի արդյունաբերության *մի շարք ճյուղեր ավարտեցին հնգամյակի պլանը։*

«Գրոզնեֆթը» և Հյուսիսային Կովկասի ցեմենտը կատարեցին 2 և կես տարում։

Ընդհանրապես ԺՏԳ Խորհրդի և Մատժողկոմի արդյունաբերության պլանը, վոր հաստատել է կառավարությունը, ընդհանուր արտադրանքի տեսակետից կատարված է 3 տարում (1931 թվին յերկրամասի ընդհանուր արտադրանքը հասնում է 1.486 միլիոն ռուբլի, Պետպլանի առաջադրությունը 1932 թվի համար 1.488 միլիոն ռուբլի)։ Սակայն յերկրային 6-րդ կուսկոնֆերենցիայի ընդունած պլանը կիրագործվի միայն 1932 թվին (կուսկոնֆերենցիան նշանակել է 2.80 միլիոն ռ. հակիչ թիվն է 2.860 միլիոն ռուբլի)։

Յերկրային ամբողջ ցենզային արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1931 թվին աճել է հանդեպ 1930 թվին 1.418 միլիոնից մինչև 1.766.6 միլիոն ռուբլի կամ 24,6 տոկոս։

Նրանից—

ԺՏԳ Խորհրդինը—945.5 միլիոն ռուբլուց աճել է մինչև 1.124 միլիոն ռուբլի կամ 18,8 տոկոս։

Մատժողկոմատինը—313 միլիոնից մինչև 391 միլիոն ռուբլի կամ 24,9 տոկոս և մնացածը 160 միլիոն ռուբլուց մինչև 251 միլիոնի ռուբ. կամ 56,8 տոկոս։

Արդյունաբերության առանձին կարևոր ճյուղերում—
Նավթի արդյունաբերության *մեջ—7.576 հազար տոննի հանդեպ*
արդյունահանված է 8.896 հազար տոնն (17,5 տոկոս աճ)։
Քարածուխի արդյունաբերության *մեջ հանված է 4.476.000 տոնն*
հանդեպ 4.169 հազար տոննի (6,8 տոկոս աճ)։
Գյուղատնտեսական մեքենաշինարարության *մեջ 56.828 հազար ռուբ.,*
հանդեպ 46.356 հազար ռուբլու։
Կոնսերվային արդյունաբերության *մեջ 20 միլիոն ռուբլի, հանդեպ*
11,4 միլիոն ռուբլու։
Հյուսիսային Կովկասի նարպայուղի *մեջ—58 միլիոն ռուբլի, հանդեպ 49,4 միլիոն ռուբլու։*
Անցած տարում էլեկտրոկայանների *հաստատած* հզորությունն *աճել*
է 15,7 տոկոս, վորտեղ ռայոնական էլեկտրոկայանները—27,1 տոկոս։
6-րդ կուսկոնֆերենցիայից հետո սկսվել են օգտագործվել Նովոռոսիյսկի և Կրասնոդարի էլեկտրոկայանները։ Շարք է անցել, վորպես աշխատող գործարան, Ռոստովի Սելմաշը, սկսվել է կոմբայնների արտադրությունը. շարք են անցել մի քանի նոր և վերակառուցված ձեռնարկություններ արդյունաբերության ճյուղերում։
Գյուղատնտեսության *սոցիալիստական վերակառուցման ասպարեզում անցած տարին հանդիսանում է խորհտնտեսությունների շինարարության նոր լայն տարածման, հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտման և զգալի հաջողությունների տարի կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման ասպարեզում։*
Համայնացված սեկտորի ցանքային տարածությունը *1931 թ. 7.490*
հազար հեկտարից աճել է մինչև 10.722 հազար հեկտար 1931 թվին (43
տոկոս) և բռնել ընդհանուր ցանքատարածության 12.100 հազար հեկտարը—88,6 տոկոսը
Յերկրամասի խորհտնտեսությունների ցանքային տարածությունն *ա-*
վելացել է 649 հազար հեկտարից մինչև 1.420 հազար հեկտար (մինչև
118 տոկոս), վորի տեսակարար կշիռն ընդհանուր ցանքում կազմում է
11,7 տոկոս։
Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների տեխնիկական
սպառազինումը *132 հազար ձիու ուժից (HP) աճել է մինչև 242,6 հա-*
զար ձիու ուժ (HP), վորտեղ ՄՏ կայաններն ունեն 94,7 հազար (HP)
ձիու ուժ, 1930 թվի 30 հազար ձիու ուժի (HP) հանդեպ։
Համայնացված մթերքային անասունների *ֆոնդը* կոլտնտեսություններում *մի տարում աճել է 135 տոկոս։*
Խոշոր անասունների քանակն անասնապահական խորհտնտեսություններում և կոլտնտեսային ապրանքաֆերմաներում ավելացել է
1930 թվի 210 հազար գլխից մինչև 575 հազար գլուխ—1931 թվին 45
հազար խոզից մինչև 272.7 հազար խոզ և 1 միլիոն վոչխարից մինչև
1 ու կես միլիոն վոչխար։
Բավական ընդարձակվել է տեխնիկական բույսերի *(բամբակ, գենագերչակ, ծխախոտ և այլն) ցանքատարածությունը։*
Սոցիալիստական շինարարության մատնանշած հաջողություններն ապահովել են գյուղատնտեսության ընդհանուր և ապրանքային արտադրանքի զգալի աճը։
Հյուսիսային Կովկասն ընթացիկ տարում հիմնականում իրագոր-

տուրսների ծավալման հիման վրա, կոնֆերեցիան, հանձնարարում է ՑեկրՎՀ—ԲԳՏ-յան:

1. Մշտական հսկողություն ունենալ աշխատանքի ճիշտ կազմակերպման, դիմազրկության և հավասարեցման վերացման, ադմինիստրատիվ-վարչական ծախսերի կրճատման, գյուղատնտեսական աշխատանքների բոլոր պրոցեսներում իսկական գործավարձը մտցնելու, աշխատանքի արտադրողականությունը և կարգապահությունը բարձրացնելու, կոլտնտեսությունների պարտավորությունները հանդեպ պետությանը կատարելու վրա:

ՎՀ—ԲԴՏ-ն օրգանները պետք է ակտիվ կերպով պայքարեն կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման մասին Յերկրկոմի կայացրած վորոշման, յերկրամասի համատարած կոլեկտիվացման ավարտման և կուլակության վերջնական լիկվիդացիայի համար:

2. Տանել անողոք պայքար մասսայական աշխատանքը մերկ վարչականությամբ փոխարինելու, ինչպես նաև օպորտունիստական ինքնահոսի դեմ, հանուն կազմակերպչական ներգործության կոլտնտեսությունների բոլոր աշխատանքների վրա ղեկավարող և պլանավորող օրգանների ու մեքենա-տրակտորային կայանների կողմից:

3. Մոբիլիզացիայի յենթարկել տեղական բոլոր ՎՀ—ԲԳՏ-ներին և նրանց մասսայական հսկողության ստորին օղակներին, 3-րդ բոլշևիկյան գարնանացանին մարտականորեն նախապատրաստվելու համար, ապահովելով ժամանակին ուժերի դասավորումը, արտադրական պլանների մշակումը, նրանց ՄՏԿ ի ամէ մի բանվորին, ամեն մի կոլտնտեսականին հասցնելը, գյուղատնտեսական մեքենաների և տրակտորների պատրաստությունը և լծկան անասունի խնամքը:

4. Ծավալել լայն աշխատանք գյուղատնտեսության մեջ կորուստների դեմ պայքարելու, ագրոտեխնիկական միջոցառումների լայն կիրառման և կոլտնտեսական մասսաներին այդ խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու համար:

5. Տանել ամենավճռական պայքար սովխոզների կողմից կուսակցության գիծն աղավաղելու, նրանց մեջ թափանցող բուրժուական տենդենցների դեմ, սովխոզների աշխատանքների օրինակելի կազմակերպման համար, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջավոր ձեռնարկների, ցանքսի և բերքահավաքի կամպանիաներին ժամանակին պատրաստվելու համար:

Առանձին ուշադրություն դարձնել տրակտորների և քարշի ուժի առավելագույն օգտագործման, առաջավոր տեխնիկայի յուրացման, սպասարկող կադրերի պատրաստման, կորուստների դեմ պայքարելու վրա:

6. Ուշադրության կենտրոնը դարձնել յերկրամասի անասնապահության պրոբլեմի լուծման վրա, մշտական հսկողության տակ առնել անասնապահական սովխոզների աշխատանքը, վորպես սոցիալիստական անասնապահության առաջավոր հատվածի, կենտրոնացնել գլխավոր ուշադրությունը հոտի բազմացման և քանակի ավելացման վրա, վճռականորեն կրճատելով կորուստները, հոտի սպասարկումը բարելավելով, ճիշտ դնելով անասնաբուժական գործը, ժամանակին և ամբողջությամբ կատարելով սովխոզների շինարարության պլանը, ապահովելով կերով և ստեղծելով կերի բազա: Անասնապահության ծավալումն ազգային մար-

զերում և առանձնապես լեռնային ռայոններում պետք է ԲԳՏ-ն օրգանների մշտական հսկողության տակ լինի:

IV.

Կոնֆերանսն առաջարկում է Յերկրային ՎՀ—ԲԴՏ-ն հետագայում նույնպես վճռական պայքար տանել խորհրդային, կոոպերատիվ և տնտեսական ապարատի բարելավման, այդ ապարատի վերակառուցման համար, համաձայն նոր ձևով աշխատելու խնդիրներին, ձգտելով, վորպեսզի մեր ապարատն օգտագործի սոցիալիստական սիստեմի բոլոր առավելությունները տնտեսական և կուլտուրական շինարարության համար:

Այդ նպատակների համար կոնֆերանսը հանձնարարում է ՅերկրՎՀ—ԲԳՏ-ն

1. Ապահովել ԿՎՀ-ի 3-րդ պլենումի վորոշման անպայման կատարումը կոոպերացիայի և մատակարարման օրգանների ապարատները օրինակելի դարձնելու մասին, ձգտելով, վորպեսզի կոոպերացիայի աշխատանքն իսկապես վոր յենթարկվի սոցշինարարության տեմպերի արագացման և հիմնական արդյունաբերական ռայոնների, առաջավոր բանվոր-հարվածայինների արտոնյալ մատակարարման խնդիրներին: Վճռական պայքար տանել խորհրդային առևտուրը ծավալելու և կոոպերատիվ ապարատից նեպմանական վոգին, բյուրոկրատիզմը և խավարամտությունը, սպառողի նկատմամբ արհամարական վերաբերմունքը վանելու համար, ադմինիստրատիվ-վարչական և վերադիր ծախսերը կրճատելու համար:

2. Առաջվա նման համառ պայքար տանել բյուրոկրատական աղավաղումների դեմ՝ խորհրդային, կոոպերատիվ և տնտեսական օրգաններում, նրան բյուրոկրատական, խորթ և օպորտունիստական տարրերից մաքրելու համար, ինքնաքննադատության ծավալման հիման վրա ձգտել հետագայում նույնպես մոբիլիզացիայի յենթարկելու բանվորական և կոլխոզային լայն մասսաներին ապարատի բարելավման համար:

Կոնֆերանսը հատուկ ընդգծում է պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունը հանձնարարված գործի համար, կուսակցության և կառավարության դիրեկտիվների, ինչպես նաև իր սեփական վորոշումների ճիշտ կենսագործման ստուգումը մեր ամբողջ ապարատի կողմից, դիմազրկության վերացումը, սկսված գործի մինչև վերջ հասցնելը, ձգտելով, նրան, վորպեսզի ապարատն ավելի ճկուն դառնա, ընդունակ լինի աշխատելու նոր ձևով, բավարարի լայն աշխատավորական մասսաների կարիքներն ու պահանջները:

3. Ավելի մեծ օգնություն և աջակցություն ցույց տալ գործարանների բանվորական շեֆությանը խորհրդային և կոոպերատիվ ապարատի վրա, ձգտելով, վոր այդ շեֆությունը տարածվի ինչպես յերկրային, այնպես և ռայոնական ապարատի հիմնական օղակների վրա, ներգրավել բանվորական շեֆային բրիգադներին կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարման ստուգման գործում, ամեն կերպ աջակցել շեֆ-ձեռնարկությունների, շեֆ-բրիգադների նախաձեռնությանն ապարատի ռացիոնալացման գործում, առանձին ֆունկցիա

ների կատարման հանձնումը, բանվոր բրիգադներին, սոցիալիստական փոխարինման ուժեղացման և լայնացման հիմունքով։

4. Վճռական պայքար մղել ֆինանսական և հաստիկային խիստ կարգապահության համար, բոլոր կազմակերպությունների աշխատանքներում խնայողության ռեժիմ մտցնելու համար, վարկային բարենորոգման մասին կուսակցության տված դիրեկտիվները լրիվ իրագործելու համար։ Կոնֆերանսը վորակում է այս աշխատանքը, վորպես Ցերկրային ՎՀ—ԲԳՏ-ն կարևորագույն քաղաքական խնդիրը։

V.

Կուլտուրական շինարարության ասպարեզում կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդրում կոնֆերանսը հանձնարարում է Ցերկրային ՎՀ—ԲԳՏ-ն։

1. Մշտական հսկողության տակ առնել Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման կատարումը նախնական և միջնակարգ դպրոցի մասին, ձգտելով դպրոցների պոլիտեխնիզացիայի լրիվ կենսագործման։

2. Սիստեմատիկ կերպով ստուգել արդյունաբերության և գյուղատնտեսության համար տեխնիկական կադրեր պատրաստող հիմնարկների աշխատանքները, առանձնապես ազգային մարզերում և ազգային փոքրամասնությունների ռայոններում, անընդհատ արտադրական պրակտիկայի ճիշտ կիրառումը, ինչպես նաև վորակավոր բանվորների վերապատրաստելու և մասսայական տեխնիկական կրթության աշխատանքները։

3. Անդուլ պայքար տանել բանվորական և կոլխոզային լայն մասսաների, առաջին հերթին առաջավորների, բանվոր հարվածայինների, կուլտուր-կենցաղային սպասարկման բարելավման համար, հաստատելով մշտական հսկողություն կուլտուր-կենցաղային հիմնարկներն և նրանց աշխատանքների վերակառուցման վրա, համապատասխան բանվորների և հատկապես բանվորուհիների բոլոր նվագներին սպասարկելուն, քանի վոր նրանք (բանվորուհիները) մասսայորեն ընդգրկվում են արդյունաբերության մեջ։

VI.

Ցելնելով Լենինի այն ցուցմունքից, ըստ վորի «տղամարդկանց և հատկապես կանանց աշխատավոր մասսան մասնակից դարձնել բանվորա-գյուղացիական ինսպեկցիային», կոնֆերանսը հանձնարարում է ՑերկրՎՀ—ԲԳՏ-ն։

1. Ավարտել ռայոնական և քաղաքային ՎՀ—ԲԳՏ երի վերակառուցումը համաձայն Համկոմկուսի ԿՎՀ-ի 3-րդ պլենումի վորոշումների, բանվորական և կոլխոզային մասսաների ՎՀ—ԲԳՏ-ն աշխատանքներին էլ ավելի լայն և ակտիվ մասնակից անելու հիման վրա։ Կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին ուժեղացնել ՎՀ—ԲԳՏ-ն սեղական օրգանները կայուն և տոկուն աշխատավորներով։

2. ՎՀ—ԲԳՏ-ն օրգանները պետք է առավելագույն չափով բարձրացնեն իրենց աշխատանքի վորակը, ապահովելով կարևորագույն հարցերի խսկական ուսումնասիրությունը, տալով կոնկրետ ցուցմունքներ աշխատանքը բարելավելու մասին, տպահովելով կատարման, հսկողության և ստուգման ժամկետների հաստատումը, գրավելով այդ աշխատանքներին արհմիությունները, կոմսոմոլը, մամուլը և բանգյուղթղթակիցներին, ղեկավարվելով ԿՎՀ-ի այն դիրեկտիվով, ըստ վորում ՎՀ—ԲԳՏ-ն օրգանները վոչ միայն պետք է խստորեն քննադատեն, այլ նաև գործնականորեն ոգնեն բացված թերությունները վերացնելուն։

VII.

Կոնֆերանսը հանձնարարում է. ՑերկրՎՀ—ԲԳՏ-ն հետագայում նույնպես նույն հաստատակամությամբ և վճռականությամբ պահպանել կուսակցական շարքերի միասնականությունը, տանել անողոք պայքար կուսակցության գլխավոր գծից թեքումների դեմ, աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, հաշտվողականության դեմ հանդեպ թեքումների։

Ցերկրային ՎՀ—ԲԳՏ-ն պետք է շարունակի վճռական պայքար տրոցկիստական կանդրաբանդիստների և տրոցկիստական կեղծարարների մերկացման համար, վորոնք (տրոց.կոնդրաբանդիստները) փորձում են ռևիզիայի յենթարկել մեր կուսակցության պատմությունը, ընդդեմ փտած լիբերալիզմի, բարձրացնելով կուսակցության անդամների արթնությունը, ապահովելով կուսակցության պատմության, Լենինի և Ստալինի աշխատանքների խորացած ուսումնասիրությունը։

ՑերկրՎՀ—ԲԳՏ պետք է վճռական պայքար տանի ինքաքննադատության հետագա ծավալման համար, ամենախստագույն պատասխանատվության կանչելով ինքնաքննադատության ճնշողներին, ղեկավարվելով 16-րդ կուսհամագումարի այն ցուցմունքներով, ըստ վորի, առանց ինքնաքննադատության ծավալման անհնար է հասնել սոցշինարարության մեծագույն խնդիրների լուծման։

Ցերկրային ՎՀ—ԲԳՏ-ն պետք է չթուլացնի իր ուշադրությունը յերկրային կուսկազմակերպության առանձին ողակների հիվանդագին յերևույթների դեմ պայքարելուց։ Միաժամանակ պետք է խնայողաբար վերաբերվել կուսակցության անդամ դարձյանի բանվորների տուժի նկատմամբ, պարբերաբար լուսաբանել կուսկոլեգիայի աշխատանքները մամուլում և կուսժողովներում։

Ցերկրային ՎՀ—ԲԳՏ պետք է ապահովի մշտական ուշադրություն և ոգնություն ՀԼԿՅԵՄ-ի կոնֆլիկտային հանձնաժողովներին։

Կոնֆերանսը հաստատ համոզված է, վոր Ցերկրային ՎՀ—ԲԳՏ, շարունակելով վճռական պայքար ոպորտունիզմի դեմ յերկու ֆրոնտում, ձեռք կբերի կուսակցության անդամների էլ ավելի համախմբվածություն կուսակցության գլխավոր գծի, Լենինյան Կենտկոմի և կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։

1932 ԹՎԻ ՀՍԿԻՉ ԹՎԵՐԸ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

7-ՐԴ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԲԱՆԱՁԵՎՆ ԸՆԿԵՐ ՊԻՎՈՎԱՐՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հյուսիսային Կովկասի 7-րդ կուսկոնֆերենցիան լիովին յեվ ամբողջությամբ հավանություն է տալիս յեվ միանում է Կենտկոմի թեզիսներին «Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության 2-րդ հնգամյակը կազմելու հրահանգների մասին»։

I. ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ, ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հնգամյակի յերրորդ, վճռական տարին ավարտված է հյուսիսային Կովկասում սոցիալիզմի շինարարության ահագին հաջողությունների նշանի տակ։

1931 թվին յերկրամասի արդյունաբերության *մի շարք ճյուղեր ավարտեցին հնգամյակի պլանը։*

«Գրոզնեֆթը» և Հյուսիսային Կովկասի ցեմենտը կատարեցին 2 և կես տարում։

Ընդհանրապես ԺՏԳ Խորհրդի և Մատժողկոմի արդյունաբերության պլանը, որ հաստատել է կառավարությունը, ընդհանուր արտադրանքի տեսակետից կատարված է 3 տարում (1931 թվին յերկրամասի ընդհանուր արտադրանքը հասնում է 1.486 միլիոն ռուբլի, Պետպլանի առաջադրությունը 1932 թվի համար 1.488 միլիոն ռուբլի)։ Սակայն յերկրային 6-րդ կուսկոնֆերենցիայի ընդունած պլանը կիրագործվի միայն 1932 թվին (կուսկոնֆերենցիան նշանակել է 2.80 միլիոն ռ. հսկիչ թիվն է 2.860 միլիոն ռուբլի)։

Յերկրային ամբողջ ցենզային արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1931 թվին աճել է հանդեպ 1930 թվին 1.418 միլիոնից մինչև 1.766.6 միլիոն ռուբլի կամ 24,6 տոկոս։

Նրանից—

ԺՏԳ Խորհրդինը—945.5 միլիոն ռուբլուց աճել է մինչև 1.124 միլիոն ռուբլի կամ 18,8 տոկոս։

Մատժողկոմատինը—313 միլիոնից մինչև 391 միլիոն ռուբլի կամ 24,9 տոկոս և մնացածը 160 միլիոն ռուբլուց մինչև 251 միլիոնի ռուբ. կամ 56,8 տոկոս։

Արդյունաբերության առանձին կարևոր ճյուղերում—

Նավթի արդյունաբերության մեջ*—7.576 հազար տոննի հանդեպ արդյունահանված է 8.896 հազար տոնն (17,5 տոկոս աճ)։*

Քարածուխի արդյունաբերության մեջ *հանված է 4.476.000 տոնն հանդեպ 4.169 հազար տոննի (6,8 տոկոս աճ)։*

Գյուղատնտեսական մեքենաշինարարության մեջ *56.828 հազար ռուբ., հանդեպ 46.356 հազար ռուբլու։*

Կոնսերվային արդյունաբերության մեջ *20 միլիոն ռուբլի, հանդեպ 11,4 միլիոն ռուբլու։*

Հյուսիսային Կովկասի նարպայուղի մեջ*—58 միլիոն ռուբլի, հանդեպ 49,4 միլիոն ռուբլու։*

Անցած տարում ելեկտրոկայանների *հաստատած* հզորությունն *աճել է 15,7 տոկոս, վորտեղ ռայոնական ելեկտրոկայանները—27,1 տոկոս։*

6-րդ կուսկոնֆերենցիայից հետո սկսվել են օգտագործվել Նովոռոսիյսկի և Կրասնոդարի ելեկտրոկայանները։ Շարք է անցել, վորպես աշխատող գործարան, Ռոստովի Սելմաշը, սկսվել է կոմբայնների արտադրությունը. շարք են անցել մի քանի նոր և վերակառուցված ձեռնարկություններ արդյունաբերության ճյուղերում։

Գյուղատնտեսության *սոցիալիստական վերակառուցման ասպարեզում անցած տարին հանդիսանում է խորհտնտեսությունների շինարարության նոր լայն տարածման, հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտման և զգալի հաջողությունների տարի կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման ասպարեզում։*

Համայնացրած սեկտորի ցանքային տարածությունը *1931 թ. 7.490 հազար հեկտարից աճել է մինչև 10.722 հազար հեկտար 1931 թվին (43 տոկոս) և բռնել ընդհանուր ցանքատարածության 12.100 հազար հեկտարը—88,6 տոկոսը*

Յերկրամասի խորհտնտեսությունների ցանքային տարածությունն ա*վելացել է 649 հազար հեկտարից մինչև 1.420 հազար հեկտար (մինչև 118 տոկոս), վորի տեսակարար կշիռն ընդհանուր ցանքում կազմում է 11,7 տոկոս։*

Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների տեխնիկական սպառազինումը *132 հազար ձիու ուժից (HP) աճել է մինչև 242,6 հազար ձիու ուժ (HP), վորտեղ ՄՏ կայաններն ունեն 94,7 հազար (HP) ձիու ուժ, 1930 թվի 30 հազար ձիու ուժի (HP) հանդեպ։*

Համայնացրած մթերքային անասունների ֆոնդը կոլտնտեսություններում *մի տարում աճել է 135 տոկոս։*

Խոշոր անասունների քանակն անասնապահական խորհտնտեսություններում և կոլտնտեսային ապրանքաֆերմաներում ավելացել է 1930 թվի 210 հազար գլխից մինչև 575 հազար գլուխ—1931 թվին 45 հազար խոզից մինչև 272.7 հազար խոզ և 1 միլիոն վոչխարից մինչև 1 ու կես միլիոն վոչխար։

Բավական ընդարձակվել է տեխնիկական բույսերի *(բամբակ, գենագերչակ, ծխախոտ և այլն) ցանքատարածությունը։*

Սոցիալիստական շինարարության մատնանշած հաջողություններն ապահովել են գյուղատնտեսության ընդհանուր և ապրանքային արտադրանքի զգալի աճը։

Հյուսիսային Կովկասն ընթացիկ տարում հիմնականում իրագոր-

ծեց պետության առաջադրած մթերումները. հասցնելով հացամթերումն ամենաբարձր աստիճանի խորհրդային իշխանության ամբողջ ընթացքում—200 միլիոն փութ հացահատիկային կուլտուրաներ և 30 միլիոն փթից ավելի յուղասերմեր—մթերման պլանն իրագործեց անասունների վերաբերյալ 108 տոկոս, ձկան վերաբերյալ 102 տոկոս։

Բամբակ մթերված է անցյալ տարվա նկատմամբ 4 անգամ ավելի, գենագերչակ—5 անգամ ավելի։

Այդ հաջողությունները ապահովեցին բանվորների նյութական և կուլտուրական աճը։ Ցենզային արդյունաբերության մեջ աշխատավարձն ավելացել է 11 տոկոս, լավացել է բանվորների մատակարարումը, մեծացել է բնակարանային տարածությունը։

Հյուսիսային Կովասն զգալի նվաճումներ ունի սոցիալ-կուլտուրական շինարարության ասպարեզում—անգրագիտության և կիսագրագիտության վերացումն ընդգրկել է 1.700.000 մարդ, մտցվել է ընդհանուր պարտադիր ուսում և բավական լայնացել է յոթամյակների ցանցը, ավելացել է ԲՈՒՀ-երի, տեխնիկական ԲՈՒՀ-երի և տեխնիկումների քանակը, ընդգրկելով 84 հազար մարդ յեվ լայն ծավալված է բանվորների յեվ կոլտնտեսականների տեխնիկական կրթությունը։

Կոնֆերենցիան հատուկ բավականությամբ նշում է այն զգալի հաջողությունները, վոր ձեռք են բերվել յերկրամասի ազգային մարզերի տնտեսական-կուլտուրական հետամնացության վոչնչացման և նրանց հավասարեցման գործում յերկրամասի և միության առաջավոր ռայոններին։

Յերկրամասի ազգային մարզերում 1931 թիվն անցավ արդյունաբերության արագ զարգացումով (ընդհանուր արտադրանքի ավելացումն 37,2 տոկոս, համեմատած 1930 թվին, առանց Գրոզնու նավթի), հիմնականում համատարած կոլեկտիվացման ավարտումով Ադիգեյում, Օսեթիայում, Կաբարդինո-Բալկարիայում և Չերքեզիայում և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման զգալի առաջշարժումով մնացած ազգային մարզերում։

II. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1932 Թ. ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹՎԵՐԸ

Ժողովրդական տնտեսության 1932 թվի պլանը խնդիր է դնում Հյուսիսային Կովկասի առաջ ապահովել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման արագ տեմպերը, բարձրացնել սոցիալ-կուլտուրական շինարարությունը և դրա հիման վրա լավացնել քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների հետագա բարեկեցությունը։

1932 թվի հսկիչ թվերն ապահովում են—

ա) Խորհրդային Միության Պետպլանի նշանակած պլանի կատարումն ու գերակատարումը 46 տոկոս ընդհանրապես Հ Կովկասի արդյունաբերության կարևորագույն ճյուղերում։

բ) Հ-Կովկասի հնգամյակի կատարումը հիմնականում յերկրային 6-րդ կուսկոնֆերենցիայի նշանակած արդյունաբերության ընդհանուր արտադրանքի վերաբերյալ (2.880.000 հազար ռուբլի)։

գ) Հ-Կովկասի արդյունաբերության աճի տեմպի ծավալումն ավելի բարձր, քան Միության արդյունաբերության համար նշանակած աճն ընդհանրապես։

դ) Գյուղատնտեսության մեքենացման լայն ծավալումը (տրակտորային համախմբի ընդլայնումը, կոմբայնների ներմուծումը ՄՏ կայան, ՄՏ կայանների սպառազինումն և այլն)։

յե) Գյուղատնտեսության հետագա բարձրացումը, անասնապահության ամրացումը և զարգացումը (խորհտնտեսություններ, ֆերմեր)։

զ) Կոլտնտեսությունների տնտեսական և կազմակերպչական ամրացումը։

Յերկրամասի ժողովրդական տնտեսության հիմնական շինարարության պլանը Դաղստանի հետ միասին վորոշել մոտ 1 միլիարդ ռուբլի, վորից յերկրամասի և Դաղստանի տերրիտորիայում գտնվող ԺՏԳ Խորհրդի արդյունաբերությունը—300 միլիոնից ավել և Մատակարարժողկոմատի արդյունաբերությունը մոտ 70 միլիոն ռուբլի։

ԺՏԳ Խորհրդի և Մատժողկոմատի արդյունաբերության ամբողջ արտադրանքի աճը վորոշել 52 տոկոս, վորտեղ ԺՏԳԽ—45 տոկոս, Մատժողկոմատինը—72 տոկոս։

Աշխատավարձի աճն արդյունաբերության գլխավոր ճյուղերի բանվորների համար հաստատել 11 տոկոս։

1932 թվի աշխատանքի արտադրողականության աճը հաստատել 1931 սպասվող աճի հանդեպ հետևյալը—

Ամբողջ արդյունաբերությանը—31,5 տոկոս նույն թվում
ԺՏԳԽ . . . . —28,4 տոկոս,
Վորից նավթային . . . . —19,0 տոկոս,
Քարածխինը . . . . —28,4 տոկոս,
Գյուղատնտեսական մեքենաշինարարությունը 149,9 տոկոս,
Մատժողկոմատինը . . . . —36,4 տոկոս։

Արդյունաբերության ինքնարժեքի իջեցումը հաստատել վոչ պակաս, քան 7 տոկոս։

1932 թվի ածխահանության ծրագիրը վորոշել 6,7 միլիոն տոնն ծավալով, նավթի արդյունահանությունը 11 միլիոն տոնն, վորից Մայկոպում 2 միլիոն տոնն։

Չնայած յերկաթուղու տրանսպորտի աշխատանքի վորոշ լավացման, բեռնատարության ավելացման 1930 թվի հանդեպ (յերկաթուղու տրանսպորտում—20 տոկոս), տրանսպորտը, հատկապես յերկաթուղայինը շարունակում է մնալ յերկրամասի ժողովրդական տնտեսության նեղ տեղը։

1932 թվին անհրաժեշտ է ապահովել տրանսպորտի այնպիսի զարգացում, վորը համապատասխանի Հ-Կովկասի տնտեսության բուռն աճին։

Տրանսպորտի հիմնական ներդրումների ծավալը վորոշել 90—100 միլիոն ռուբլի։

Կապի հիմնական ներդրումները վորոշել 18,4 միլիոն ռուբլի։

1932 թվի ցանքատարածությունը հաստատել 14 միլիոն հեկտար, վորից գարնանացանի տարածությունը 9 միլիոն հեկտար, վորից խորտնտեսային սեկտորինը 1165 հազար հեկտար։

1932 թվի գարնանը ՄՏԿ քանակը հասցնել մինչև 224։

Խնդիր դնել բարձրացնելու բերքայնությունը հացահատիկային բույսերի մի հեկտարից 9,8 ցենտներ, արևածաղկինը 8,3 ցենտներ, բամբակինը 4 ցենտներ, հիմնվելով ագրոտեխնիկական պահանջների կա-

տարման, հատկապես աշխատանքի ժամկետի վրա։ Յուրաքանչյուր ռայոնում հաստատել միջին բերքայնության չափը, վորն ապահովելու համար կատարել ցանքը ժամանակին, մտցնել մաքրատեսակ սերմեր, քաղհանել, պայքարել մոլախոտերի դեմ, հնձել ժամանակին և պայքարել կորուստների դեմ։

Միաժամանակ լայն ծավալել համայնացած անասնապահության աշխատանքը, դնելով անասնապահության խնդիրը վորպես հնգամյակի ավարտական տարվա կենտրոնական խնդիր, մասնավորապես հատուկ ուշադրություն դարձնել անասունների արդյունավետության բարձրացման վրա։

Անասնապահական խորտնտեսություններում անասունների քանակը հասցնել—«Սկոտովոդում» մինչև 300 հազար գլուխ, վորից 135 հազարը կով. «Ովցեվոդում», մինչև 872 հազար, «Սվինովոդում» մինչև 227 հազար, վորից 62 հազարը խոզամայրեր և թռչնաբուծում մինչև 589 հազար ձվաբերներ։

Շարունակել կոլտնտեսային ապրանքային ֆերմերի կազմակերպչական տնտեսական ամրացումը, հասցնելով ԿԱՖերմերի անասունների քանակը մինչև 1 միլիոն, վորից 300 հազարը կով, խոզապրանքային ֆերմերինը մինչև 750 հազար խոզ, վորից 200 հազարը խոզամայրեր, վոչխարապրանքային ֆերմերինը մինչև 1300 հազար վոչխար, վորից 650 հազարը մաքի (մայր)։

Կոմունալ տնտեսության յեվ բնակարանա-շինարարության հիմնական ներդրումները վորոշել 109 միլիոն ռուբլի։

3. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Կովկասի յերկրային կուսկոնֆերենցիան նկատում է, վոր վերջին տարիների ընթացքում յերկրամասի արդյունաբերության հիմնական ներդրումներն իջել են։ Այդ պատճառով յերկրամասն յերկրորդ հընգամյակ է մտնում արտադրության հետագա ծավալման համար կուտակումների համեմատաբար պակաս (քան Միությանը) հնարավորություններով, մասնավորապես առանց միանգամայն անավարտ ձեռնարկությունների, սկսած շինարարության առանց 2-րդ հնգամյակն անցնող հիմնական ներդրումների, վորոնք անխուսափելի կերպով կանխորոշում են յերկրամասի տնտեսական տեսակարար կշռի իջեցումը հետագայում։ Դրա համար կուսկոնֆերենցիան անհրաժեշտ է համարում 1932 թվի ընթացքում նախապատրաստել յեվ ապահովել յերկրորդ հընգամյակի սկզբից շրջադարձ յերկրամասի արդյունաբերական շինարարության արագացման հարցերում—առաջին հերթին գլխավոր ճյուղերում (վառելիք, մետաղագործություն, եներգետիկա, քիմիա)։

Հ. Կովկասի յերկրային կուսկոնֆերենցիան հանձնարարում է կուսակցության Յերկրկոմին, ամբողջ կուսկազմակերպությանը, խորհրդային և արհմիութենական կազմակերպություններին, անցնել 2-րդ հնգամյակի պլանների մշակմանը, հիմնվելով հետևյալ խնդիրների վրա.

1. Ապահովել 2-րդ հնգամյակում յերկրամասի ժողովրդական տնտեսության և մասնավորապես արդյունաբերության գլխավոր ներդրումներն այն չափով, վորն հնարավորություն տա ոգտագործել յերկրամասի հումքի և եներգետիկ (ուժի) աղբյուրները, բարձրացնի դրա հաշվին յերկրամասի արդյունաբերության տեսակարար կշիռը Միութենական արդյունաբերության ընդհանուր հաշվեկշռում և դրանով Հ-Կովկասը դարձնի Միության արդյունաբերական-գյուղատնտեսական հզոր ռայոն։

Դրան համապատասխան Հ-Կովկասի և Դաղստանի ժողովրդական տնտեսության գլխավոր ներդրումների ընդհանուր ծավալն յերկրորդ հնգամյակում վորոշել 11-12 միլիարդ ռուբլի, վորից եներգետիկայում և արդյունաբերությունում 6-7 միլյարդ ռուբլի, գյուղատնտեսությունում 2,5—3 միլիարդ ռուբլի, տրանսպորտում 5 միլիարդ ռուբլի, կոմունալ տնտեսության մեջ 1,5—2 միլիարդ ռուբլի։

2. Ելեկտրիֆիկացիայի վերաբերյալ։ Համաձայն յերկրամասի ժողովրդական տնտեսության զարգացման նշանակված հեռանկարների, հասցնել ելեկտրոկայանների հզորությունը մինչև 2 միլիոն կիլովատի, հանդեպ 1931 թվի 188500 կիլովատի; ոգտագործելով այդ նպատակի համար մանրածուխը, մազութը և յերկրամասի գետերը։

Հատկապես առաջ քաշել Կրասնոդոնեցկի ելեկտրոկայանի շինարարության խնդիրն Սպիտակ Կալիտվայի ռայոնում 400 հազար կիլովատով, Սուլակի ջրակայանը Դաղստանում 360 հազար կիլովատից ավել հզորությամբ և ջրասարքավորումներ Սպիտակ կամ Կուբան գետի վրա։

3. Նավթային արդյունաբերության վերաբերյալ։ Յերկրորդ հընգամյակում Հ-Կովկասը պետք է դառնա Միության հիմնական նավթային ռայոնը, վորն ապահովելու յե մոտավորապես Միության նավթի արտադրության 50 տոկոսն ի հաշիվ հին նավթաբեր ռայոնների արդյունահանության զարգացման արագանալուն և հատկապես նոր ռայոնների արդյունավետ մշակման (Մայկոպի նավթը, Կուբանի ռայոնները, Բինոյը, Դատիգը-Դաղստանում և այլն) և Ներքին-Մայկոպի հանքախմբի հաշվին Գրոզնավթի սահմաններում։

2-րդ հնգամյակի առաջին տարիներում հաղթահարել հետախուզումների հետամնացությունը։

4. Քարածխային արդյունաբերության վերաբերյալ։ Ավելի լրիվ ոգտագործել յերկրամասի բնական վառելիքների աղբյուրները և շահագործել նոր ռայոններ, առավելապես ոգտագործել շախտային կանխիկ ֆոնդերը, բոլոր արտադրական գործողությունների բազմակողմանի մեքենայացումն ու ելեկտրիֆիկացումը, հասցնելով ածխահանությունը 1937 թվին մինչև 26 միլիոն տոնն։

Անցնել յերկրամասի ածխային հանքատեղերի շահագործմանը (Կարաչայի հանքատեղերի), արդյունահանելով 1937 թվին վոչ պակաս 500 հազար տոննից։

5. Սեվ մետաղագործության վերաբերյալ ստեղծել մեր, տեղական նշանակությամբ մետաղագործական հիմքեր յերկրամասի 2 կետերում—

ա) Սպիտակ Կալիտվայի գործարանը (1,3 միլիոն տոնն) Կերչի յերկաթահանքի հիման վրա (Դոնեցի ջրուղիով. հոսանքի դեմ—յերկաթահանք, հոսանքի ընթացքով—մետաղ) վառելով Հ-Կովկասի ածուխի տեղական կոքսը, վորը կտա ավելի եժան չուգուն Հ-Կովկասի և Ներքին Վոլգայի համար։

բ) Մալկինի գործարանը Կաբարդայում, հետախուզված յերկաթահանքերի հիման վրա (200-300 հազար տոնն), հատկապես արտադրելով բարձրորակ պողպատ։

6. Մետաղամշակող արդյունաբերության վերաբերյալ: *Կառուցել ավտոմոբիլի գործարան, էլեկտրասարքավորման և էլեկտրատրանսպորտի գործարաններ, ածխային և նավթային արդյունաբերության սարքավորում արտադրող գործարաններ և ճանապարհային մեքենաշինարարության խոշոր գործարան:*

7. Գունավոր մետաղագործության վերաբերյալ: *Յերկրամասի ազգային մարզերի և Դաղստանի հանրապետության գունավոր մետաղների հանքատեղերի շահագործման հիման վրա 2-րդ հնգամյակում, պետք է հզորապես զարգանա գունավոր մետաղագործությունը, մասնավորապես 1937 թվին պետք է արտադրել 69 հազար տոնն ցինկ, 36 հազար տոնն արճիճ, 75 հազար տոնն ալյումին, նույնպես և ուրիշ գունավոր և հազվագյուտ մետաղներ, ծավալելով գունավոր մետաղագործության յերկրորդ կոմբինատն Ելբրուսի մետաղահանքերի հիման վրա:*

8. Քիմիական արդյունաբերության վերաբերյալ: *2-րդ հնգամյակը պետք է դառնա յերկրամասի ժողովրդական տնտեսության քիմիացման հնգամյակ, հիմնվելով յերկրամասի հումքային հնարավորությունների օգտագործման վրա, մասնավորապես պետք է ապահովել հետևյալ շինարարությունը—*

ա) Ռեզինի կոմբինատ, մոտավորապես 700 միլիոն ռուբլու արտադրական հզորությամբ.

բ) Սինտետիկ (բաղադրյալ) կաուչուկի գործարաններ.

գ) Դերբենդի այգեգործական կոմբինատը, օգտագործելով Կարաբուլաղի սուլֆատը (պարարտացման ծծմբաաղ. թրգմ.), Դաղստանի գազերը և տեղական հումքի մյուս տեսակները (կրաքար և այլն), 100 հազար տոնն կալցիացած սոդայի և 50 հազար տոնն կաուստիկ սոդայի հզորությամբ:

դ) Կարաչայի բորակա-տուկի կոմբինատը տեղական ածուխի և գաճի հիման վրա.

զ) Դերբենդի քիմիական կոմբինատի ավարտումը, Ապշերոնի քիմկոմբինատի կառուցումը, օգտագործելով Մայկոպի գազերը և այդ ռայոնում նախագծվող ելեքտրոկայանների եժան ելեքտրաուժը:

9. Անտառային արդյունաբերության վերաբերյալ: *Նպատակ ունենալով առավելապես օգտագործել Հ.-Կովկասի փայտանյութը, խնդիր դնել մեքենացնելու փայտամշակման, անտառային, քիմիական և թղթային արդյունաբերության արտադրության և ծավալման գործողությունները:*

10. Սննդային արդյունաբերության վերաբերյալ: *Խնդիր դնել մշակելու գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը Հ.-Կովկասի սահմաններում:*

11. Գյուղատնտեսության վերաբերյալ: *Խորհրդային Միության հաջողությունները յերկրի ինդուստրացման ասպարեզում, հատկապես հայրենական տրակտորների, կոմբայնների և այլ գյուղատնտեսական բարդ մեքենաների արտադրանքն ստեղծում են այն բոլոր պայմանները, վոր 1934 թվին ավարտվի գյուղատնտեսական աշխատանքների մեքենացումը (վարը, ցանը, բերքահավաքը): Խնդիր դնել մշակելու ամբողջ վարունակ հողերը, ներառյալ նաև լրացուցիչ հողերը—ի հաշիվ հողի բարելավման և վոռոգման (Մանիչի և Տերեկի խնդիրները), հասցնելով ցանքատարածությունը 1937 թվի վերջին վոչ պակաս, քան 15 միլիոն հեկտար, նկատի ունենալով տեխնիկական բույսերի ցանքի ավելացումը:*

2-րդ հնգամյակի հիմնական կարեվորագույն խնդիրը գյուղատնտեսության վերաբերյալ հանդիսանում է աշխատանքի վորակական ցուցիչների բարձրացումն ի հաշիվ խորհտնտեսությունների յեվ կոլտնտեսությունների ագրոտեխնիկայի առավելագույն տիրապետության յեվ դրա հիման վրա—բերքատվության բարձրացումը—*աշնանացան ցորենինը մինչև 14 ցենտներ մի հեկտարից, գարնանացան ցորենինը մինչև 10 ցենտներ, յեգիպտացորենինը մինչև 21 ցենտներ և այլն,* ապահովելով հացահատիկային բույսերի ապրանքայնությունը 1937 թվի վերջին մինչեվ 420—440 միլիոն փութ, հանդեպ 1931 թվի 200 միլիոն փթի, ապահովելով նայեվ բոլոր տեխնիկական բույսերի ապրանքային արտադրանքի աճը:

Անասնապահության ասպարեզում խնդիր դնել 2-րդ հնգամյակում լիովին փոխարինելու յերկրամասի խորհտնտեսությունների յեվ կոլտնտեսությունների բոլոր անցեղային անասունները ցեղային, մաքրացեղ յեվ լավացրած անասուններով, վորոնք ապահովում են անասնապահության բարձր ապրանքայնությունը *(արագ աճեցում, բարձր կաթնատվություն, արտադրանքի բարձր արդյունք և այլն), ապահովելով անասնապահական տնտեսությունների հիմնական գործողությունների մեքենացման և ելեքտրիֆիկացման բավականին զգալի զարգացումը: Անասնապահության արտադրանքի ապրանքայնությունը հասցնել 1937 թվի վերջին—*

Մսինը մինչև 525.000 տոնն, հանդեպ 1931 թվի 74.000 տոննի:

Բրդինը մինչև 18.000 տոնն հանդեպ 1931 թվի 6.000 տոննի.

Ձվինը մինչև 1.500 հազար հատ:

12. Տրանսպորտի վերաբերյալ: *Հ.-Կովկասի ժողովրդական տնտեսության ծավալման և 2-րդ հնգամյակի սոցիալիստական շինարարության պլանների կատարումը պահանջում է տրանսպորտի համապատասխան վերակազմություն և զարգացում, ապահովելու համար ժողովրդական տնտեսության զարգացման նշանակված պլանների անպայման կատարումը. դրա համար—*

ա) Յերկրային տրանսպորտի վերաբեյալ. *2-րդ հնգամյակում անհրաժեշտ է ապահովել* յերկաթուղու գլխավոր գծերի ելեքտրիֆիկացումը Հ.-Կովկասի տերրիտորիայում, *կառուցել Ռոստով—Նեվինկա—Մոսկվա յերկաթուղային գլխավոր գիծը, ծավալել Պրոխլադնայա—Կալաչ յերկրորդ ճյուղի (յելքի) շինարարությունը, կառուցել Գորի—Դարգ—Կոխ լեռանցքային ուղին և արդյունաբերական ու տեղական նշանակության գծերը:*

բ) Ջրային տրանսպորտի վերաբերյալ—*Զարգացնել գետային և ծովային տոննաժը, վերակառուցել ծով և գետա-նավահանգստները մասնավորապես Ռոստովի նավահանգիստը վերածել ծովային նավահանգստի և վերակառուցել Մախաչ—Կալայի նավահանգիստը:*

գ) Անվային տրանսպորտի վերաբերյալ: *Խճուղիների և ավտոուղիների կառուցման լայն ծավալ, ավտո-տրանսպորտը առավելապես օգտագործելու համար, մասնավորապես խնդիր դնել կապելու խճուղիներով քաղաքները ռայոնական կենտրոններին:*

Խողովակագծերի *շինարարության մասշտաբը պետք է առավելապես թեթևացնի տրանսպորտը հեղուկ վառելիքի փոխադրումից:*

Հ.-Կովկասի յերկրային կոնֆերենցիան հատուկ խնդիր է դնում լուծելու Մանիչի հարցն առաջին հերթին վորպես տրանսպորտի հարց (Վոլգա-Կասպիյականի միացումն Ազովի ծովին, Դոնի նավագնացության հարցի լուծումը մինչև Վորոնեժ, Կուբանի նավագնացությունը —մինչև Արմավիր) և վորպես վոռոգման հարց (մեկ միլիոն հեկտարից ավելի հողերի վոռոգումը):

12. Կոմունալ յեվ բնակարանային շինարարության ասպարեզում: Այդ ասպարեզում 2-րդ հնգամյակի պլանը պետք է ապահովի հիմնական արդյունաբերական կենտրոնների սոցիալիստական վերակառուցումը (Ռոստով, Գրոզնի, Շախտ, Նովոռոսիսկ, Տագանրոգ) և նոր արդյունաբերական քաղաքների ստեղծումը (Նեվթեգորսկ, Սպիտակ Կալիտվա):

Յերկրորդ հնգամյակում պետք է ապահովել աշխատավոր մասսաների նյութական-կենցաղային բարեկեցության կտրուկ ավելացումը:

Կոնֆերենցիան գտնում է, վոր բնակչության ապահովությունը հիմնական սպառողական ապրանքներով, վորոնց թվում նայեվ պարենավորումով 2-րդ հնգամյակի վերջին պետք է ավելանա 2—3 անգամ, համեմատած հնգամյակի ավարտական տարվա վերջին:

14. Սոցիալ-կուլտուրական շինարարության վերաբերյալ. խնդիր դնել վճռապես բարձրացնելու բանվոր և կոլտնտեսական մասսաների կուլտուրական մակարդակը, պայքարելու տեխնիկական գիտելիքների բարձրացման համար, լիովին իրագործելու կյանքում ընկեր Ստալինի «տիրապետենք տեխնիկային» լոզունգը: Համաձայն նրան, վոր «տեխնիկական կադրերի խնդրի լուծումը մեր յերկրի կուլտուրական հեղափոխության խնդիրների բոլշևիկյան իրականացման և սոցիալիզմի հաջող շինարարության կարևորագույն տարրերից է» (17-րդ կուսկոնֆերենցիայի վորոշման նախագիծն յերկրորդ հնգամյակը կազմելու հրահանգների մասին), պետք է այդ կադրերի պատրաստության աշխատանքն յերկրամասում կատարվի գոյություն ունեցող ԲՈՒՀ-երի, տեխնիկական ԲՈՒՀ-երի և տեխնիկական աշխատանքի լավացման հիման վրա, կառուցելով ուսումնական նոր հիմնարկներ, ծավալելով հեռակա ուսուցումը, բանվորական կրթության կոմբինատների ցանցը և այլն:

2-րդ հնգամյակում պետք է ապահովել պարտադիր բարձր ուսուցման ներմուծումը (7 ամյա յեվ 10-ամյա), դպրոցների լրիվ պոլիտեխնացումը, յերեխաների լրիվ ընդգրկումը նախադպրոցական դաստիարակությամբ, մայրության յեվ մանկության պահպանության հիմնարկների առավելագույն զարգացումը:

Աշխատանքի պաշտպանությունը, կուրորտային բժշկությունն յերկրորդ հնգամյակում պետք է շարունակեն զարգանալ:

15. Յերկրամասի ազգային մարզերի յեվ Դաղստանի հանրապետության կենտրոնական խնդիրն յերկրորդ հնգամյակում պետք է համարել տնտեսական-կուլտուրական հետամնացության հաղթահարումը յեվ լրիվ վերացումը, հիմնվելով արդյունաբերության արագ զարգացման, պրոլետարական կադրերի հետագա վճռական լայնացման, գյուղատնտեսական արտադրության սոցիալիստական վերակառուցման յեվ տեխնիկական վերազինման վրա և դրան համապատասխան բավական բարձրացնել լեռնային ժողովրդական մասսաների նյութական յեվ կուլտուրական բարեկեցությունը:

IV. ՀՆԳԱՄՅԱԿԻ 4-ՐԴ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յերկրային կուսկոնֆերենցիան պահանջում է բոլոր կուսակցական, արհմիութենական, տնտեսական և խորհրդային կազմակերպություններից, վճռապես պայքարել ընկեր Ստալինի 6 պայմանների հետագա բոլշևիկյան իրականացման համար, վորպես հնգամյակի 4-րդ, ավարտական տարվա պլանը հաջողությամբ կատարելու հիմնական լծակ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Նպատակ ունենալով անպայման կատարել արդյունաբերության արդֆինպլանը և գերակատարել նրան հանդիպական պլանների կարգով, կուսակցական կազմակերպությունների աշխատանքի առմենօրյա մեթոդներով պետք է վճռապես պայքարել բանվորական ուժի հոսունության դեմ, վերացնելով հավասարեցման մնացորդները, բարձրացնելով կուլտ-կենցաղային սպասարկումը, ճիշտ կազմակերպել ու դասավորել բանվորական ուժը, հաստատել կայուն պատասխանատվություն դիմազրկության դեմ, խստագույն տնտեսհաշվարկ, լայն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը և 100 տոկոս ընդգրկել արտադրությունները տնտեսհաշվարկային բրիգադներով:

2. Արդյունաբերության տեղի ունեցած հետամնացությունը վորակական ցուցանիշների իրականացման տեսակետից պետք է վճռաբար հաղթահարել:

Կոնֆերենցիան ամբողջ կուսակցական կազմակերպության ուշադրությունը հրավիրում՝ է իրագործել աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջադրությունները, իջեցնել ինքնարժեքը, վճռապես բարելավել արտադրանքի վորակը, վորպես 1932 թվի կենտրոնական խնդիր:

3. Կոնֆերենցիան հատուկ ուշադրություն է հրավիրում ածխային և նավթային արդյունաբերության աշխատանքների վրա:

Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշման հիման վրա անցած տարում աշխատավարձի մեջ յեղած հավասարեցման վերացման, առաջավոր պրոֆեսիաների առանձնացման և ածխաարդյունաբերության մեքենայացման ու ռացիոնալացման միջոցառումների ծավալումը պետք է վճռականապես ամրապնդվի և ընդարձակվի ընթացիկ տնտեսական տարում:

4. Նավթային արդյունաբերության ծրագիրը և զարգացումն ընթացիկ տարում նախատեսնում է նավթաարդյունահանման զգալի ընդարձակում և մանավանդ Մայնեվթի շահագործումը, վորը պահանջում է կուսակցական կազմակերպությունից հատուկ ուշադրություն դարձնել այդ հարուստ նավթաբեր ռայոնին, ստեղծել անհրաժեշտ պայմաններ հիմնական շինարարության պլանների կատարման համար, փորման և մանավանդ հետախուզման նախագծումները կատարելու համար, ստեղծել և պահել բանվորների անհրաժեշտ կադրեր:

5. Շինարարական սեզոնին ժամանակին պատրաստվելը, տարքավորանքների պատվերների տեղավորումը, շինարարական նյութերով ապահովելը, այդ ուղղությամբ տեղական միջոցների մաքսիմալ օգտագործումը, դրա հետ միասին նաև արժեքի իջեցման ապահովումը— հանդիսանում են շինարարական պլանի կատարման անհրաժեշտ պայմաններ: Կուսակցական կազմակերպությունները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն շինարարությունը ժամանակին վերջացնելու և արդյունաբերական կարևորագույն միավորների վրա—Գիգելգոն, Բակսան, կոմբայնների գործարան, ցինկի գործարան, ացետոնա-շշային գործարան, Տագանրոգի խողովակապրոկատի գործարան — վորոնք այս տարի շահագործման մեջ են դրվում:

6. Ժողտնտխորհային և Մատժողկոմատային ամբողջ արդյունաբերության աշխատանքը 1932 թվին պետք է կառուցվի այնպես վորպեսզի ապահովվի մետաղի և վառելիքի մաքսիմալ խնայողություն ինչպես արդյունաբերության աշխատանքների համապատասխան վերակառուցման հաշվին, նույնպես և ի հաշիվ արդյունաբերության ներքին միջոցների և տեղական վառելիքի ու հումույթի օգտագործման:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ (ԴԱՇՏԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ) ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Անպայման ապահովել գարնանացանի պլանի կատարումը 9 միլիոն հեկտարի չափ—ամենակարճ ժամկետում:

2. Առաջիկա գարնանացանին նախապատրաստվելու և այն հաջողությամբ անցկացնելու նպատակով, հատուկ ուշադրություն դարձնել ինչպես կենդանի լծկանի, նույնպես և մեխանիքական լծկանի դրության և պատրաստության վրա, մոբիլիզացիայի յենթարկել տեղական բոլոր միջոցները տրակտորների նորոգումը հաջողությամբ ավարտելու համար, բարձրացնել գյուղատնտեսական ինվենտարի նորոգման և կենդանի լծկանին խնամելու վորակը, ստեղծել բավականաչափ կերի ֆոնդեր, վորոնք կարողանան ապահովել գարնանացանի կամպանիայի անցկացումը: Ստեղծել և ապահովել ցանքի սկզբին բոլոր սերմֆոնդերը, մանավանդ հասկավոր մշակույթների, միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց վորակային դրության վրա (զտում, տեսակավորում, հարկ յեղած պահպանում և այլն):

3. Բերքատվության բարձրացումն ապահովելու համար, աշխատել հասկավոր մշակույթների գարնանային ցանքսը ավարտել 10-13 որում, սկսած դաշտային աշխատանքների դուրս գալու որից:

Ցերաշտի և վայրի բույսերի դեմ կռվելու, նույնպես և աշնանացանին նախապատրաստվելու նպատակով, ապահովել վաղ ցելի պլանի լրիվ կատարումը սահմանված չափերով:

Այդ նույն նպատակով ապահովել ընթացիկ տարում լրիվին քաղհանը, ամեն մի շարքահերկ մշակույթի համար սահմանված ժամկետում:

4. Հասկավոր, շարկահերկ և տեխնիկական մշակույթների հավաքման և կալսման ժամանակ կորուստների դեմ կռվելու նպատակով, ձեռք առնել բոլոր միջոցները ժամանակին ապահովելու հունձը, դիզումը, կալսը, անխնա պայքար տանելով տեղի ունեցող կորուստների և անտնտեսվարության դեմ:

5. Ապահովել 1932 թվի աշնանային մշակույթների ցանքի լրիվին կատարումը ժամանակին, այն հաշվով, վորպեսզի նախագծված տարածությունը ամբողջովին ցանվի մաքուր ցելերի և շարկահերկ շերտերում՝ ցանքսի ժամկետների և վերամշակման անհրաժեշտ վորակի կատարյալ համապատասխանությամբ:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Բացառիկ ուշադրություն դարձնել անասունների խնամքին ինչպես խորհտնտեսություններում, նույնպես կոլտնտեսություններում և ապրանքային ֆերմաներում, ապահովելով բեղմնավորման կամպանիայի կազմակերպումը և մանավանդ ամբողջ ձագերի պահպանումը:

2. Անասնապահական խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները պետք է 1932 թվին վոչ միայն կատարեն անասունների քանակին վերաբերող ընդարձակ պլանը, այլ և ապահովեն արտադրության վճռական բարելավումը, նախրի ճիշտ կազմակերպման, լայն մետիզացիայի և այլն միջոցով: Ձեռք բերել անասնապահական տնտեսությունների ապրանքայնության բարձրացումը հետևյալ չափով.— խորհտնտեսությունների համար մի խոզամայրից 10 հատ ապրանքային ձագեր, իսկ խոզաապրանքային ֆերմաների համար—8 հատ. կթումը բարձրացնել մինիմում 25 տոկոսով, իսկ բրդի ստացումը խորհտնտեսություններում հասցնել միջին թվով մի վոչխարից 5 կիլոգրամի, իսկ վոչխարաապրանքային ֆերմաներում 3 կիլոգրամի:

3. 1932 թվին անհրաժեշտ է սոցիալիստական անասնապահությունը լրիվին ապահովել կերով, ի հաշիվ բոլոր խոտհարքների հնձման, սիլոսացման պլանի կատարման (2 միլիոն տոնն), խոտերի ցանման (660 հազար հեկտար) և արմատիքների ցանման (125 հազար հեկտար):

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ապահովել 1932 թվին յերկաթուղագծերով բեռների փոխադրման այնպիսի աճում, վորը համապատասխաներ յերկրամասի ժողովրդական տնտեսության աճին:

2. Աշխատել 100 տոկոսով իրագործել զույգ յերթը, վճռականորեն պայքարելով տրանսպորտի առողջացման գործում այդ կարևորագույն միջոցառմանը ձևական, բյուրոկրատիկ մոտեցման դեմ:

3. Բարձրացնել շոգեկառքերի օգտակար գործնեությունը մինչև 11,2 ժամի որական, հանդեպ 10,7 ժամի 1931 թ. դեկտեմբեր ամսին:

4. Բարձրացնել շարժման մեջ գտնվող վագոնների օգտակար աշխատանքը մինչև 9,4 ժամի 1931 թ. դեկտեմբեր ամսվա 6,8 ժամի փոխարեն և նավթատար վագոնների (ցիստերն) օգտավետ աշխատանքը վորպես մինիմում հասցնել 11 ժամի:

5. Հետագայում ևս զարգացնել գնացքների մարշրուտացումը և նավթային բեռների մարշրուտային գնացքները հասցնել վորպես մինիմում մինչև 86 տոկոսի և մյուս գնացքներինը վորպես մինիմում հասցնել 60-65 տոկոսի:

6. Վճռական պայքար մղել վագոնների բեռնման և դատարկման պարապուրդների դեմ, բարձրացնելով ինչպես յերկաթուղային վարչու-

թյան, նույնպես և բեռներ ուղարկողների և ստացողների պատասխանատվությունը, ապահովել բարձման-դատարկման աշխատանքների մասին յեղած ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. դեկտեմբերի 2-ի վորոշման կենսագործումը։

7. Գարնանային փոխադրումների մոտալուտ ժամանակաշրջանը պահանջում է ամբողջ տրանսպորտի լայն պատրաստություն և առանձին հերթին ջրային տրանսպորտի ոգտագործում, այնպես. վոր նավարկության առանձին կիսամյակում ամբողջ տոննաժը բեռնված լինի փոխադրություններով։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Բնակարանային-կոմունալ շինարարության ծավալի զգալի աճումը 1932 թվին, պահանջում է նախ և առաջ յերկրամասի ներսում յեղած շինանյութերի մոբիլիզացիա, շինարարության ժամկետների կրճատում, շինարարության ստանդարտիզացիա, դեֆիցիտային շինանյութերի փոխարինում, շինարարության վորակի բարձրացում և ինքնարժեքի իջեցման առաջադրանքի կատարում։

Կոնֆերենցիան պարտավորեցնում է տեղական կուսորգաններին, քաղխորհրդներին և ռայգործկոմներին ամեն կերպ ծավալել (յերկրամասի համար սահմանված պլանից բացի) տեղական և նոր շինանյութերի արտադրությունը, քարի, գրավիի, ավազի արդյունահանումը և ապահովել դեֆիցիտային սարքավորանքի փոխարինումը ներտնտեսական միջոցներով, նույնպես և ապահովել բնակարանային-կոմունալ շինարարության ծրագրերի կատարումը Ռոստովում (վորը հաստատված է Յերկրկոմի կողմից 1931 թ. ոգոստոսի 20-ին) ապահովել տրամվայի կառուցումը Տագանրոգում, Շախտում, Գրոզնում և ապահովել ջրմուղի կառուցման ավարտումը Տագանրոգում։

Կուսակցության գլխավոր գծի անցկացման, դասակարգային թշնամու յեվ կուլակի գործակալության—աջ ոպորտունիզմի, վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգի, կուսակցության գծի «ձախ» խեղաթյուրումների դեմ մղվող ամենավճռական պայքարի հիման վրա, մոբիլիզացիայի յենթարկելով կուսակցական կազմակերպությունների զգոնությունը հանդեպ հակահեղափոխական տրոցկիզմի ամեն տեսակի փորձերին՝ մաքսանենգորեն ներս քաշելու իր գաղափարները, վճռական հակահարված տալով փտած լիբերալիզմին—Հյուսիսային կովկասի կուսկազմակերպությունը այս հիման վրա ձեռք կբերի մասսաների լայն ակտիվության մոբիլիզացիա՝ հնգամյակի 4-րդ, յեզրափակող տարվա պլանների կատարման ու գերակատարման համար։

Ծավալելով մասսաների նախաձեռնությունը, լայնորեն զարգացնելով գյուտարարության յեվ ռացիոնալացման աշխատանքները, խորացնելով սոցիալիստական մրցումը յեվ բարձր աստիճանի դնելով հարվածայնությունը (տնտհաշվարկային հարվածային բրիգադներ, ցեխեր, գործարաններ) —յերկրամասի կուսկազմակերպությունը, հնգամյակի 4-րդ, յեզրափակիչ տարվա պլանների կատարման յեվ գերակատարման հետ միասին պետք է ապահովի արդյունաբերության յեվ գյուղատնտեսության վորակային ցուցիչները, կատարելով ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման յեվ այլն պլանները,

Հյուսիսային Կովկասի յերկրային կուսակցական կոնֆերենցիան պարտավորեցնում է կուսակցական կազմակերպություններին մոբիլիզացիայի յենթարկել իրենց բոլոր ուժերը, նույնպես յեվ լայն բանվորական ու ինժեներա—տեխնիկական աշխատողներին՝ յերկրորդ հնգամյակի պլանը մշակելու յեվ նախապատրաստելու յերկրորդ հնգամյակի այնպիսի փոխանցում, վորը ապահովեր յերկրորդ հնգամյակի պլանների անպայման կատարումն ու գերակատարումը յեվ այդ հիման վրա զգալիորեն բարձրացներ յեվ բարելավեր բանվոր դասակարգի յեվ կոլտնտեսականների նյութական-կենցաղային դրությունը յեվ վերածեր Հյուսիսային Կովկասը նախկին ցարական գաղութից առաջավոր յերկրամասի։

Ответственный редактор М. М. Гигоян
Техредактор Г. М. Маркарян

№ 2164
1932

Сд. в наб. 14/II—1932 г.
Сд. в печать 25/II—1932 г.
Об'ем 6½ печ. листа
Тираж 3000 экз.

Ростов н-Д. Газетно-книжн. тип. СККПО. Уполкрайлита № 1168
ГЕТСККПО—с-ф А 8—610х148 № 852

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

I. Համկոմկուսի (բ) Ցերկրկոմի քաղաքական հաշվետվությունը 3—41
Անցած էտապը 3
Մեր հաղթանակները 5
Դեպի դժվարությունների վերացում, դեպի աշխատանքի
վորակը 8
Ընկ. Ստալինի պայմանները 13
Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների շինարա-
րությունը 19
Մասսաների ակտիվության, կուլտուրական և նյութական
աճումը 27
Հանուն լենինիզմի, հանուն կուսակցության գլխավոր գծի . . 32
Սոցիալիզմի շինարարության հեռանկարները Հյուսիսային
Կովկասում 37
Պաշտպանության հարցերը 39
II. Համկոմկուսի (բ) Հ.-Կովկասի Ցերկրկոմի կազմակերպչական
հաշվետվությունը . . . . 42—71
Պրոլետարական մասսայական կազմակերպությունների աճը . 42
Կուսաշխատանքները նոր ձևով վերակազմելու մասին . . . 47
Կուսաշխատանքները նոր ձևով վերակազմելու մասին . . . 47
Գլխավորել բանվորական, կոլտնտեսական մասսաների աճող
ակտիվությունը 50
Դեպի նոր հաղթանակներ կուլտուրական փրոնտում 58
Սոցիալիստական շինարարության կադրեր պատրաստել . . . 61
Ներկուսակցական աշխատանքների խնդիրները 64
Ավելի բարձրացնենք մարքսիստական-լենինյան դաստիարա-
կության վորակը 66
Ոպորտունիզմի դեմ անհաշտ պայքարը—հաղթանակի հիմքն է 69
III. Բանաձևեր . . . . 73—103
Համկոմկուսի Ցերկրային 7-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումը Համկոմկուսի
(բ) Ցերկրկոմի հաշվետվության առթիվ 74
Համկոմկուսի (բ) Հյուսիսային Կովկասի 7-րդ կոնֆերենցիայի
բանաձևը յերկրային ՎՀ— ԲԳՏ հաշվետվության մասին . 83
7-րդ յերկրային կուսկոնֆերենցիայի բանաձևը ընկ.
Գրիվովարովի զեկուցման առթիվ 90

ՀՀ Ազգային գրադարան
NL0183278

ԳԻՆԸ 85 ԿՈՊ.
Цена 85 коп.

На армянском языке

ЗА НОВЫЕ ПОБЕДЫ

7-я Сев.-Кавказ. Краевая партконференция ВКП(б)

Речи т. т. Шеболдаева, Ларина и резолюции

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՊԱՀԵՍՏԸ՝
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)